Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

Վ. Ի. Լենին

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ և ՊՐՈԼԵՏԱՏՐԻԱՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԵՂԱԹՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ.

Պետության հարցը թե թեորիական և թե գործնական –քաղաքական տեսակետից առանձին կարևորություն է ստանում: Իմպերիալիստական պատերազմը չաթազանց արագացրել է ու սրել է մոնոպոլիստական կապիտալիզմի' պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի փոխարկվելու պրոցեսը: Աշխատավոր մասսաների հրեշավոր ճնշումը պետության կոգմից, որն ավելի ու ավելի սերտորեն է ձուլվում կապիտալիստների ամենազոր միությունների հետ, քանի գնում այնքան ավելի հրեշավոր է դառնում: Առաջավոր երկրները մենք խոսում ենք նրանց և “թիկունքի” մասին – բանվորների համար զինվորական տաժանակիր բանտերի են վերածվում:

Ձգձգվող պատերազմի անլուր սարսափներն ու աղետները մասաների դրությունն անտանելի են դարձնում, ուժեղացնում են նրանց ընբոստությունը: Ակնհայտի աճում է միջազգային պրոլետարիատի հեղափոխությունը: Նրա վերաբերմունքի հարցը դեպի պետությունը գործնական նշանակություն է ստանում:

Տասնյակ տարիների համեմատաբար խաղաղ զարգացման ընթացքում կուտակված օպորտունիզմի տարրերն ամբողջ աշխարհի պաշտոնական սոցիալիստական կուսակցությունների մեջ սոցիալ-շովինիզմի հոսանք են ստեղծել:
Այդ հոսանքը (Ռուսաստանում՝ Պլեխանով, պոտրեսով, Բրեշկովսկայա, ռուբանովիչ, ապա մի փոքր քողարկված ձևով՝ պ.պ. Ծերեթելի, Չերնով ու Ընկ., Գերմանիայում՝ Շայդեման, Լեգին, Դավիդ և ուրիշները, Ֆրանսիայում ու Բելգիայում՝ Ռենոդել, գեդ, Վանդերվելդե, Անգլիայում՝ Հայնդման ու ֆաբիականներ և այլն), որ խոսքով սոցիալիզմ է, գործով՝ շովինիզմ, աչքի է ընկնում "սոցիալիզմի" "առաջնորդների" անարդ լակեական համակերպում ով ո'չ միայն "իրենց' ազգային բուրժուազիայ, այլ հատկապես "իրենց" պետության շահերին, որովհետև այսպես կոչված մեծ պետությունների մեծամասնությունը վաղուց շահագործում ու ստրկացնում է ամբողջ մի շարք մանր ու թույլ ժողովուրներին: Իսկ իմպերիալիստական պատերազմն իսկ և իսկ մի պատերազմ է՝այդ տեսակ ավարը բաժանելու ու վերաբաժանելու համար: Անհնար է կռիվ մղել աշխատավոր մասսաներին ընդհանրապես բուրժուազիայի ու մասնավորապես իմպերիալիստական բուրժուազիայի ազդեցությունից ազատագրելու համար՝ առանց "պետության" նկատմամբ եղած օպորտունիստական նախապաշարմունքների դեմ պայքարում:
Մենք նախապես քննության ենք առնում Մարքսի ու Էնգելսի ուսմունքը պետության մասին, առանձնապես մանրամասն կանգ առնելով այդ ուսմունքի մոռացված կամ օպորտունիստական աղավաղման ենթարկված կողմերի վրա: Այնուհետը հատուկ

քննության կառնենք այդ աղավաղումների գլխավոր ներկայացուցչին, Կարլ Կաուցկուն, II Ինտերնացիոնալի (1889-1917թ.թ.) ամենից հայտնի առաջնորդին, որ այնպիսի ողորմելի սնանկության հասավ այս պատերազմի ժամանակ: Վերջապես, մենք կամփոփենք գլխավոր գործերով 1905 և առանձնապես 1917թ. ռուսական հեղափոխությունների փորձը: Այս վերջինն, ըստ երևույթին, ներկայումս (1917թ.օգոստոսի սկզբին) ավարտում է իր զարգացման առաջին շրջանը, բայց այդ ամբողջ հեղափոխությունն ընդհանրապես կարելի կլինի ըմբռնել միմիայն աբրև իմպերիալիստական պատերազմի առաջացրած սոցիալիստական պրոլետարական հեղափոխությունների շխթայի օղակներից մեկը: Պետությանը պրոլետարիատի հեղափոխության ցուցաբերելիք վերաբերմունքի հարցը, այսպիսով, ո'չ միայն գործնական-քաղաքական, այլ և ամենահրատապ նշանակություն է ձեռք բերում, իբրև մի հարց՝ մասսաներին բացատրելու, թե նրանք ինչ պետք է անեն մոտալուտ ապագայում՝ կապիտալի լծից ազատագրվելու համար:

ՀԵՂԻՆԱԿ

1917.թ. օգոստոս

ԱՌԱՋԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Ներկա, երկրորդ, հրատարակությունը տպագրավում է գրեթե առանց փոփոխության: Ավելացված է միայն II գլխի 3-րդ պարագրաֆը"

ՀԵՂԻՆԱԿ

Մոսկվա, 1918թ. դեկտեմբերի 30(17):

I. ԳԼՈՒԽ

ԴԱՍԱԿԱՐԳԱԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՐԳԱԻՆ ՀԱԿՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՇՏԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է

Մարքսի ուսմունքի հետ կատարվում է այն, ինչ պատմության մեջ շատ կատարվել է հեղափոխական մտածողների ու ճնշված դասակարգերի առաջնորդների ուսմունքների հետ' ազատագրության համար նրանց մղած պայքարում: Ճնշող դասակարգերը մեծ հեղափոխականների կենդանության ժամանակ նրանց մշտական հետապնդումներով են հատուցել, նրանց ուսմունքին վերաբերվել են ամենավայրենի չարությամբ, ամենակատաղի ատելությամբ, ստի ու զրպարտության ամենամոլեգին արշավանքով: Նրանց մահիտս հետո փորձեր են արվում անվնաս սրբապատկերներ դարձնելու նրանց, այնպես ասած' կանոնականացնելու, նրանց **անվանը** որոշ փառք վերապահելու' ճնշված դասակարգերի "մխիթարության" ու հիմարացման համար, բայց մալացնելով հեղափոխական ուսմունքի **բովանդակությունը**, բթացնելով նրա հեղաթոխական սրածայրությունը, գռեհկացնելով այն: Մարքսիզմի այդպիսի "մշակման"գործում այժմ համամիտ են բուրժուազիան ու բանվորական շարժման ներսում գտնվող օպորտունիստները: Մոռանում են, ջնջոտում, աղավաղում ուսմունքի հեղափոխական կողմը, նրա հեղփոխական ոքին: Առաջին պլաններն մղում, փառաբանում են այն, ինչ որ ընդունելի է կամ ինչ որ ընդունելի է թվում բուրժուազիյաի համար: Բոլոր սոցիալ-շովինիստները հիմա "մարքսիստ " են, կատակ չանեք: Եվ գերմանական բուրժուական գիտնականները, մարքսիզմի բնաջնջման այդ երեկվա մասնագետներն այժմ ավելի ու ավելի հաճախակի խոսում են "ազգային-գերմանական" Մարքսի մասին, որն իբր թե դաստիրակելէ այնպես հայակապ կերպով կազմակերպված բանվորական միությունները' կողոպտիչ պատերազմ մղելու համար:

Քանի որ գործն այս դրության մեջ է, քանի որ անլուր չափով տարածված է մարքսիզմի աղավաղումը, մեր խնդիրն ամենից առաջ այն պետք է լինի, որ վերականգնենք Մարքսի իսկական ուսմունքը պետության մասին: Դրա համար անհրաժեշտ է ամբողջ մի շարք երկար ցիտատներ բերել Մարքսի ու Էնգելսի սեփական երկերից: Անշուշտ երկար ցիտատները շարադրանքը դժվարամարս կդարձնեն և նրա հանրամատչելիությանն ամենևին չեն նպաստի: Բայց առանց նրանց կառավարվել միանգամայն անկարելի է: Մարքսի ու Էնգելսի երկերից պետք է անպայման մեջ բերել պետության հարցին վերաբերվող բոլոր, կամ գոնե վճռական նշանակություն ունեցող բոլոր հատվածներն ըստ կարելույն ավելի լրիվ, որպեսզի ընթերցողը կարողանա ինքնուրույն գաղափար կազմել գիտակ սոցիալիզմի հիմնադիրների հայացքների ամբողջության ու այդ հայացքների զարգացման մասին, նույնպես և նրա համար, որպեսզի վավերագրելով ապացուցված ակներև ցույց ույց տված լինի այդ հայացքների աղավաղումը ներկայումս տիրապետող "կուսակցության" կողմից:

Սկսենք Ֆր. Էնգելսի ամենից ավելի տարածված' "Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը" երկից, որ 1894թ. Շտուտգարտում լույս է տեսել արդեն ւ-րդ հրատարակությամբ: Մենք հարկադրված ենք ցիտատները թարգմանելու գերմաներեն բնագրերից, վորովհետև ռուսերեն թարգմանությունները, չնայած նրանց բազմաթիվ լինելուն, մասամբ կամ լրիվ չեն, կամ ծայրահեղ չափով անբավարար են կատարված:

"Պետությունն, - ասում է Էնգելսը, ամփոփելով իր պատմական վերլուծությունը, - ամենևին հասարակությանը դրսից փաթաթված մի ուժ չէ: Պետությունը նմանապես " բարոյական գաղափարի իրականությունը չէ", "բանականության պատկերն ու իրականությունը", ինչպես պնդում է Հեգելը: Պետությունը հասարակության արդյունքն է զարգացման որոշ աստիճանի ժամանակ. պետությունը մի խոստովանություն է, թե այս հասարակության անլուծելի մի հակասության մեջ է խճճվել ինքն իրեն հետ, անհաշտելի հակադրությունների է բաժանվել, վորոնցից նա անզոր է ազատվելու: Բայց որպեսզի այդ հակադրությունները, միմյանց ներհակ տնտեսական շահեր ունեցող դասակարգերը չխժռեն իրար ու հասարակությանն անպտուղ կռվի մեջ, դրա համար անհրաժեշտ դարձավ մի այնպիսի ուժ, որն, ըստ երևույթին, հասարակությունից վեր է կանգնած, մի ուժ, որը չափավորելու էր բաղխումը, այն պահելու էր "կարգի" սահմաններում: Եվ այդ ուժը, վոր ծագելու է հասարակությունից, բայց իրեն նրանից վեր է դասում, միշտ ավելի ու ավելի խորդանում է նրանից, - պետությունն է" (գերմաներեն վեցերորդ հրատարակչություն էջ 177-178):

Այստեղ լիակատար պարզությամբ արտահայտված է մարքսիզմի հիմնական գաղափարը պետության պատմական դերերի ու նշանակության մասին: Պետությունը դասակարգերի հակասությունների **անհաշտելիությունը** արդյունք ու արտահայտությունն է: Պետությունն առաջ է գալիս այնտեղ, այն ժամանակ և այն չափով, որտեղ, երբ ու որ չաթով դասակարգային հակասություններն օբյեկտիվորեն **չեն կարող** հաշտեցվել: Եվ ընդհակառակը, պետության գոյությունն ապացուցում է, որ դասակարգային հակասություններն անհաշտելի են:
Հատկապես հենց այս կարևորագույն ու հիմնական կետի վերաբերմամբ սկսվում է մարքսիզմի աղավաղումը, որ երկու գլխավոր գործով է ընդանում:
Մի կողմից բուրժուական ու հատկապես մանր-բուրժուական իդեոլոգները, որոնք անվիճելի պատմական փաստերի ճնշման տակ հարկադրված են ընդունելու, որ պետություն կա այնտեղ միայն, որտեղ դասակարգային հակասություններ ու դասակարգային պայքար կա, Մարքսին "սրբագրում են" այն ձևով, որ պետությունը դասակարգերի **հաշտեցման** օրգան է դուրս գալիս: Ըստ Մարքսի, պետությունը ո'չ կարող էր ծագել, ո'չ էլ կանգուն մնալ, եթե դասակարգերի հաշտեցումը հնարավոր լիներ: Քաղքենի ու ֆիլիստեր պրոֆեսորների ու հրապարակաղոսների ասելով՝ այնպես է դուրս գալիս - այն ել՝ միշտ և ամենուրեք բարյացակամ քաղվացքներ բերելով Մարքսի՞g - իբր թե պետությունը հենց հաշտեցնում է դասակարգերին: Ըստ Մարքսի, պետությունը դասակարգային **տիրապետության** օրգան է, մի օրգան, որով մի դասակարգը **ճնշում է** մյուսին, ստեղծումն է մի "կարգի", որն որինականացնում և ամրապնդում է այդ ճնշումը, չափավորելով դասակարգերի ընդհարումը: Մանր-բուրժուական քաղաքագետների կարծիքով, կարգը հենց դասակարգերի հաշտեցումն է և ոչ թե մի դասակարգի ճնշումը մյուսի կողմից. Չափավորել ընդհարումը՝ նշանակում է հաշտեցնել և ոչ թե ճնշված դասակարգերից խլել ճնշողներին տապալելու համար մղվող պայքարի որոշ միջոցներն ու եղանակներն:
Օրինակ, բոլոր էսերներն (սոցիալ-հեղափոխականներն) ու մենշեվիկները 1917թ. Հեղափոխության ժամանակ, երբ հենց ծառացավ պետության նշանակության ու դերի հարցն իր ամբողջ մեծությամբ, ծառացավ գործնականորեն, իբրև անմիջական գործողության հարց և այն ել՝ մասսայական մասշտաբով գործողության, - բոլորը

միանգամից ու ամբողջությամբ գլորվեցին դեպի դասակարգերին "պետության" միջոցով "հաշտեցնելու" մանրաբուրժուական թեորիան: Այդ երկու կուսակցությունների քաղաքագետների անհամար բանաձևերն ու հեդվածները մինձև ծուծը տոգորված են "հաշտեցման" այդ քաղքենիական ու ֆիլիստերական թեորիայով: Որ պետությունը տիրապետության օրգան է որոշ դասակարգի, որ **չի կարող** հաշտեցվելու հակոտնյաի հետ (իրեն հակադիր դասակարգի հետ), այս բանը մանր-բուրժուական դեմոկրատիան երբեք ի վիճակի չէ ըմբռնելու: Դեպի պետություն ունեցած վերաբերմունքն ամենաակնբախ արտահայտություններից մեկն է այն բանի, որ մեր եսերներն ու մենշեվիկները ամենևին սոցիալիստներ չեն որ մենք, (բոլշեվիկներս, միշտ ել ապացուցել ենք), այլ գրեթե սոցիալիստական սոցիալիստական ֆրազեոլոգիա բանեցնող մանր-բուրժուական դեմոկրատներ են:
Մյուս կողմից՝ մարքսիզմի "կաուցկիական" աղավաղումը շատ ավելի նուրբ է: "Թեորիապես" չի ժխտվում ո'չ այն, որ պետությունը դասակարգային տիրապետության օրգան է, ո'չ էլ այն, որ դասակարգային հակասություններն անհաշտելի են: Բայց աչքաթող է արվում կամ քողարկվում է հետևյալը. եթե պետությունը դասակարգային հակասությունների անհաշտելիության արդյունքն է, եթե այն մի ուժ է, որ հասարակությունից վեր է կանգնած և "**ավելի ու ավելի խորդանում է** հասարակությունից", ապա պարզ է, որ ճնշված դասակարգի ազատագրումն անկարելի է ոչ միայն առանց բռնի հեղափոխության, **այլ և առանց** պետական իշխանության այն ապարատի **ոչնչացման**, որ ստեղծել է տիրող դասակարգը և որի մեջ մարմնացած է այդ "խորդացումը": Թեորիապես ինքնստինքյան այս եզրակացությունն, ինչպես մենք կտեսնենք ստորև, արել է Մարքսն ամենակատարյալ որոշակիությամբ՝ հեղափոխության խնդիրների կոնկրետ-պատմական վերլուծման հիման վրա: Եվ հենց եզրակացությունն է, որ Կաուցկին - մենք այդ մանրամասնորեն ցույց կտանք հետագա շարադրանքի փնթացքում - ... "մոռացել է" ու աղճատել"

2. ԶԻՆՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՏՈՒԿ ՋՈԿԱՏՆԵՐ ԲԱՆՏԵՐ ԵՎ ԱՅԼՆ

... "Հին գենտիլ (տոհմային կամ կլանային) կազմակերպության համեմատությամբ - շարունակում է էնգելսը - պետությունը տարբերվում է, ամենից առաջ, նրանով, որ նա պետության հպատակներին բաժանում է ըստ տերիտորիաի" ... Այդ բաժանումը մեզ "բնական է" թվում, բայց նա արդյունք է երկարատև պայքարի հին ցեղային ու տոհմային կազմակերպության դեմ:
... "Երկրորդ տարբերիչ գիծը հասարակական իշխանության հաստատումն է, որն այլևս անմիջականորին չի համնկնում ինքն իրեն իբրև զինված ուժ կազմակերպող բնակչության հետ: Այս հատուկ հասարակական իշխանությունն անհրաժեշտ է, որովհետև դասակարգերի բաժանվելուց հետո՝ բնակչության ինքնագործոն զինված կազմակերպությունն անկարելի էր դարձել... Այն բաղկացած է ոչ միայն զինված մարդկանցից, այլ նաև իրային հավելվածներից, բանտերից ու ամեն տեսակի այլ հարկադրիչ հիմնարկներից, որոնք հասարակության տոհմային (կլանային) կազմակերպությանն անհայտ էին:

էնգելսը ծավալում է այն "ուժի" ըմբռնումը, որը պետություն է կոչվում, այն ուժի, որը բղխել է հասարակությունից, բայց իրեն նրանից վեր է դասում և ավելի ու ավելլ խորդանում է նրանից: Ի՞նչ է այդ ուժը գլխավորապես: Այդ զինված մարդկանց հատուկ ջոկատներն են, որոնք իրենց տրամադրության տակ ունեն բանտեր և այլն:
Մենք իրավունք ունենք զինված մարդկանց հատուկ ջակոկատների մասին խոսելու, որովհետև ամեն մի պետության առանձնահատուկ հասարակական

իշխանությունն "անմիջականորեն չի համնկնում" զինված բնակչության, նրա "ինքնագործոն զինված կազմակերպության" հետ:
Ինչպես բոլոր մեծ հեղափոխական մտածողները, էնգելս աշխատում է գիտակից բանվորների ուշադրությունը հրավիրել հենց այն բանի վրա, ինչ որ ամենից ավելի նվազ ուշադրության արժանի է թվում տիրապետող քաղքենիության, ամենից ավելի սովորական է, սրբագործված ոչ միայն հաստատուն, այլ, կարելի է ասել, քարացած նախապաշարմունքներով: Մշտական զորքն ու ոստիկանությունը պետակ իշխանության ուժի գլխավոր զենքերն են, բայց - մի՞թե այդ կարող է այլ կերպ լինել:
XIX դարի վերջի եվրոպացիների վիթխարի մեծամասնության տեսակետից, որոնց դիմում էր էնգելսը և որոնք չեին ապրել ու մոտիկից չեին դիտել ոչմի մեծ հեղափոխություն, այդ այլ կերպ լինել չի կարող: Նրանց համար բոլորովին անհասկանալի է, թե ինչ բան է այդ "բնակչության ինքնագործոն զինված կազմակերպությունը": Այն հարցին, թե ինչու, հատուկ հասարակությունից վեր դասված, հասարակությունից խորդացած զինված մարդկանց ջոկատների (ոստիկանություն, մշտական բանակ) հարկ եղավ, արևմտաեվրոպական և ռուս ֆիլիստերը հակված է պատասխանելու Սպենսերից կամ Միխայլովսկուց փոխ առած մի զույգ ֆրազով, մատնանշելով հասարակական կյանքի բարդացումը, ֆունկցիաների դիֆերենցիացիան ե այլն:
Այդպիսի մատնանշումը "գիտական" է թվում և հիանալի կերպով քնեցնում է քաղքենուն, մթագնելով գլխավորն ու հիմնականը՝ հասարակության պառակտումն անհաշտելիորոն-թշնամական դասակարգերի:
Եթե այդ պառակտումը չլիներ, "բնակչության ինքնագործոն զինված կազմակերպությունը" իր բարդությամբ, իր տեխնիկական բարդությամբ կտարբերվեր դագանակներ վերցնող կապիկների հոտի, կամ նախնադարյան մարդկանց, կամ այն մարդկանց պրիմիտիվ կազմակերպությունից, որոնք միանալով կլանային հասարակություններ են կազմում, բայց այդպիսի կազմակերպությունը հնարավոր կլիներ:
Այն անհնարին է, որովհետև քաղաքակրթության շրջանի հասարակությունը պառակտված է թշնամական, և այնել անհաշտ թշնամական դասակարգերի, որոնց "ինքնագործոն" զինումը զինվաշ կռիվ կառաջացներ նրանց միջև"Կամավորվում է պետություն, ստեղծվում է հատուկ ուժ, զինված մարդկանց հատուկ ջոկատներ, և ամեն մի հեղափոխություն, խորտակելով պետական ապարատը, ակնբախ կերպով ցույց է տալիս մեզ, թե ինչպես տիրապետող դասակարգը ձգտում է վերականգնել զինված մարդկանց **իրեն** ծառայով հատուկ ջոկատները, թե ինչպես ճնշած դասակարգը ձգտում է այդ տեսակ մի նոր կազմակերպություն ստեղծել, որ ընդունակ լինի ծառաելու ոչ թե շահագործողներին, այլշահագործվողներին:
Մեջբերված դատողության մեջ էնգելսը թեորիապես հենց այն հարցն է դնում, որը գործնականորեն, ակնբախ կերպով և այնել մասսայական գործողության մասշտաբով մեր առաջ է դնում ամեն մի մեծ հեողափոխություն, այն է՝ զինված մարդկանց "հատուկ" ջոկատների ու "բնակչության ինքնագործոն զինված կազմակերպության" փոխհարաբորության հարցը կոնկրետ կերպով լուսաբանվում եվրոպական ու ռուսական հեղափոխությունների փորձով:
Բայց վերադառնանք էնգելսի շարադրանքին:
Նա նշում է, որ երբեմն, օրինակ՝ Հյուսիսային Ամերիկաի ոչոշ վայրերում, այդ հասարակական իշխամությունը թույլ է (խոսքը վերաբերվում է կապիտալիստական հասարակության համար հազվադեպ մի բացառության և մինչ իմպերիալիստական

շրջանի Հյուսիսային Ամերիկայի այն մասերին, որտեղ գերիշխում թր ազատ կոլոնիստը), բայց, ընդհանրապես ասած, ուժեղանում է.

... "Հասարակական իշխանությունն ուժեղանում է այն չափով, որչափով դասակարգային հակասությունները սրվում են պետության ներսում, և որչափով միմյանց սահմանակից պետություններն ավելի մեծանում ու բազմամարդ են դառնում: Նայեցեք դեկուզ այժմյան Եվրոպային, որտեղ դասակարգային կռիվն ու նվաճումների մրցումը հասարակական իշխանությունն այնպիսի բարձրության են հասցրել, որ նա սպառնում է կլանել ամբողջ հասարակությունն ու մինչև անգամ պետությունը"...

Այս տողերը գրված են անցյալ դարի 90-ական թվականների սկզբից ոչ ուշ: Էնգելսի վերջին առաջաբանը թվագրված է 1891թ. Հունիսի 16: Այն ժամանակ շրջադարձը դեպի իմպերիալիզմը - թե' տրեստերի լիակատար տիրապետության իմաստով, թե' վիթխարի գաղութային իմաստով և այլն դեռ նոր-նոր էր ակզբնավորվում Ֆրանսիայում, ե'լ ավելի թույլ կերպով՝ Հյուսիսային Ամերիկայում ու Գերմանիայում: Դրանից հետը "նվաճումների մրցումը" հսկայական քայլ է արելդեպի առաջ, մանավանդ որ երկրագունդը XX դարի երկրորդ տասնամյակի սկզբին վերջնականապես բաժանված էր այդ " մրցող նվաճումների ", այսինքն՝ մեծ կողոպտիչ պետությունների միջև: Ռազմական և ծովային սպառազինումներն այն այն ժամանակվանից հետո անասելի չափերով աճել են, և 1914-1917թ.թ. կողոպտիչ պատերազմը, որը մղվում թր Անգլիայի կամ Գերմանիայի համաշխարհային տիրապետության համար, ավարի բաժանման համար, մոտեցրեց այն ժամը, երբ պետական գիշատիչ իշխանության կողմից հասարակության բոլոր ուժերի "կլանումը" լիակատար աղետի մոտեցրեց:
Դեռ 1891թ. Էնգելսը կարողանում էր նշել "նվաճումների մրցումն" իբրև մեծ պետությունների արտաքին քաղաքականության կարևորագույն տարբերիչ գծերից մեկը, իսկ սոցիալ-շովինիզմի սրիկաները 1914-1917թ.թ. , երբ հենց այդ մրցումը, շատ ավելի սրվելով, առաջ բերեց իմպերիալիստական պատերազմը, "իրենց" բուրժուազիայի կողոպտիչ շահերի պաշտպանությունը քողարկում են "հայրենիքի պաշտպանությունը", հանրապետության ու հեղափոխության պաշտպանության" և այլ նման ֆրազներով:

3. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԻՔ Է

Հասարակությունից վեր կանգնած հատուկ հասարակական իշխանության պահպանման համար հարկավոր են հարկեր ու պետական պարտքեր:

... "Հասարակական իշխանության և հարկեր հավաքելու իրավունք ունենալով, չինովնիկները - գրում է Էնգելսը - իբրև հասարակության օրգաններ հասարակության նկատմամբ վարադաս են դառնում: Այն ազատ, հաժարակամ հարգանքը, որ տածվում էր դեպի տոհմական (կլանային) հասարակության օրգանները, նրանց այլևս չի բավարարում նույնիսկ եթե կարողանային այդ հարգանքը վաստակել"... Ստեղծվում են հատուկ օրենքներ՝ չինովնիկների սրբության ու անձեռնմխելիության մասին: "Ոստիկանական ամենաողորմելի պաշտոբյան պաշտոնյան" ավելի մեծ "հեղինակություն" ունի, քան կլանի ներկայացուցիչները. Բայց քաղաքակրթված պետության նույնիսկ ռազմական իշխանության գլուխը կարող է տոհմավագին նախանձել, որը վաելում է և հասարակության հոժարակամ և ոչ թե "բռնությամբ" ձեռք բերված հարգանքը:

Այսեղ դրված է չինովնիկների արտոնյալ դրության հարցը, իբրև պետական իշխանության օրգանների հարցը: Իբրև հիմնականը նշված է, թե ինչն է նրանց հասարակությունից **վեր** դասվում: Մենք կտեսնենք, թե այդ թեորիական հարցն ինչպես էր լուծում Փարիզի կոմունան 1871թ. Գործնականորեն և ինչպես էր 1912թ. Կաուցկին ռեակցիոն ձևով մթագնում այն:

... "Որովհետև պետությունը ծագել է դասակարգային հակադրությունները սանձահարելու պահանջից, որովհետը այն միևնույն ժամանակ ծագել է հենց այդ դասակարգերի բաղխումների մեջ, ուստի և, ընդհանուր կանոնի համաձայն, նա պետությունն է ամենահզոր, տնտեսապես տիրապետող դասակարգի, որը պետության օգնությամբ քաղաքականապես ևս իշխող դասակարգ է դառնում այդպիսով նոր միջոցներ է ձեռք բերում ճնշված դասակարգին չնշելու ու շահագործելու համար" ... Ոչ միայն հին ֆեոդալական պետություններն են ստրուկների ու ճորտերի շահագործման օրգան եղել, այլև "ժամանակակից ներկայացուցչական պետությունը կապիտալի կողմից վարձու աշխատանքը շահագործելու գործիք է: Սակայ, իբրև բացառություն, լինում են ժամանակաշրջաններ, երբ կռվող դասակարգերն ուժերի այնպիսի հավասարակշռության են հասնում, որ պետական իշխանությունը ժամանակավորապես որոշ ինքնուրույնություն է ձեռք բերում դասակարգերի վերաբերմամբ ել, իբրև կարծեցյալ միջնորդ նրանց միջև"... Այդպես էր XVII ու XVII դարերի բացարձակ միապետությունը, առաջին ու երկրորդ կայսրության բոնապարտիզմը՝ Ֆրանսիայում, Բիսմարկը՝ Գերմանիայում":

Այդպես է, - կավելացնենք մեր կողմից, - Կերենսկու կառավարությունը հանրապետական Ռուսաստանում այն ժամանակվանից, երբ նա անցավ հեղափոխական պրոլետարիատի հալածմանը, այնպիսի պահում, երբ Խորհուրդները, մանր-բուրժուական դեմոկրատների ղեկավարության շնորհիվ, **արդեն** անզոր են, իսկ բուրժուզիան **դեռ** բավականաչափ ուժեղ չե, որպեսզի ուղղակի ցրի Խորհուրդները:

Դեմոկրատական հանրապետության մեջ, - շարունակում է Էնգելսը, - "հարստությունն իր իծխանությունից օգտվում է անուղղակի կերպով, բայց դրա փոխարեն ավելի հաստատապես", - այսինքն՝ նախ " չինովնիկերին ուղղակի կաշառելով" (Ամերիկա), երկրորդ՝ "կառավարության ու բորսայի դաշինքի միջոցով" (Ֆրանսիա ուԱմերիկա):

Ներկայումս իմպերիալիզմն ու բանկերի տիրապետությունը, ո՝ր դեմոկրատական հանրապետության մեջ ել լինի, հարստության ամենակարողությունը պաշտպանելու ու կենսագործելու այդ երկու եղանակներն ել "զարգացրել", արտակարգ արվեստի աստիճանի են հասցրել: Եթե, օրինակ, Ռուսաստանի դեմոկրատական հանրապետության հենց առաջին ամիսներին, կարելի է ասել՝ "սոցիալիստ" եսերների ու մենշեվիկների և բուրժուազիայի պսակադրության մեղրամսին, կոալիցիոն կառավարության մեջ պ. Պալչինսկին սաբոտաժ էր անում այն բոլոր միջոցների դեմ, ձեռք էին առնվում կապիտալիստներին ու նրանց մարդոյորությունը, ռազմական մատակարարումների միջոցով նրանց կողմից գանձարանի կողոպտոմը սանձահարելու համար, եթե, այնուհետև, մինիստրությունից հեռացավ պ.. Պալչինսկին (որ փոխարինվեց, իհարկե, մի այլ, բոլորովին նույն տեսակ Պալչինսկով) "պարքևատրված է" կապիտալիստների կողմից տարեկան 120000 ռուբլի ռոճիկ տվող պաշտոնով, - ի՞նչ է այդ արդյոք. ուղղակի՞, թե անուղղակի կաշառում. Արդյոք այդ դաշի՞նք է կառավարության ու սինդիկատների միջև, թե "միմիայն" բարեկամական հարաբերություններ: Ի՞նչ դեր են խաղում Չերնովներն ու Ծերեթելիները, Ավկսենտյեվներն ու Սկոբելևները: - Արդյոք նրանք գանձարանը թալանող միլիոնատերերի "ուղղակի՞" դաշնակիցներ են, միմիայն անուղղակի:
"Հարստության" ամենազորությունը դեմոկրատական հանրապետության մեջ **ավելի հաստատուն է** այն պատճառով, որովհետև այն կախված չե կապիտալիզմի

քաղաքական վատ կեղևից: Դեմոկրատական հանրապետությունը կապիտալիզմի հնարավոր ամենալավ քաղաքական կեղևն է այդ պատճառով ել կապիտալը, տիրելով (Պալչինսկիների, Չերնովների, Ծերեթելիների ու Ընկ. միջոցով) այդ լավագույն կեղևին, իր իր իշխանությունն այնքան հուսալի, այնքան հաստատուն կերպով է հիմնավորում, որ բուրժուական դեմոկրատական հանրապետության ո'չանձերի, ո'չ հիմնարկների, ո'չ կուսակցությունների և **ոչ մի** փոփոխումը այդ իշխանությունը չի սասանեցնի:
Պետք է նշել նաև այն, որ էնգելսը լիակատար որոշությամբ բուրժուազիայի տիրապետության գործիք է անվանում ընդհանուր ընտրական իրավունքը: Ընդհանուր ընտրական իրավունքն, - ասում է նա, ակներևորեն հաշվի առնելով գեռմանական սոցիալ-դեմակրատիաի երկարատև փորձը, -

"բանվոր դասակարգի հասունության ցուցանիշն է: Նա ավելի բան տալ չի կարող և երբեք չի տա այժմյան պետության մեջ":

Մեր էսերների ու մենշեվիկների նման մանր բուրժուական դեմոկրատները, ինչպես նաև նրանց հարազատ եղբայրները՝ Արևմտյան Եվրոպաի բոլոր սոցիալ-դեմակրատներն ու օպորտունիստները, հենց "ավելի բան" են սպասումընդհանուր ընտրական իրավունքից: Նրանք իրենք ընդունում ենև ժողովրդին ել ներշնչում են այն սխալ միտքը, իբր թե ընդհանուր ընտրական իրավունքն "**այժմյան** պետության մեջ" իսկապես կարող է արտահայտել աշխատավորների մեծամասնության կամքը և ապահովել այդ կամքի կենսագործումը:
Մենք կարող ենք միմիայն մատնացույց անել այն, որ էնգելսի միանգամայն պարզ, ճշգրիտ, կոնկրետ հայտարարությունն ամեն քայլափոխում աղավաղվում է "պաշտոնական" (այսինքն՝ օպորտունիստական) սոցիալիստական կուսակցությունների պրոպագանդաի ու ագիտացիաի մեջ: Էնգելսի կողմից այստեղ դեն շպրտված այդ մտքի ամբողջ ստության մանրամասն պարզաբանումը մենք տալիս ենք Մարքսի ու էնգելսի "**այժմյան**" այժմյան պետության մասին ունեցած հայացքների մեր հետագա շարադրանքի մեջ:
Իր հայացքների ամփոփումն էնգելսը տալիս է իր ամենահանրամատչելի երկի մեջ հետևյալ խոսքերով.

"Ուրեմն, պետությունը միշտ չե, որ գոյություն է ունեցել: Հասարակություններ են եղել, որոնք առանց նրան են կառավարվել, որոնք ոչ մի գաղափար չեն ունեցել պետության ու պետական իշխանության մասին: Տնտեսական զարգացման որոշ աստիճանի վրա, որ անհրաժեշտաբար կապված էր հասարակության դասակարգերի բաժանվելու հետ, պետությունն այս բաժանման շնորհիվ անհրաժեշտություն դարձավ: Մենք այժմ արագ քայլերով մոտենում ենք արտադրության զարգացման մի այնպիսի աստիճանի, որի ժամանակ այս դասակարգերի գոյությունը ո'չ միայն դադարել է անհրաժեշտություն լինելուց. Այլ ուղղակի խոչնդոտ է դառնում արտադրության համար: Դասակարգերը կանհետանան այնպես անխուսափելի կերպով, ինչպես նրանք անցյալում անխուսափելիորեն ծագել են: Դասակարգերի անհետանալու հետ, անխուսափելիորեն կանհետանա պետությունը: Այն հասարակությունը, որն արտադրությունը նոր ձևով կկազմակերպի՝ արտադրողների ազատ ու հավասար ընկերության հիման վրա, ամբողջ պետական մեքենան կուղարկի այնտեղ, որտեղ նրա իսկական տեղը կլինի այնուհետև, այն է՝ հնությունների թանգարանը, ճախարակի ու բրոնզե կացնի կողքին":

Արդի սոցիալ-դեմոկրատիայի պրոպագանդիստական ու ագիտացիան գրականության մեջ դուք հաճախ չեք հանդիպի այս ցիտատին: Բայց նույնիսկ այն ժամանակ, երբ այս ցիտատը պատահում է, մեծ մասամբ այն մեջ են բերում այնպես, կարծես երկրպագում են սրբապատկերին, այսինքն՝ էնգելսին պաշտոնապես

պատիվ տալու համար, բնավ չփորձելով խորապես մտածելու, թե "ամբողջ պետական մեքենան հնությունների թանգարանն ուղարկելու" այդ միտքը հեղափոխության որքան լայն ու խոր թափ է ենթադրում: Մեծ մասսամբ չի ել երևում, թե հասկանու՞մ են արդյոք այն, ինչ որ էնգելսը պետական մեքենա է անվանում:

4. ՊԵՏՈՒԹՅԱՆ "ՄԱՀԱՑՈՒՄԸ" ԵՎ ԲՈՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

էնգելսի խոսքերը պետության "մայացման" մասին այնքան լայն են տարածված, այնքան հաճախ են քաղվածորեն մեջ բերվաում, այնքան ցայտուն կերպով են ցույց տալիս մարքսիզմն օպորտունիամի տեղ անցկացնելու սովորական կեղծարարության եությունը, որ անհրաժեծտ է մանրամասնորեն կանգ առնել նրանց վրա: Մեջ բերենք այն ամբողջդատողությունը, որից վերցված են դրանք.

*"Պրոլետարիատը գրավում է պետական իշխանությունը և արտադրության միջոցներն ամենից առաջ պետության սեփականություն է դարձնում: Բայց հենց դրանով նա ինքն իրեն ոչնչացնում է իբրև պրոլետարիատ, հենց դրանով նա ոչնչացնում է բոլոր դասակարգային տարբերությունները ու դասակարգային հակադրությունները, իսկ դրա հետ միասին նաև պետությունը: Մինչև այժմ գոյություն ունեցած ու հիմա գոյություն ունեցող հասարակության համար, որ շարժվում է դասակարգային հակադրությունների մեջ, անհրաժեշտ էր պետությունը, այսինքն շահագործող դասակարգի կազմակերպությունը՝ նրա արտադրության արտաքին պայմանները պահպանելու համար, ուրեմն՝ հատկապես շահագործվող դասակարգը բռնությամբ ճնշման այն պայմանների մեջ պահելու համար, որ պահանջում է արտադրության տվյալ եղանակը (ստրկության, ճորտության, վարձու աշխատանք): Պետությունն ամբողջ հասարակության պաշտոնական ներկայացուցիչն էր, նրա կենտրոնացումը մի տեսանելի կազմակերպության մեջ, բայց նա այդպիսին էր այն չափով միայն, որչափով նա այն դասակարգի պետություններ, որն իր ժամանակաշրջանի համար մենակ ներկայացնում էր ամբողջ հասարակությունը. հին աշխարհում նա պետության ստրկատեր-քաղաքացիների պետություններ, միջին դարերում՝ ֆեոդալական ազնվականության, մեր օրերում՝ բուրժուազիայի: Երբ պետությունը, վերջապես, ամբողջ հասարակության ներկայացուցիչն է դառնում իսկապես, այն ժամանակ նա ինքն իրեն ավելորդ է դարձնում: Այն ժամանակվանից, երբ այլևս ճնշման մեջ պահելու ոչ մի հասարակական դասակարգ չի լինի, այն ժամանակվանից, երբ դասակարգային տիրապետության հետ միասին, արտադրությանմինչայժմյան անարխիայի առաջացրած անհատական գոյության կռվի հետ միասին, կանհետանան այդ կռվի բղխող ընդհարումներն ու եքսցեսները (չափազանցությունները), այդ ժամանակվանից սկսած այլևս ոչինչ չի լինի ճնշելու, ուրեմն և ճնշման հատուկ ուժի՝ պետության կարիք չի լինի: Առաջին գործողությունը, որով պետությունը հանդես կգա իսկապես իբրև ամբողջ հասարակության ներկայացուցիչ արտադրության միջոցներին տիրապետելը հասարակության անունով, միևնույն ժամանակ նրա, որպես պետության, վերջին ինքնուրույն գործողությունը կլինի: Պետական իշխանության միջամտությունը հասարակական հարաբերություններին այն ժամանակ ավելորդ կդառնա մի բնագավառում մյուսի ետևից և ինքն իրեն կքնի: Անձերին կառավարելու տեղը կբռնի իրերի տնորինումը և արտադրության պրոցեսների ղեկավարումը: Պետությունը չի "վերացվում", նա **մեռնում է:** Սրա հիման վրա պետք է գնահատել"ազատ ժողովրդական պետություն" կաչված ֆրազը, որը որոշ ժամանակ ագիտատորական նպատակով գոյության իրավունք ուներ, բայց վերջին հաշվով՝ գիտական տեսակետից սնանկ է: Դրա հիման վրա պետք է գնահատելնաև այսպես կոչված անարխիստների պահանջը, թե պետությունը պետք է անմիջապես, մի օրվա ընթացքում վերացվի" ("Անտի-Դյուրինգ", Գիտության հեղաշրջումը պարոն Օյգեն Դյուրինգի կողմից", գերմ. 3-րդ հրատարակություն, էջ 302-303):*

Առանց սխալվելուց վախենալու կարելի է ասել, որ էնգելսի այս, մտքերով չափազանց հարուստ, դատողությունից արդի սոցիալիստական կուսակցությունների մեջ սոցիալիստական մտքի իրական սեփականություն է դարձել միմիայն այն, թե պետությունն, ըստ Մարքսի, մեռնում է, ի տարբերություն պետության "վերացման" անարխիստական ուսմունքից: Այդպես խուզել մաքսիզմը, նշանակաում է այն

օպորտունիզմի վերածել, որովհետև այդպիսի "մեկնաբանության" դեպքում միմիայն դանդաղ, սահուն, աստիճանական փոփոխման մի աղոտ պատկերացում է մնում, մի աղոտ պատկերացում թռիչքների ու փոթորիկների բացակայության , հեղափոխության բացակայության մասին: Պետության "մահացումը" սովորական, ընդհանուր տարածված, եթե կարելի է այսպես ասել, մասսայական ըմբռնումով՝ նշանակաում է, անկասկած, հեղափոխության մթագնումը, եթե ոչ նրա ժխտումը:
Մինչդեռ այդպիսի "մեկնաբանությունը" մարքսիզմի ամենակոպիտ, միմիայն բուրժուազիայի համարձեռնտու, աղավաղումն է, որ թեորիապես հիմնված է այն կարևորագույն հանգամանքների ու կշռադատությունների մոռացության վրա, որոնք մատնանշված են էնգելսի թեկուզ հենց նույն, մեր կողմից ամբողջությամբ բերված "ամփոփիչ" դատողությունների մեջ:
Առաջին: Այդ դատողության հենց սկզբում էնգելսն ասում է, թե պետական իշխանությունը գրավելով՝ պրոլետարիատը "հենց դրանով ոչնչացնում է պետությունն իբրև պետություն": Թե ինչ է նշանակում այս, այդ մասին "ընդունված չէ" մտածել: Սովորաբար այդ բանը կամ բոլորովին անտեսում են, կամ համարում են էնգելսի "հեգելյանական" թուլության նման մի բան: Իսկապես, այդ խոսքերի մեջ հակիճ կերպով արտահայտված է պրոլետարական մեծագույն հեղափոխություններից մեկի փորձը, 1871թ. Փարիզի կոմունայի փորձը, որի մասին մենք ավելի մանրամասն կխոսենք իր տեղում: Իրոք՝ էնգելսն այստեղ խոսում է **բուրժուազիաի** պետության "ոչնչացման" մասին պրոլետարական հեղափոխության կողմից, մինչդեռ մահացման մասին ասված խոսքերը վերաբերում են **պրոլետարական** պետականության մնացորդներին՝ սոցիալիստական հողափոխություններից **հետո**: Բուրժուական պետությունը, ըստ էնգելսի, ո'չ թե "մահանում է", այլ հեղափոխության մեջ **"ոչնչացվում է"** պրոլետարիատի ձեռքով: Այդ հեղափոխությունից հետո մահանում է պրոլետարական պետությունը կամ կիսապետությունը:
Երկրորդ: Պետությունը "ճնշման հատուկ ուժ է": Այս հոյակապ ու վերին աստիճանի խոր բնորոշումն այստեղ էնգելսը տվել է ամենակատարյալ պարզությամբ: Իսկ դրանից բղխում է, որ պրոլետարիատին բուրժուազիաի կողմից "ճնշելու հատուկ ուժը" , միլիանավոր աշխատավորների մի բուռ հարուստների ձեռքով "ճնշելու հատուկ ուժով" (պրոլետարիատի դիկտատուրան): Հենց այս է "պետության ոչնչացումն իբրև պետություն": Հենց այս է հասարակության անունից արտադրության միջոցներին տիրանալու "գործողությունը": Եվ ինքնստինքյան ակներև է, որ մի (բուրժուական) "հատուկ ուժի" **այդպիսի** փոխարինումը մի այլ (պրոլետարական) "հատուկ ուժով" ամենևին չի կարող մահացման ձևով կատարվել:
Երրորդ: "Մահացման" և մինչև անգամ է'լ ավելի ցայտուն ու գունեղ - "նիրհելու" մասին էնգելսը միանգամայն պարզ ու որոշակի խոսում է "ամբողջ հասարակության անունից, արտադրության միջոցները պետության տիրապետության տակ առնելուց" **հետո** եկող դասաշրջանի վերաբերմամբ, այսինքն՝ սոցիալիստական հողափոխությունից **հետո**: Մենք բոլորս գիտենք, որ "պետության" քաղաքական ձևն այն շրջանում ամենակատարյալ դեմոկրատիան է: Բայց մարքսիզմ անամոթաբար աղավաղող օպոտունիստներից ոչ մեկի մտքով չի անցնում, որ այստեղ, հետևաբար, էնգելսի խոսքը վերաբերում է **դեմոկրատիայի** "նիրհելուն" ու "մահացմանը": Առաջին հայացքից այս շատ տարորինակ է թվում: Բայց այդ "անհասկանալի է" միմիայն այն մարդու համար, ով լրջորեն չի մտածել այն մասին, թե դեմոկրատիան **նույնպես** պետություն է և թե, հետևաբար, դեմոկրատիան նույնպես կանհետանա, երբ անհետանա պետությունը: Միմիայն հեղափոխությունը կարող է "ոչնչացնել"

բուրժուական պետությունը: Պետությունն ընդհանրապես, այսինքն՝ ամենակատարյալ դեմոկրատիան կարող է միմիայն "մահանալ":
Չորրորդ: Առաջադրելով իր հրչակավոր դրույթը՝ "պետությունը մահանում է " էնգելսն անմիջապես կոնկրետ կերպով բացատրում է, որ այդ դրույթն ուղղված է թ'ե օպորտունիստների և է'ե անարխիստների դեմ: Ըստորում էնգելսը "պետության մահացման" դրույթից այն եզրակացությունն է առաջին տեղթ դրել, որն ուղղված է ոպորտունիստների դեմ:
Կարելի է գրազ գալ, որ պետության "մահացման" մասին կարդացած ու լսած 10000 մարդկանցից 9990-ը բոլորովին չգիտեն, կամ չեն հիշում, որ որ էնգելսն այս դրույթից հանած իր եզրակացություններն ուղղում էր ոչ **միայն** անարխիստների դեմ: Իսկ մնացած տասը հեգուց, անշուշտ, ինքը չգիտե, թե ինչ բան է "ազատ ժժոշովրդավարական պետությունը" և ինչու հարձակումն այդ լոզունգի դեմ հարձակումն է պարունակում օպորտունիստների դեմ: Այսպես է գրվում պատմությունը: Ահա այսպես հեղափոխական մեծ ուսմունքը աննկատելի կերպով կեղծվում, հարմարեցվում է տիրապետող քաղքենիությանը: Անարխիստների դեմ ուղղված եզրակացությունը բյուր անգամ կրկնվել է, այլադակվել, ամենագռեհիկ ձևով մարդկանց գլուխն է մտցվել, նախապաշարմունքի հաստատություն ձեռք բերել: Իսկ օպորտունիստների դեմ ուղղված եզրակացությունը սքողել են ու "մոռացել":
"Ազատ ժողովրդավարական պետությունը" 70-ական թվականների գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ծրագրային պահանջն ու լայն տարածված լոզունգն էր: Այդ լոզունգի մեջ չկա ոչ մի քաղաքական բովանդակություն, բացի դեմոկրատիա հասկացողության քաղքենիորեն փքուն նկարագրությունից: Որչափով նրա մեջլեգալ կերպով ակնարկում թին դեմոկրատական հանրապետության մասին, այդ չափով էնգելսը պատրրաստ էր"առժամանակ" "արդարացնել" այդ լոզունգը ագիտատորական տեսակետից: Բայց այդ լոզունգն օպորտունիստական էր, որովհետև արտահայտում էր ո'չ միայն բուրժուական դեմոկրատիաի գունազարդումը, այլև առհասարակ ամեն տեսակ պետության սոցիալիստական քննադատությունը չընմբռնելը: Մենք կողմնակից ենք դեմոկրատական հանրապետության, իբրև կապիտալիզմի ժամանակ պրոլետարիատի համար պետության ամենալավագույն ձևի, բայց մենք իրավունք չունենք մոռանալու, ամենադեմոկրատական բուրժուական հանրապետության մեջ էլ ժողովրդի բաժինը վարձու ստրկությունն է: Այնուհետև: Ամեն մի պետություն կեղեքված դասակարքի "ճնշման հատուկ մի ուժ է": Այդ պատճառով էլ՝ **ամեն մի** պետություն **ոչ**- ազատ է և **որ** - էլ ժողովրդական: Մառքսն ու էնգելսը 70-ական թվականներին այս բանը բազմիցս բացատրելեն իրենց կուսակցական ընկերներին:
Հինգերորդ: էնգելսի միևնույն երկում, որտեղիցբերված դատողությունը պետության մահացման մասին հիշում են բոլորը, դատողություն կա բռնի հողափոխության նշանակության մասին: Նրա դերի պատմական գնահատությունը էնգելսի մոտ բռնի հեղափոխությանն ուղղված մի իսկական ներբող է դառնում: Այդ բանը "ոչոք չի հիշում", այդ մտքի նշանակության մասին խոսելն ու մինչև անգամ մտածելն ընդունված չէ արդի սոցիալահստական կուսակցությունների մեջ, այդ մտքերնոչ մի դեր չեն խաղում մասսաների մեջ կատարվող ամենորյա պրոպագանդայում ու ագիտացիայում: Մինչդեռ նրանք անխզելիորեն կապված են պետության "մահացման" հետ ու մի ներդաշնակ ամբողջություն են կազմում:
Ահա էնգելսի այդ դատողությունը.

… "Որ բռնությունը պատմության մեջ մի ուրիշ դերել է կատարում ("բացի չարիք գործելուց"), հատկապես հեղափոխական դեր, որ այն, ինչպես ասում է Մարքսը, ամեն մի հին հասարակության տատմայրն է, երբ այդ հինը նորովն է հղի, որ բռնության այն զենքն է, որի միջոցով հասարակական շարժումն իրեն համար ճանապարհ է բաց անում և փշրում է քարացած, մեռած քաղաքական ձևերը, - այս բոլորի մասին ոչ մի խոսք չկա պարոն Դյուրինգի մոտ: Միայն հառաչանքով ու հեծեծանքով նա հնարավոր է համարում, որ շահագործող տնտեսությունը տապալելու համար, գուցե, բռնության կարիք զգացվի - դժբախտաբար, տեսնում էք, որովետև բռնության մաեն մի գործադրում բարոյալքում է , իբր թե, նրան, ով այդ բռնությունը գործադրում է: Եվ այս ասվում է, Գերմանիայում, չնայած բարոյական ու իդեական այն բարձր խանդավառության, որ ամեն մի հաղթական հեղափոխության հետևանք է լինում: Եվ այս ասվում է Գերմանիայում, որտեղ բռնի ընդհարումը, որ կարող է պատահել ժողովրդի վզին փաթաթեն, առնվազն այն առավելությունը կունենար, որ դուրս կվաներ երեսնամյա պատերազմի պատճառած ստարաքարշ ոգին: Եվ այս դժգույն, ճլորած, անզոր տերտերական մտածողությունը հանդգնում է ինքն առաջարկելու իրեն այն ամենահեղափոխական կուսակցությանը, երբևից է տեսել է պատմությունը" (3-րդ գերմ. Հրատարակություն, էջ 193, 2-րդ բաժնի 4-րդ գլխի վերջը):

Ի՞նրպես կարելի է մեկ ուսմունքի մեջ միացնել պետության "մահացման" թեորիան և բռնի հեղափոխությանն ուղղված այս ներբողը, որ էնգելսը համառորոն մատուցում էր գերմանական սոցիալ-դեմոկրատներին՝ սկասած 1878թ. Մինչև 1894թ., այսինքն մինչև իր մահը:
Մեկն ու մյուսը սովորաբար միացնում են էկլեկտիցիզմի միջոցով, անգաղափարական ակամ սոփեստական եղանակով քմահաճող (կամ իշխանություն ունեցողներին հաճոյանալու նպատակով) դուրս քաշելով մեկ այս, մեկ մյուս դատողությունը, ըստվորում հարյուրից իննսունինները դեպքում, եթե ոչ ավելի հաճախ, հատկապես "մահացումն է" առաջին պլանըմղվում: Դիալեկտիկան փոխարինվում է էկլեկտիզմով. Մեր օրերի պաշտոնական սոցիալ-դեմոկրատական գրականության մեջ այս ամենասովորական, ամենատարածված երևույթն է մարքսիզմի վերաբերմամբ: Այդպիսի փոխարինումն, իհարկե, նորություն չթ. Այն նկատվել է նույնիսկ հունական կլասիկ փիլիսոփայության պատմության մեջ: Մարքսիզմը խարդախելով օպորտունիզմի վերածելիս, էկլեկտիցիզմին կեղծ դիալեկտիկաի ձև տալն ամենից ավելի հեշտությամբ է խաբում մասսաներին, կարծեցյալ բավարարություն է տալիս, իբր թե հաշվի է առնում պրոցեսսի բոլոր կողմերը, զարգացման բոլոր տենդենցները, բոլոր հակասական ազդեցությունները և այլն, բայց իրականում հասարակական զարգացման պրոցեսի ոչ մի ամբողջական ու հեղափոխական ըմբռնում չի տալիս:
Մենք վերևում արդեն ասացինք և հետագա շարադրանքի մեջ մանրամասն ցույց կտանք, որ Մարքսի ու էնգելսի ուսմունքը բռնի հեղափոխության անխուսափելիության մասին՝ թուրժուական պետությանն է վերաբերում: Այն **չի կարող** պրոլետարական պետությամբ (պրոլետարիատի դիկտատուրայով) փոխարինվել "մահացման" միջոցով, այլ կարող է, ընդհանուր կանոնի համաձայն, միմիայն բռնի հեղափոխությամբ: Այն նեբողը, որ կարդում է էնգելսը բռնի հեղափոխությանը, և որը լիովին համապատասխանում է Մարքսի բազմաթիվ հատարարություններին, - (հիշենք "Փիլիսոփայության թշվառության" ու "Կոմունիստական մանիֆեստի" վերջը, որտեղ հպարտությամբ, բացեիբաց հայտարարված է բռնի հեղափոխության անհրաժեշտության մասին. Հիշենք Գոթայի ծրագրի քննադատությունը 1875թ., գրեթե 30 տարի անց, որտեղ Մարքսն անխնա կերպով խարազանում է այդ ծրագրի օպորտունիզմը), - այդ ներբեղն ամենևին "ոգեվորության" արդյունք չե, ամենևին դեկլարացիա չե, բանավիճական մի երևույթ չե: Բռնի հեղափոխության վերաբերմամբ մասսաներին **այդպիսի** և հատկապես հենց այդպիսի հայցքով պարպերաբար կրթելու անհրաժեշտությունն է, որ կազմում է

Մարքսի ու էնգելսի ամբողջ ուսմունքի հիմքը: Ներկայումս տիրապետող սոցիալ-շովինիստական ու կաուցկիական հոսանքների դավաճանությունը Մարքսի ու էնգելսի ուսմունքին՝ առանձնապես ցցուն կերպով արտահայտվում է նրանով, որ թե' մեկ և թե' մյուս հոսանքը մոացության է տալիս **այդպիսի** պրոպագանդա, այդպիսի ագիտացիա:
Բուրժուական պետության փոխարինումը պրոլետարական պետությամբ անկարել է առանց բռնի հեղափոխության: Պրոլետարական պետության ոչնչացումն, այսինքն՝ ամեն մի պետության ոչնչացումն անկարելի է այլ կերպ, քան քան "մահացման" ուղիով:
Մարքսն ու էնգելսն այդ հայացքների մանրամսն ու կոնկրետ զարգացումը տվել են, ուսումնասիրելով հեղափոխական ամեն մի առանջին իրավիճակ, վերլուծելով ամեն մի առանձին հեղափոխության փորձի դասերը: Մենք հիմա անցնում ենք նրանց ուսմունքի հենց այս, անպայման ամենակարևոր, մասին:

II. ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1845-1851 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ

1. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԸ

Հասուն մարքսիզմի առաջին աշխատությունները, "Փիլիսոփայության թշվառությունն" ու "Կոմունիստական մանիֆեստը", լույս են տեսել 1848թ. Հեղափոխության հենց նախորյակին: Այդ հանգամանքի շնորհիվ, մարքսիզմի ընդհանուր հիմունքների շարանդրանքի հետ միասին, մենք այստեղ որոշ չափով գտնում ենք այն ժամանակավոր հեղափոխական կոնկրետ իրավիվիճակի արտացոլումը, և այդ պատճառով էլ՝ ավելի նպատակահարմար կլինի, թերևս, քննարկել այն, թե ինչ են ասում այդ աշխատությունների հեղինակները պետության մասին 1848-1851 թ. Փորձից իրենց հանած եզրակացություններից անմիջապես առաջ"

... "Բանվոր դասակարգը, - գրում է Մարքսը "Փիլիսոփայության թշվառության" մեջ, - զարգացման ընթացքում հին բուրժուական հասարակության տեղը կդնի այնպիսի մի ասոցիացիա, որը բացառում է դասակարգերն ու նրանց հակադրությունը, այլևս չի լինի ոչ մի իսկապեսքաղաքական իշխանություն, որովհետև հենց քաղաքական իշխանությունն է դասակարգերի հակադրության պաշտոնական արտահայտությունը բուրժուական հասարակության ներսում"(1885թ. Գերմ. Հրատարակություն, էջ 182):

Ուսանելի կլինի դասակարգերի ոչնչացումից հետը պետության անհետանալու մտքի այս ընդհանուր շարադրանքը զուգադրել այն շարադրանքի հետ, որ տրված է մի քանի ամիս անց, այն է՝ 1847է. Նոյեմբերին, Մարքսի ու Էնգելսի գրած "Կոմունիստական մանիֆեստի" մեջ.

... "Գծագրելով պրոլետարիատի զարգացման ընդհանուր փուլերը, մենք հետամուտ եղանք արդի հասարակության ծոցում տեղի ունեցող առավել կամ նվազ չափով քողարկված քաղաքացիական կռվին մինչև այն կետը, երբ այն վեր է ածվում բացահայտ հեղափոխության, և պրոլետարիատը, բռնությամբ տապալելով բուրժուազիային, հաստատում է յուր իշխանությունը"...
... "Մենք արդեն վերը տեսանք, որ բանվորական հեղափոխության մեջ առաջին քայլը պրոլետարիատի փոխարկումն է" (բառացի՝ բարձրացումը) "տիրող դասակարգի, դեմոկրատիայի նվաճումը":
"Պրոկետարիատն իր քաղաքական տիրապետությունն օգտագործելու է նրա համար, որպեսզի բուրժուազիայից հետզհետե խլի ամբողջ կապիտալը, արտադրության բոլոր միջոցները կենտրանացնի պետության, այսինքն՝ իբրու տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատի ձեռքումմ և հնարավորության չափով ավելի արագ մեքացնի արտադրական ուժերի գումարը" (1906թ. Գերմ. 7-րդ հրատարակությում էջ 31 և 37):

Այստեղ մենք տեսնում ենք մարքսիզմի՝ պետության հարցին վերաբերող՝ ամենանշանավոր ու կարևորագույն գաղափարներից մեկի, այն է՝ "պրոլետարիատի դիկտատուրաի" գաղափարի ձևակերպումը (ինչպես Մարքսն եւ Էնգելսն սկսեցի ասել Փարիզի կոմունայից հետը) և ապա՝ պետության վերին աստիճանի հետաքրքրական

բնորոշումը որ նույնպես մարքսիզմի "մոռացված խոսքերի" թվին `պատկանում - **"Պետություն, այսինքն՝ իբրև տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատ"**:
Պետության այս բնորոշումը ո'չ միայն երբեք չեր լուսաբանվում պաշտոնական սոցիալ-դեմակրատական կուսակցությունների պրապագանդիստական ու ագիտացիոն տիրապետող գրականության մեջ: Այդ դեռ քիչ է: Այն հատկապես մոռացված էր, որովհետև բոլորովին անհաշտելի է ռեֆորմիզմի հետ, այն՝ "դեմոկրատիայի խաղաղ զարգացման"սովորական օպորտունիստական նախապաշարմունքների ու քաղքենիական ցնորքների համար մի ապտակ է:
Պրոլետարիատին պետք է պետություն. Այս բանը կրկնում են բոլոր օպորտունիստները, սոցիալ-շովինիստներն ու կաուցկիականները, հավատացնելով, թե այդ է Մարքսի ուսմունքը, և **"մոռանալով"** ավելացնել, թե, նախ, ըստ Մարքսի, պրոլետարիատին հարկավոր է միմիայն մահացող պետություն, այսինքն՝ այն ձևով կառուցած մի պետություն, որ անմիջապես սկսի մահանալ և անկարող լինի չմահանալ: Իկս, երկրորդ, աշխատավորներին հարկավոր է "պետություն", "այսինքն՝ իբրև տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատ":
Պետությունն ուժի հատուկ կազմակերպություն է, բռնության կազմակերպություն, որև է դասակարգի ճնշելու համար: Ո՞ր դասակարգին պետք է ճնշի պրոլետարիատը: Իհարկե, միմիայն շահագործող դասակարգին, այսինքն բուրժուազիային: Աշխատավորներին պետությունը պետք է միմիայն շահագործողների դիմադրությունը ճնշելու համար. իսկ այդ ճնշումը ղեկավարել, այն կենսագործել ի վիչակի է միմիայն պրոլետարիատն իբրև միակ մինչև վերջը հեղափախական դասակարգ, միակ դասակարգը, որ ընդունակ է միացնելու բոլոր աշխատավորներին ու շահագորրծվողներին՝ բուրժուազիայի դեմ պայքարելու, նրան լիովին վերացնելու համար:
<u>Շահագործող դասակարգերին քաղաքական տիրապետությունը հարկավոր է շահագործումը պաշտպանելու, այն է՝ ժաղավրդի ամենավիթխարի մեծամասնության դեմ չնչին փոքրամասնության շահամոլությունը պաշտպանելու համար: Շահագործվող դասակարգերին քաղաքական տիրապետությունը պետք է ամեն մի շահագործում լիովին ոչնչացնելու համար, այսինքն՝ հոգուտ ժողովրդի ամենավիթխարի մեծամսնության՝ ընդդեմ արդի ստրկատերերի, այն է՝ կալվածատերերի ու կապիտալիստների, չնչին փոքրամասնության:</u>
Մանր-բուրժուական դեմոկրատները, այդ իբր թե սոցիալիստները, որոնք դասակարգաին կռիվները փոխարինել են ցնորքներով դասակարգերի համաձայնության մասին, սոցիալիստական փոխակերպումն էլցնորական ձևով էին պատկերացնում, ո՝չ թե շահագործող դասակարգի տապալման, այլփոքրամասնության խաղաղ ենթարկման ձևով՝ իր անելիքները հասկացած մեծամասնությանը: Այս մանր-բուրժուական ուտոպիան, որն անխզելիորեն կապված է դասակարգերից վեր գտնվող պետություն ընդունելու հետ, գործնականում հասցնում էր աշխատավոր դասակարգերի շահերի դավաճանությանը, ինչպես այդ հենց ցույց տվեց, օրինակ, 1848 ու 1871թ.թ. ֆրանսիական հեղափոխությունների պատմությունը, ինչպես այդ ցույց տվեց բուրժուական նախարարությունների մեջ "սոցիալիստների" մասնակցության փորձն Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և ուրշ երկրներում XIX դարի վերջին ու XX դարի սկզբին:
Մարքսն իր ամբողջ կյանքում պայքարում էր մանրժբուրժուական սոցիալիզմի դեմ, որն այժմ վերախվել է Ռուսաստանում էսերների ու մենշեվիկների կուսակցությունների ջանքերով: Մարքսը դասակարգային կռվի ուսմունքը

հետևողականորեն զարգացրելև հասցրել է կիպ մինչև քաղաքական իշխանության, պետության ուսմունքը:
Բուրժուազիայի տիրապետությունը կարող է տապալել միմիայն պրոլետարիատն իբրև հատուկ դասակարգ, որի գոյության տնտեսական պայմանները նախապատրաստում են նրան այդպիսի տապալման համար, հնարավորություն և ուժ է տալիս նրան այդ բանը կատարելու: Մինչդեռ բուրժուազիան բաժան-բաժան է անում ու փոշիացնում է գյուղացիությանն ու բոլոր մանր-բուրժուական շերտերը, նույն բուրժուազիան համախմբում, միացնում, կազմակերպում է պրոլետարիատին: Միմիայն պրոլետարիատն է, որ շնորհիվ խոշոր արտադրության մեջ կատարած իր տնտեսական դերի, ընդունակ է առաջնորդը լինելու այն **բոլոր** աշխատավոր ու շահագործվող մասսաներին, որոնց բուրժուազիան հաճախ ւէ ո'չ թե պակաս չափով է շահագարծում, ճնշում ու նեղում, քան պրոլետարներին, այլ ավելի ուժեղ չափով, բայց որոնք իրենց ազատագրության համար **ինքնուրույն** պայքար մղելու անընդունակ են:
Դասակարգային կռվի ուսմունքը, որը Մարքսը գործադրել է պետության ու սոցիալիստական հեղափոխության հարցի վերաբերմամբ, անհրաժեշտաբար տանում է դեպի պրոլետարիատի **քաղաքական տիրապետության**, նրա դիկտատուրաի ճանաչումը, այսինքն՝ մի իշխանության, որը նա ոչոքի հետ չի բաժանելու և որն անմիջականորեն հենվում է մասսաների զինված ուժի վրա: Բուրժուազիայի տապալումը կառելի է իրագործել միմիայն պրոլետարիատին **տիրող դասակարգ** դարձնելով, որն ընդունակ կլինի ճնշելու բուրժուազիայի անխուսափելի, հուսահատական դիմադրությունը և կազմակերպելու **բոլոր** աշխատավոր ու շահագործվող մասսաներին՝ տնտեսության նոր կացութաձևի համար:
Պրոլետարիատին անհրաժեշտ է պետական իշխանություն, ուժի կենտրոնացրած կազմակերպություն, բռնության կազմակերպություն թ'ե շահագործողների դիմադրությունը ճնշելու և թ'ե բնակչության վիթխարի մասսային՝ գյուղացիությանը, մանր բուրժուազիային, կիսապրոլետարների **ղեկավարելու** համար՝ սոցիալահիստակ տնտեսությունը "կարգի գցելու" գործում:
Դաստիրակելով բանվորական կուսակցությունը, մարքսիզմը դաստիրակում է պրոլետարիատի ավանգարդը, որն ընդունակ է գրավելու իշխանությունը և **ամբողջ ժաղավրդին** դեպի սոցիալիզմ **առաջնորդելու**, կազմակերպելու ու ուղղություն տալու նոր հասարակարգին, լինելու բոլոր աշխատավորների ու շահագործվողների ուսուցիչ, ղեկավար, առաջնորդ՝ նրանց հասարակական կարգն առանց բուրժուազիայի ու բուրժուազիայի դեմ կազմակերպելու գործում: Ընդհակառակը, այժմ տիրող օպորտունիզմը բանվորական կուսակցությունից կրթում է մասսայից կտրվող, ավելի լավ վարձատրվող բանվորների ներկայացուցիչներ, որոնք տանելի կերպով "սարքվում են" կապիտալիզմի ժամանակ, որոնք իրենց անդրանկության իրավունքը ծախում են ոսպե ապուրով, այսինքն՝ հրաժարվում են ընդդեմ բուրժուազիայի ժողովրդի հեղափոխական առաջնորդների դերը կատարելուց:
"Պետությունը, այսինքն՝ իբրև տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատը", - Մարքսի այս թեորիան անխզելիորեն կապված է նրա ամբողջ ուսմունքի հետ պատմության մեջ պրոլետարիատի ունեցած հեղափոխական դերի մասին: Այդ դերի ավարտումը պրոլետարական դիկրատուրան է, պրոլետարիատի քաղաքական տիրապետությունը"
Բայց եթե պրոլետարիատին հարկավոր է պետությունն, իբրև բռնության **հատուկ** կազմակերպություն **ընդդեմ** բուրժուազիայի, ապա այստողից ինքնստինքյան բղխում է այն եզրակացությունը, թե հնարավո՞ր է արդյոք այդպիսի կազմակերպության

ստեղծումն առանց նախորոք ոչնչացնելու, առանց խորտակելու այն պետական մեքենան, որն ստեղծել է բուրժուազիան **իրեն համար:** Այս եզրակացությանն ընդհուպ մոտեցնում է "Կոմունիստական մանիֆեստը", և այս եզրակացության մասին է խոսում Մարքսը, երբ ամփոփում է 1848-1851է.է. հեղափոխության փորձը:

2. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐ

Պետության մասինմեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ Մարքսը 1848-1851թ.թ. հեխափոխության ամփոփումը տալիս է հետևյալ դատողության մեջ, եր քաղում ենք նրա "Լուի Բոնապարտի Բրյումերի 18-ը" աշխատությունից.

*... "Բայց հեղափոխությունը հիմնավոր բան է: Նա դեռ իր ուղեվորությունն է կատարում քավարանի միջոցով: Նա իր գործը կատարում է մեթոդիկորեն: Մինչև 1851է. Դեկտեմբերի 2-ը" (այն, որը Լուի Բոնապարտը կատարեց իր պետական հեղաշրջումը) "նա վերջացրել էր իր նախապատրաստական աշխատանքի կեսը, այժմ նա վերջացնում է մյուս կեսը: Նա սկզբից կատարելիության է հասցնում պարլամենտական իշխանությունը, որպեսզի կարողանա տապալել այն: Այժմ, երբ նա հասել է արդեն այդ նպատակին, նա կատարելագործման է հասցնում **գործադիր իշխանությունը,** վեր է ածում այն իր ամենաճշգրիտ արտահայտությանը, մեկուսացնում է այն, հանդիպադրում է իրենայն իբրև իբրև միակ կշտամբանքը, **որպեսզի նրա դեմ կենտրոնացնի կործանման բոլոր ուժերը"** (ընդգծումը մերն է): "Եվ երբ յեղափոխությունն ավարտի իր նախապատրաստական աշխատանքի այս երկրորդ կեսը, այն ժամանակ Եվրոպան ոտի կկանգնի իր տեղից և հիացած կասի՝ դու լավ ես փորփրում , հին խլուրդ":*
"Այս գործադիր իշխանությունն իր հսկայական բյուրոկրատական ու զինվորական կազմակերպությամբ, իր բազմաբարդ ու արվեստական պետական մեքենայով, պաշտոնյաների կեսմիլիոնանոց այս բանակով՝ նույնպիսի կեսմիլիոնանոց զորաբանակի կողքին, այս տոսկալի մակաբուծական օրգանիզմը, որ իբրև մի ցանց պատում է ֆրանսիական հասարակության ամբողջ մարմինը և փակում նրա բոլոր ծակոտիները, - այս գործադիր իշխանության առաջ եկավ ինքնակալ միապետության դարաշրջանում ֆեոդալիզմի քայքայման պահին, որի անկումը նա շտապեցրեց": Ֆրանսիական աջաջին հեղափոխությունը զարգացրեց կենտրոնացնումը, "բայց միաժամանակ ընդլայնեց նրա ժավալը, ատրիբուտներն ու կառավարական իշխանության սպասարկուների քանակությունը: Նապոլեոնը կատարելագործման հասցրեց այս պետական մեքենան": Լեգիտիմ միապետությունը և հոլիսյան միապետությունը "ոչմի նոր բան չառաջացրեց, բացի աշխատանքի ավելի մեծ բաժանումից":...
*..."Վերջվերջո՝ պառլամենտական հանրապետությունը, հեղափոխության դեմ պայքարելիս՝ ստիպված եղավ, բռնի միջոցների հետ միասին, ուժեղացնել նաև կառավարական իշխանության միջոցներն ու կենտրոնացումը: **Բոլոր հեղաշրջումներն կատարելագործում էին այդ մեքենան, փոխանակ ջարդուփշուր անեին այն"** (ընդգծումը մերն է): "Այն կուսակցություններում, որոնք միմյանց հաջորդելով մաքառում էին իշխանությունները ձեռք բերելու համար, հաղթողի գլխավոր ավարը համարում էին այդ ահագին պետական շենքի գրավումը" ("Լուի Բոնապարտի Բրյումերի 18-ը", 4-րդ հրատ., Համբուրգ 1907թ. էջ 98-99):*

Այս երևելի դատողության մեջ մարքսիզմը՝ "Կոմունիստական մանիֆեստի" համեմատությամբ մի վիթխարի քայլ է անում դեպի առաջ: Այնտեղ պետության հարցը դրվում էր դեռևս ծայրահեղ վերացականորեն, ամենաընդհանուր հասկացողություններով ու արտահայտություններով: Այստեղ հարցը դրվում է կոնկրետ կերպով և չափազանց ճշգրիտ, որոշ, գործնական շոշափելի եզրակացություն է արվում. բոլոր նախկին հեղափոխությունները կատարելագործելեն պետական մեքենան, մինչդեռ պետք է ջարդել, փշրել այն:
Այս եզրակացությունն է գլխավորը, հիմնականը մարքսիզմի ուսմունքի մեջ պետության մասին: Եվ հենց այս հիմնականնէ, որ ո՛չ միայն բոլորովին մոռացված է տիրող պաշտոնական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կողմից, այլ և ուղղակի **աղավաղված է** (ինչպես կտեսնենք ստորև) **II Ինտերնացիոնալի** ականավորագույն թեորետիկ Կ. Կաուցկու կողմից:

"Կոմունիստական մանիֆեստում" պատմության ընդհանուր ամբոբումներ են արված, որոնք հարկադրում են պետության մեջ դասակարգային տիրապետության օրգան տեսնելև բերում են այն անհրաժեշտ եզրակացությանը, որ պրոլետարիատը չի կարող տապալել բուրժուազիային, առանց նախապես քաղաքական իշխանությունը նվաճելու, առանց քաղաքական տիրապետություն ձեռք բերելեու, առանց պետությունն "իբրև տիրող դասակարգ կազմակերպված պրոլետարիատի" փոխարկելու, և որ այդ պրոլետարական պետությունն իր հաղթությունից հենց անմիջապես հետո կսկսի մահանալ, որովհետև դասակարգային հակասուդյուններից ազատ հասարակության մեջ պետություն պետք չե ու անհնար է: Այստեղ հարց չի դրվում այն մասին, թե պատմական զարգացման տեսակետից ինչպես պետք է բուրժուական պետությունը պրոլետարականի փոխվի:

Հենց այդպիսի հարց է դնում ու վճռում Մարքսը 1852է.: Հավատարիմ դիալեկտիկական մատերիալիզմի իր փիլիսփայությանը՝Մարքսն իբրև հիմք վերցնում է 1848-1851թ.թ. հեղափոխության մեծ տարիների պատմական փորձը: Մարքսի ուսմունգն այստեղ ևս, ինչպես և միշտ, փիլիսոփայական խոր աշխարհայացքով ու պատմության ճոխ գիտությամբ լուսաբանված **փորձի հանրագումարումն է** հանդիսանում:

Պետության հարցը դրվում է կոնկրետ կերպով. Պատմականորեն ի՞նչպես է ծագել բուրժուական պետությունը, բուրժուական տիրապետության համար անհրաժեշտ պետական մեքենան. Որո՞նք են նրա կրած փոփոխությունները, ի՞նչ էվոլուցիաի է ենթարկվել նա բուրժուական հեղափոխությունների ընթացքում և ճնշված դասակարգերի ինքնութույն ելույթների հանդեպ. որո՞նք են պրոլետարիատի խնդիրներն այս պետական մեքենայի վերաբերմամբ:

Բուրժուական հասարակությանը հատուկ կենտրանացրած պետական իշխանությունը ծագել է աբսոլուտիզմի անկման շրջանում: Այդ պետական մեքենայի համար ամենից ավելի բնորոշ են երկու հաստատություն՝ չինովնիկություն ու մշտական զորաբանակը: Թե ինչպես այդ հաստատությունները հազարավոր թելորով կապված են հատկապես հենց բուրժուազիայի հետ, այդ մասին բազմիցս խոսվում է Մարքսի ու էնգելսի երկերում: Ամեն մի բանվորի փորձ ակնբախությամբ ու ազդեցությամբ պարզաբանում է այդ կապը: Բանվոր դասակարգը իր կաշվի վրա է սովորում ճանաչել այդ կապը, - ահա թե ինչու նա այնքան հեշտությամբ և ընբնում ու այնպես հաստատուն կերպով յուրացնում այդ կապի անխուսափելիության գիտությունը, մի գիտություն, որ մանր-բուրժուական դեմոկրատները կա'մ տգիտությամբ ու թեթևամտությամբ շխտում են, կա'մ էլ ավելի մեծ թեթևամտությամբ ընդունում են "ընդհանրապես", մոռանալով համապատսխան գործնական եզրակացություններ անել:

Չինովնիկությունն ու մշտական բանակը "պարազիտ " են բուրժուական հասարակության մարմնի վրա, պարազիտ, որ ծնունդ է այդ հասարակությունը ծվատող ներքին հակասությունների, բայց հենց այն պարազիտը, որ "փակում է" կենսական ծակոտիները: Պաշտոնակ սոցիալ-դեմոկրատիայի մեջ ներայումս տիրապետող կաուցկիական օպորտունիզմը պետությունն իբրև մակաբուծական օրգանիզմ դիտող տեսակետը համարում է անարխիզմի առանձնահատուկ ու բացառիկ սեփականությունը: Հասկանալի է, վոր մարքսիզմի այս խեղաթյուրումը չափազանց օգտակար է այն քաղքենիների համար, որոնք սոցիալիզմը հասցրին իմպերիալիստական պատերազմն արդարացնելու ու գունազարդելու անլուր խայտառակությանը՝ նրա վերաբերմամբ գործադրելով "հայրենիքի

պաշտպանության" հասկացողությունը. Բայց, այնուամենայնիվ, այդ անպայման խեղաթյուրումն է:
Բոլոր բուրժուական հեղափոխությունների միջով, որոնք բազմիցս տեսել է Եվրոպան ֆեոդալիզմի անկումից հետո, անցնում է այս չինովնիկական ու ռամական ապարատի զարգացումը, կատարելագործումն ու ամրացումը: Մասնավորապես, հենց մանր բուրժուազիան գրավվում է խոշոր բուրժուազիայի կողմն ու ենթարկվում նրան՝ խոշոր չափով այդ ապարատի միջոցով, որը գյուղացիության, մանր արհեստավորների, առևտրականների ու այլոց վերին խավերին համեմատաբար հար,ար, հանգիստ ու պատվավոր տեղեր է տալիս, տեղեր, որոնք իրենց տերերին ժողովրդից վեր են դասում: Վերցրեք այն, ինչ տեղի ունեցավ Ռուսաստանում 1917թ. Փետրվարի 27-ից հետո եկող կես տարվա ընթացքում՝ չինովնիկական այն տեղերը, որոնք առաջ առավելապես սևհարյուրյակայիններին էին տրվում, կադետների, մենշևիկների ու էսերների ավարի առարկա դարձան: Նրանք ոչ մի լուրջ ռեֆորմի մասին ըստ էության չեին մտածում, աշխատելով ձգձգել ռեվորմները "մինչև Սահմանադիր ժողովը", իսկ Սահմանադիր ժողովը ձգձգել քիչ-քիչ մինչև պատերազմի վերջը: Իսկ ավարը բաժանելու գործում, մինիստրների, մինիստրի օգնականների, գեներալ-նահանգապետների ր այլն և այլն տեղերը գրավելիս չեին դանդաղում և ոչմի Սահմանադիր ժողովի չեին սպասում: Կառավարության կազմին վերաբերող կամբինացիաների խաղն, ըստ էության, միմիայն "ավարաի" այդ բաժանման ու վերաբաժանման արտահայտությունն էր, որը տեղի էր ունենում թ'ե վերևում և թ'ե ներքևում, ամբողջ երկրում, ամբողջ կենտրոնական վարչության մեջ: 1917թ. փետրվարի 27 - օգոստոսի 27 տևող կիսամյակի ամփոփումը, օբյեկտիվ ամփոփումն անկասկած է՝ ռեվորմները հետաձգված են, չինովնիկական տեղերի բաժանումը կատարված է և բաժանման ժամանակ տեղի ունեցած "սխալներն" ուղղված են միքանի վերաբաժանումների միջոցով:
Բայց որքան չինովնիկական ապարատի ավելի շատ "վերաբաժանումներ" են տեղի ունենում զանազան բուրժուական ու մանր-բուրժուական կուսակցությունների միջև (կադետների, էսերների ու մենշևիկների միջև, եթե վերցնենք ռուսական օրինակը), այնքան ավելի է պարզվում ճնշված դասակարգերի ու նրանց գլուխ կանգնած պրոլետարիատի համար՝ նրանց անհաշտ թշնամական դիրքը դեպի **ամբողջ** բուրժուական հասարակությունը: Այստեղից՝անհրաժեշտություն է ծագում բոլոր բուրժուական կուսակցությունների համար, դրանց թվում նույնիսկ ամենադեմոկրատական ու "հեղափոխական դեմոկրատական" կուսակցությունների համար ուժեղացնել ռեպրեսիաները հեղափոխական պրոլետարիատի դեմ, ամրացնել ռեպրեսիաների ապարատը, այսինքն՝ հենց նույն պետական մեքենան: Իրերի այդպիսի ընթացքն ստիպում է հեղափոխությանը՝ **"կործանման բոլոր ուժերը կենտրոնացնելու"** պետական իշխանության դեմ, հարկադրում է խնդիր դնել, ո; չ թե պետական մեքենայի բարելավման, այլ նրա **կործանման, ոչնչացման** մասին:
Տրամաբանական դատողությունները չեն, այլ դեպքերի իրական զարգացումը, 1848-1851թ.թ. կենդանի փորձն է, որ ստիպել է խնդիրն այդ ձևով դնել: Թե որ աստիճան խիստ է կերպով է կանգնած Մարքսը պատմական փորձի իրակա հիմքի վրա, այդ երևում է նրանից, որ նա 1852թ. դեռ կոնկրետ կերպով այն հարցը չի դնում, թե **ինչով** պետէ ե փոխարինել ոչնչացման ենթակա այդ մեքենան: Փորձն այն ժամանակ դեռ նյութ չեր տալիս այդպիսի հարց դնելու համար, որ պատմությունն օրակարգի մփջ դրեց ավելի ուշ, 1871թ.: 1852թ. բնապատմական դիտողության ճշգրտությամբ կարելի էր միմիայն հավաստել, որ պրոլետարական հեղափոխությունը **մոտեցել է**

"կործանման բոլոր ուժերը" պետական իշխանության դեմ "կենտրոնացնելու" խնդիր, պետակ մեքենան "ջարդուփշուր անելու" խնդիրն:
Այստեղ հարց կարող է առաջ գալ, թե ճի՞շտ է արդյոք փորձի, դիտողությունների եզրակցությունների այն ընդհանրացումը, որ կատարել է Մարքսը այն, որ այդ բոլորը նա տարածում է ավելի լայն սահմանների վրա, քան Ֆրանսիայի երեք տարվա պատմությունը, 1848-1851թ.թ.: Այս հարցի քննարկման համար նախ կհիշեցնենք էնգելսի մի դիտողությունը, և ապա կանցնենք փաստական տվյալների:

… "Ֆրանսիան, - գրել է էնգելսը "Բրյումերի 18-ի" 3-րդ հրատարակության առաջաբանում, - Ֆրանսիան այն երկիրն է, որտեղ դասակարգերի պատմական կռիվը, ավելի քան այլ երկրներում, յուրաքանչյուր անգամ մղվել է մինչը վճռական վախճանը: Ֆրանսիայում ամենաորոշակի գծերով կոփվել են այն փոփոխվող քաղաքական ձևերը, որոնց ներսում ընթանում էր դասակարգային այդ կռիվը և որոնց մեջ իրենց արտահայտությունն են գտել նրա հետևանքները: Լինելով ֆեոդալիզմի կենտրոնը միջին դարերում, միասնաձև դասային միապետության օրինակելի երկիրը Վերածննդի դարաշրջանից սկսած, Ֆրանսիան Մեծ հեղափոխության ժամանակ ջարդուփշուր արեց ֆեոդալիզմը և բուրժուազիայի մաքուր տիրապետություն հիմնեց այնպիսի կլասիկ պարզությամբ, ինչպես ոչ մի այլ եվրոպական երկիր: Եվ գլուխ բարձրացնող պրոլետարիատի կռիվն ել տիրապետող բուրժուազիայի դեմ հանդես է գալիս այստեղ այնպիսի սուր ձևով, որ անհայտ է մյուս երկրներին: (1907թ. հրատարակություն, էջ 4):

Վերջին դիտողությունը հնացել է, որովհետև 1871թ. սկսած ընդհատում է առաջ եկել ֆրանսիական պրոլետարիատի հեղափոխական կռվի մեջ, թեև այդ ընդհատումը, որքան ել երկարատև լինի այն, այն ամենևին չի վերացնում այն հնարավորությունը, որ գալիք պրոլետարական հեղափոխության մեջ Ֆրանսիան ցուցաբերի իրեն իբրև դասակարգերի միջև վճռական վախճանը մղվող կռվի կլասիկ երկիրը:
Բայց, ընդհանուր հայացք գցենք առաջավոր երկրների XIX դարի վերջի XX դարի սկզբի պատմության վրա: Մենք կտեսնենք, որ ավելի դանդաղ, ավելի բազմաձև կերպով շատ ավելի լայն ասպարեզի վրա կատարվում էր այդ նույն պրոցեսը մի կողմից, "պարլամենտական իշխանության" մշակման պրոցեսն ինչպես հանրապետական երկրներում (Ֆրանսիա, Ամերիկա, Շվեյցարիա), այնպես ը միապետական երկրներում (Անգլիա, որոշ չափով Գերմանի, Իտալիա, Սկադինավյան երկրներ և այլն), - մյուս կողմից, զանազան բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունների՝ որոնք բաժանում ու վերաբաժանում էին չինովնիկական տեղերի "ավարը", մինչդեռ բուրժուական հասարակարգի հիմքերն անփոփոխ էին մնում, - վերջապես՝ "գործադիր իշխանության", նրա չինովնիկական ու ռազմական ապարատի կատարելագործման ու ամրացման պրոցեսը:
Ոչ մի կասկած չկա, որ սրանք առհասարակ կապիտալիստական պետությունների ամբողջ նորագույն էվոլյուցիայի ընդհանուր գծերն են: Երեք տարվա ընթացքում , 1848-1851թ/թ/, Ֆրանսիան արագ, սուր, համակենտրոնացած ձևով ցույց տվեց զարգացման հենց այն պրոցեսսները, որոնք հատուկ են ամբողջ կապիտալիստական աշխարհին:
Իկս առանձնապես իմպերիալիզմը, բանկային կապիտալի դարաշրջանը, կապիտալիստական հսկայական մենաշնորհների դարաշրջանը, այն դարաշրջանը, երբ մոնոպոլիստական կապիտալիզմը, գերաճելով, պետական մոնոպոլիստական կապիտալիզմի է փոխարկվում, "պետական մեքենայի" արտասովոր ուժեղացում է ցույց տալիս, նրա չինովնիկական ու ռազմական ապարատի չտեսնված աճում, որ կապված է պրոլետարիատի դեմ ուղղված ռեպրեսիաների ուժեղացման հետ ինչպես միապետական, այնպես նաև ամենաազատ, հանրապետական երկրներում:

Համաշխարհային պատմություն, սկսած, այժմ անհամեմատ ավելի լայն մասշտաբով, քան 1852թ., տանում է դեպի պրոլետարական հեղափոխության "բոլոր ուժերի համակենտրոնացումը"՝ պետական մեքենան "կործանելու" համար:
Թե ինչով է փոխարինելու պրոլետարիատն այդ մեքենան, դրա համար ամենաուսանելի նյութ է տվելՓարիզի կոմունան:

3. ՄԱՐՔՍՆ ԻՆՉՊԵՍ Է ԴՆՈՒՄ ՀԱՐՑԸ 1852Թ.[1]

[1] Ավելացված երկրորդ հրատարակությանը

1907թ. Մերինգը "Neue Zeit" ամսագրում (XXV, 2, 164) քաղվածքներ հրատարակեց Մարքսի՝ Վայդեմայերին ուղղված՝1852թ. մարտի 5-ի թվակիր նամակից: Այդ նամակն, իմիգիայլող, պարունակում է հետրյալ ուշագրավ դատողությունը.

"Ինչ վերաբերվում է ինձ, ապա ինձ չի պատկանում ո'չ այն ծառայությունը, որ ես եմ գտել դասակարգերի գոյությունը արդի հասարակության մեջ, ո'չ էլ այն, որ ես եմ գտել փոխադարձ կռիվը: Բուրժուական պատմաբանները ինձնից շատ առաջ շաևադրել են դասակարգերի այդ կռվի պատմական զարգացումը, իսկ բուրժուական տնտեսագետները տվել են դասակարգերի անատոմիան: Այն նոր գործը, որ կատարել եմ ես, եղել են այն, որ ս ապացուցել եմ հետրյալը. 1) որ դասակարգերի գոյությունը կապված է լոկ պատմական որոշ մարտերի հետ, որոնք հատուկ են արտադրության զարգացմանը (historische Entwicklungskampfe der Produktion). 2) որ դասակարգային կռիվն անհրաժեշտորեն տանում է դեպի պրոլետարիատիդիկտատուրան, 3) որ որ այդ դիկտատուրան ինքը սոսկ մի անցում է դեպի ամեն տեսակ դասակարգերի ոչնչացումն ու դեպի առանց դասակարգերի հասարակությունը"…

Այս խոսքերով Մարքսին հաջողվել է զարմանալի ցցունությամբ արտահայտել է նախ՝ իր ուսմունքի գլխավոր ու արմատական տարբերությունը բուրժուազիայի առաջավոր ու ամենից ավելի խորաթափանց մտաշողների ուսմունքից, և երկրորդ՝ պետության մասին իր մշակած ուսմունքի էությունը:
Գլխորը Մարքսի ուսմունքի մեջ դասակարգաին կռիվն է: Այսպես են ասում ու գրում շատ հաճախ: Բայց այդ ճիշտ չե: Եվ այդ անճշտությունից միշտ ու շարունակ ծագում է մարքսիզմի ոպորտունիստական խեղաթյուրումը, նրա խաչդախումը՝ բուրժուազիայի համար ընդունելի դարձնելու ոգով: Որովհետև դասակարգաին պայքարի ուսմունքն ստեղծել է **ո'չթե** Մարքսը, **այլ** բուրժուազիան **նախքան** Մարքսը, և այդ ուսմունքն, ընդհանրապես ասած, բուրժուազիայի համար **ընդունելի է:** Ով ընդունում է միմիայն դասակարգերի պայքարը, նա դեռ մարքսիստ չե, նա կարող է դեռ բուրժուական մտածողության ու բուրժուական քաղաքականության շրջանակներից դուրս եկած չլիներ: Սահմանափակել մարքսիզմը դասակարգերի կռվի ուսմունքով նշանակում է խուզել մարքսիզմը, խեղաթյուրել այն, հանգեցնել նրան այն բանին, ինչ որ ընդունելի է բուրժուազիայի համար: Մարքսիստ է միմիայն նա , ով դասակարգերի պայքարը ճանաչումն **ընդարձակում** է մինչև **պրոլետարիատի դիկտատուրաի** ճանաչումը: Այս է մարքսիզմի ամենախորը տարբերությունը սովորական մանր (հենց նաև խոշոր) բուրժուազիայից: Այս փորձաքարի վրա պետք է փորձարկել մարքսիզմի **իսկական** հասկացողությունն ու ճանաչումը: Եվ զարմանալի չե, որ երբ Եվրոպաի պատմությունը բանվոր դասակարգին **գործնականորեն** բերեց հասցրեց տվյալ հարցին, այն ժամանակ ո' չ միայն բոլոր ոպորտունիստներն ու ռեֆորմիստները այլև բոլոր "կաուցկիականները" (մարդիկ, որոնք տարբերվում են

ռեֆորմիզմի ու մարքսիզմի միջև) պրոլետարիատի դիկտատուրան **ժխտող** ողորմելի ֆիլիստերներ ու մանր-բուրժուական դեմոկրատներ դուրս եկան: Կաուցկու "Պրոլետարիատի դիկտատուրան" բրոշյուրը, որ լույս է տեսել 1918թ. օգոստոսին, այսինքն՝ այս գրքույկի առաջին հրատարակությունից շատ հետո, մարքսիզմի քաղքենիական աղավաղման ու **գործով** նրանից ստորությամբ հրաժարվելու, բայց **խոսքով** այն կողծավորաբար ճանաչելու մի նմուշ է (տե՛ս իմ "Պրոլետարական հեղափոխությունն ու ռենեգատ Կաուցկին" բրոշյուրում, Պետրոգրադ և Մոսկվա, 1918թ.):

Արդի օպորտունիզմը հանձինս իր գլխավոր ներկայացուցիչ, նախկին մարքսիստ Կ. Կաուցկու, ամբողջովին համապատասխանում է **բուրժուական** դիրքի այն բնութագրմանը, որ տալիսը Մարքսը վերևում, որովհետը այդ օպորտունիզմը դասակարգային պայքարի ճանաչման բնագավառը սահմանափակում է բուրժուական հարաբերությունների բնագավառով: (Իսկ այդ բնագավառի ներսում, նրա շրջանակներում ոչմի կրթված լիբերալ չի հրաժարվի "կզբունքով" ընդունել դասակարգային պայքարը): Օպորտունիզմը դասակարքային պայքարի ւդունումը **չի հասցնում** հենց ամենագլխավոր կետին, կապիտալիզմից կոմունիզմին **անցնելու** շրջանին, բուրժուազիայի **տապալման** ու նրա լիակատար ոչնչացման շրջանին: Իրականությանում այդ շրջանն անխուսափելիորեն դասակարգային չտեսնված դաժան պայքարի, նրա չտեսնված սուր ձևերի շրջան է հանդիսանում, հետևապես և, այդ **նոր ձև** դեմոկրատական (պրոլետարների ու առհասարակ չունևորների համար) և **նոր ձև** դիկտատորական պետություն լինի (ընդդեմ բուրժուազիայի):

Այնուհետև: Մարքսի ուսմունքի էեությունը պետության մասին միմիայն նա է յուրացրել, որ ըմբռնել է, որ **մեկ** դասակարգի դիկտատուրան անհրաժեշտ է ո՛չ միայն ընհդհանրապես ամեն մի դասակարգային հասարակության համար, ո՛չ միայն բուրժուազիայի տապալած **պրոլետարիատի** համար, այլ մի ամբողջ **պատմական ժամանակաշրջանի** համար, որ բաժանում է կապիտալիզմին "առանց դասակարգերի հասարակությունից"՝ կոմունիզմից: Բուրժուական պետությունների ձևերը չաափազանց բազմազան են, բայց նրանց էությունը մեկ է. Այդ բոլոր պետություններն այսպես թե այնպես, բայց վերջին հաշվով անպայման **բուրժուազիայի դիկատաուրա** են հադիսանում: Կապիտալիզմից կոմունիզմին անցնելն, իհարկե, չի կարող քաղաքական ձևերի ահագին առատություն ու բազմազանություն չբերել, բայց դրանց բոլորի էությունն անխուսափելիորեն մեկ է՝ **պրոլետարիատի դիկտատուրան:**

III. ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1871 Թ. ՓԱՐԻԶԻ ԿՈՄԻՆԱԻ ՓՈՐՁԸ: ՄԱՐՔՍԻ ԱՆԱԼԻԶԸ

1. Ո՞ՐՆ Է ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ Կոմունայից մի քանի ամիս առաջ, 1870թ. աշնանը, Մարքսը նախազգուշացնում էր Փարիզի բանվորներին, ապացուցելով, թե կառավարությունը տապալելու փորձը հուսահատությունից բղխող հիմարություն կլիներ: Բայց երբ 1871թ. մարտին բանվորների **վզին փաթաթեցին** վճռական ճակատամարտը և նրանք ընդունեցին այն, երբ ապստամբությունն իրողություն դարձավ, Մարքսը, չնայած վատ նախանշաններին, մեծագույն հիացմունքով ողջունեց պրոլետարական հեղափոխությունը: Մարքսը պեդանտական համառությամբ չդատապարտեց "անժամանակ"շարժումը, ինչպես մարքսիզմի ռուսական տխրահռչակ ռենեգատ Պլեխանովը, որը 1905թ. նոյեմբերին գրում էր բանվորների ու գյուղացիների պայքարը խրախուսելու ոգով, իսկ 1905թ. դեկտեմբերից հետո լիբերալների նման գոռում էր. "պետք չէր զենք վերցնել":
Սակայն, Մարքսը լոց չեր զմայլվում, ըստ իր արտահայտության, "երկինքը գրոհի ենթարկող" կոմունարների հերոսությամբ: Մասսայական հեղափոխական շարժման մեջ, թեպետև այն իր նպատակին չհասավ, նա հսկայական կարևորություն ունեցող պատմական փորձ էր տեսնում, համաշխարհային պրոլետարական հաղափոխության մի որոշ քայլ դեպի առաջ, գործնական մի քայլ, որ կարևոր էր, քան հարյուրավոր ծրագրեր ու դատողություններ: Վերլուծել այդ փորձը, նրանից տակտիկայի դասեր քաղել, նրա հիման վրա վերանայելիր թեորիան - ահա թե ինչպես էր դնում Մարքսն իր թնդիրը:
Միակ "ուղղումը", որ Մարքսն անհրաժեշտ համարեց մտցնել "Կոմունիստակա մանիֆեստի" վերաբերմամբ, այն մեկ ուղղումն է, որ նա կատարեց Փարիզի կոմունարների հեղափոխական փորձի վրա:
"Կոմունիստական մանիֆեստի" գերմաներեն նոր հրատարակության վերջին առաջաբանը, որն նրա երկու հեղինակներն էլ ստորագրել են, թվագրված է 1872թ. հունիսի 24-ին: Այդ առաջաբանում հեղինակները, Կարլ Մարքսն ու Ֆրիդրիխ Էնգելսը, ասում են, թե "Կոմունիստական մանիֆեստի" ծրագիրն "այժմ տեղ-տեղ հնացել է".

…"Առանձնապես - շարունակում են նրանք - Կոմունան ապացուցեց, որ "բանվոր դասակարգը չի կարող պարզապես գրավել պատրաստի պետական մեքենան և այն ընթացքի մեջ դնել՝ սեփական նպատակների համար""…

Այս ցիտատի երկրորդ չակերթների մեջ առնված բառերը հեղինակները փոխեն առելՄարքսի "Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում" աշխատությունից:

Այսպես ուրեմն, Մարքսն ու Էնգելսը Փարիզի կոմունայի մեկ հիմնական ու գլխավոր դասն այնքան հսկայական կարևորություն ունեցող էին համարում, որ նրանք այն, իբրև էական ուղղում, մտցրին "Կոմունիստական մանիֆեստի" մեջ:
Չափազանց բնորոշ են, որ հենց այս էական ուղղումն են աղավաղել օպորտունիստները, և նրա իմաստն, անշուշտ հայտնի չե "Կոմունիստական մանիֆեստը" կարդացողներից ինը տասերորդին, եթե ոչ իննսունինը հարյուրերրորդին: Այդ աղավաղման մասին մենք մանրամասն կխոսենք ներքևում, այն գլխում, որը հատկապես նվիրված է աղավաղումներին: Այժմ բավական կլինի նշել, որ Մարքսի վերևու մեջ բերված հռչակավոր ասույթի տարածված, գռեհիկ "ըմբռնումն" այս է, որ իբր թե Մարքսն այստեղ շեշտում է դանդաղաքայլ զարգացման գաղափարն իբրև հակադրություն իշխանության գրավման և այլն:
Իսկապես **ճիշտ դրա հակառակն է**: Մարքսի միտքն այն է, պետք է **ջարդի փշրի** "պատրաստի պետական մեքենան", և ոչ թե սահմանափակվի այն գրավելով:
1871թ. ապրիլի 12-ին, այսինքն՝ հենց Կոմունայի ժամանակ, Մարքսը գրում էր Կուգելմանին.

*…"Եթե դու աչքի անցկացնես իմ "Բրյումերի 18-ի" վերջին գլուխը, կտեսնես, որ ես ֆրանսիական հեղափոխության առաջիկա փորձը հայտարարում եմ հետևյալը. մի ձեռքից մյուսը չհանձնել բյուրոկրատական-ռազմական մեքենան, ինչպես լինում էր մինչև այժմ, այլ **ջարդուփշուր** անե" (ընդգծումը Մարքսինն է. Բնագրում ասված է zerbrechen) "և հենց այդ է մայր ցամաքի վրա կատարվող ամեն մի իսկական ժողովրդական հեղափոխության նախապայմանը: Եվ հենց այդ է նաև Փարիզի մեր հերոսական ընկերների փորձը"(էջ 709, "Neue Zeit", XX, 1, 1901-1902թ.): Մարքսի նամակները Կուդելմանին ռուսերեն լույս են տեսել առնվազն երկու հրատարակությամբ, որոնցից մեկն իմ խմբագրությամբ ու իմ առաջաբանով: (Երկեր, հատ. X, էջ 361)*

Այդ խոսքերում՝ "ջարդուփշուր անել բյուրոկրատական ռազմական պետական մեքենան"՝ ամփոփված է մարքսիզմի հակիրճ արտահայտված գլխավոր դասն այն հարցի մասին, թե որոնք են պրոլետարիատի խնդիրները հեղափոխության մեջ պետության վերաբերյալ: Եվ հենց այս դասը ո'չ միայն բոլորովին մոռացված է, այլև ուղղակի աղավաղված է մարքսիզմի տիրող, կաուցկիական "մեկնաբանությամբ":
Ինչ վերաբերվում է Մարքսի "Բրյումերի 18-ի"մատնանշումին, մենք վերևում լրիվ մեջ բերեցինք համապատասխան հատվածը:
Հետքրքրական է առանձնապես նշել երկու տեղ Մարքսի մեջբերված դատողության մեջ: Առաջին՝ նա իր եզրակացությունը սահմանափակում է մայր ցամաքով: Այս բանը հասկանալի էր 1871թ., երբ Անգլիան դեռ զուտ կապիտալիստական օրինակելի երկիր էր, բայց առանց զինվորականության և նշանակալից չափով՝ բյուրոկրատիայի: Այդ պատճառով էլ Մարքսը բացառում էր Անգլիան, որտեղ հեղափոխությունը, և նույնիսկ ժողովրդական հեղափոխությունը, պատկերացվում թր հնարավոր և այն ժամանակ հնարավոր էր՝**առանց** "պատրաստի պետական մեքենան" կործանելու նախապայմանի:
Այժմ, 1917թ., առաջին մեծ իմպերիալիստական պատերազմի դարաշրջանում, Մարքսի այդ սահմանափակումը վերանում : Թե' Անգլիան, թե' Ամերիկան, ամբողջ աշխարհում անգլո-սաքսոնական "ազաըության" խոշորագույն ու վերջին ներկայացուցիչները՝ զինվորականության ու բյուրակրատիզմի բացակայության իմաստով, թավալգլոր ընկան ամեն ինչ իրենց ենթարկող, ամեն բան ճնշող բյուրոկրատական ռազմական հիմնարկությունների համաեվրոպական կեղտոտ, արյունոտ ճահիճը: Հիմա թե' Անգլիայում, թե' Ամերիկայում "ամեն մի իսկապես ժողովրդական հեղափոխության նախապայման" է **ջարդել, խորտակել** "պատրաստի

պետակ մեքենան" (որ պատրաստված է այնտեղ 1917-1917թ.թ. ու հասցված "եվրոպական" համաիմպերիալիստական կատարելության):
Երկրորդ՝ հատուկ ուշադրության է արժանի Մարքսի այն ծափազանց խորամիտ դիտողությունը, թե բյուրոկրատական-ռազմական պետական մեքենաի խորտակումն "ամեն մի իսկական **ժողովրդական** հեղափոխության նախապայմանն է": "Ժողովրդական" հեղափոխության այս հասկացողությունը տարորինակ է թվում Մարքսի բերանում, և ռուս պլեխանովականներն ու մենշևիկները, Ստռուվեի այդ հետևորդները, որոնք ուզում են մարքսիստ համարվել, կարող էին, թերևս այդ արտահայտությունը Մարքսի մոտ "սխալասություն" (îáìîëâêà) հայտարարել: Նրանք մարքսիզմն այնպիսի խղճուկ-լիբերալական աղավաղման են վերածել, որ նրանց համար, բացի բուրժուական ու պրոլետարական հեղափոխության հակադրումից, ուրիշ ոչինչ գոյություն չունի, բայց հենց այդ հակադրումն էլ նրանք չափազանց մեռելային կերպով են ըմբռնում:
Եթե օրինակի համար վերցնենք XX հեղափոխությունները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու տաճկական հեղափոխություններն էլ բուրժուական համարել: Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ ել մյուսը "ժողովրդական" չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկելայդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ: Ընդհակառակը, 1905-1907թ.թ. ռուսական բուրժուական հեղափոխությունը, թեև նա յանպիսի "փայլուն" հաջողություններ չի ունեցել, ինչպիսիք մերթընդմերթ բաժին ընկան պորտուգալական ու տաճկական հեղափոխություններին, անկասկած "իսկական ժողովրդական" հեղափոխություն էր, որովհետև ծաղավրդի մասսան, նրա մեծամասնությունը, ճնշման ու շահագործման միջոցով տրորված ամենախորին հասարակական "ներքնախավերը" ոտքի էին ելնում ինքնուրույնաբար, հեղափոխության ամբողջ ընթացքի վրա դրին **իրենց** պահանջների կնիքը, խորտակվող հին հասարակության տեղ՝ իրենց ուզած ձևով նոր հասարակություն կառուցելու **իրենց** արած փորձերի կնիքը"
Եվրոպայում 1871թ. մայր ցամաքի ոչ մի երկրում էլ պրոլետարիտը ժոխովրդի մեծամասնությունը չեր կազմում: "Ժողովրդական" հեղափոխությունը, որ շարժման մեջ է քաշում իսկապես մեծամասնությանը, կարող էր "Ժողովրդական" լինել միմիայն ընդգրկելով թե պրոլետարիատև, թ'ե գյուղացիությունը: Հենց այդ երկու դասակարգերն էին, որ այն ժամանակ "Ժողովուրդ" էին կազմում: Երկու դասակարգերը միացած են նրանով, որ "բյուրոկրատական-ռազմական պետական մեքենան" ճնշու, ճզմում, շահագործում է նրանց: **Ջարդել** այդ մեքենան, **փշրել** այն - այդ է "ժողովրդի", նրա մեծամասնության, բոլոր բանվորների ու գյուղացիների մեծամասնության իսկականկ շահը, այդ է ամենաչքավոր գյուղացիների ու պրոլետարների ազատ դաշինքի "նախապայմանը", առանց այդպիսի դաշինքի անհաստատ է դեմոկրատիան ու անհնարին՝ սոցիալիստական վերակամությունը"
Ինչպես հայտնի է, հենց այդպիսի դաշինքի ճանապարհ էր բաց անում իր համար Փարիզի կոմունան, որը ներքին ու արտաքին բնույթ ունեցող մի շարք պատճառների շնորհիվ իր նպատակին չհասավ:
Հետևաբար, խոսելով "իսկական ժողովրդական հեղափոխության" մասին, Մարքսը, բոլորովին չմոռանալով մանր բուրժուազիայի առանձնահատկությունները (դրանց մասին նա խոսել է շատ ու հաճախ), ամենախիստ կերպով հաշվի էր առնում դասակարգերի փաստական փոխհարաբերությունը Եվրոպայի ցամաքային պետությունների մեծամասնության մեջ 1871թ.: Իսկ մյուս կողմից, հավաստում էր,

պետական մեքենան "ջարդուփշուր" անել պահանջում են թե' բանվորների, թե' գյուղացիների շահերը, որ այդ բանը միացնում է նրանց, ընդհանուր խնդիր է դնում նրանց առաջ՝վերացնել "պարազիտը" և այն մի որը է նոր բանով փոխարին էլ:
Բայց ինչո՞վ:

2. ԻՆՉՈ՞Վ ՓՈԽԱՐԻՆԵԼ ՋԱՐԴՈՒՓՇՈՒՐ ԱՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ

Այս հարցին Մարքսը 1847թ., "Կոմունիստական մանիֆեստի" մեջ, դեռ միանգամայն վերացական պատասխան էր, մի պատասխան, որ ավելի ճիշտ՝ պնդիրներն էր մատնանշում, բայց ոչ թե նրանց լուծման եղանակները: Փոխարինել"պրոլետարիատի կազմակերմամբ իբրև տիրող դասակարգ", "դեմոկրատիայի նվաճումով" - ահա այս էր "Կոմունիստական մանիֆեստի" պատասխանը:
Առանց ուտոպիաների մեջ ընկնելու, Մարքսը մասսայական շարժման փորձից էր պատասխան սպասում այն հարցին, թե ինչպիսի կոնկրետ ձևեր կսկսի ընդունել պրոլետարիատի այդ կազմակերպությունն իբրև տիրող դասակարգ, հատկապես ինչ կերպով այդ կազմակերպությունը կհամատեղվի ամենալրիվ ու հետևողական "դեմոկրատիա նվաճելու" հետ:
Կոմունայի փորձը, որքան էլ այն փոքր էր, Մարքսը "Քաղաքացիական պատերազմը Ֆրանիսաում" գրվածքի մեջ ամենաուշադիր վերլուծման՝ենթարկում: Մեջ բերենք ամենակարևոր տեղերն այդ գրվածքից.

XIX դարում զարգացավ միջին դարերից առաջացած "կետրոնացած պետական իշխանությունն իր ամեն տեղ գտնվող օրգաններով - մծտական զորաբանակով, ոստիկանությամբ, բյուրոկրատիայով, հոգևորականությամբ, դատավորական դասով": Կապիտալի ու աշխատանքային դասակարգային հալամարտության զարգացմամբ, "պետական իշխանությունն ավելի ու ավելի հասարակական իշխանության բնույթեր ընդունում՝ աշխատանքը ճնշելու համար, ընդունում էր դասակարգային տիրապետության մեքենայի բնույթ: Ամեն մի հեղափոխությունից հետո, որ մի որոշ առաջադիմություն է հանդիսանում դասակարգային պայքարի մեջ, պետական իշխանության զուտ ճնշող բնույթն ավելի ու ավելի բացահայտ է երևան գալիս": Պետական իշխանությունը 1848-1849թ.թ. հեղափոխությունից հետո դառնում է "կապիտալի՝ աշխատանքի դեմ մղած պատերազմի ազգային զենքը": Երկրորդ կայսրությունը ամրապնդում է այդ:
"Կայսրության ուղղակի հակադրությունը Կոմունան էր": "Նա որոշակի ձևն էր այնպիսի հանրապետության, որը պետք է միացներ ո՛չ միայն դասակարգային տիրապետության միապետական ձևը, այլև հենց դասակարգային տիրապետությունը"…

Ո՞րն էր պրոլետարական, սոցիալիստական հանրապետության այդ "որոշ" ձևը: Ո՞րն էր այն պետութոյունը, որը նա սկսել էր ստեղծել:

… "Կոմունայի առաջին դեկրետը մշտական զորքի ոչնչացումն ու այն զինված ժողովրդով փոխարինելն էր"…

Այս պահանջն այժմ դրված է սոցիալիստական կոչվել ցանկացող բոլոր կուսակցությունների ծրագրում: Բայց թե ինչ արժեն նրանց ծրագրերը, ամենից լավ երևում է մեր թսերների ու մենշևիկների վարմունքից, որոնք հենց փետրվաի 27-ի

(հ.տ.) հեղափոխությունից հետո իրապես հրաժարվեցին այդ պահանջը կենսագործելուց:

... "Կոմունան կազմված էր Փարիզի զանազան շրջանների քաղաքային ձայնավորներից, որոնք ընտրված էին ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Նրանք պատասխանատու էին և ամեն ժամանակ փոփոխելի: Նրանց մեծամասնությունն, ինքնըստինքյան հասկանալի է, բանվորներից կամ բանվոր դասակարգի ճանաչված ներկայացուցիչներից"...
*... "Ոստիկանությունը, որ մինչև այժմ պետական կառավարության գործիքներ, այժմ անմիջապես զրկվեց իր բոլոր քաղաքական ֆունկցիաներից և դարձավ Կոմունայի պատասխանատու օրգանը, որը կարելի էր ամեն ժամանակ փոխել... Նույնպես և կառավարչության բոլոր ճյուղերի չինովնիկները ... Սկսած Կոմունայի անդամներից, վերևից մինչև ներքև, հասարակական ծառայությունը պետք է կատարվեր **բանվորի աշխատավարձով**: Պետական բարձր պաշտոնատար անձերի ձեռք բերած ամեն տեսակ արտոնություններն ու ներկայացուցչության համար տրվող դրամներն անհետացան այդ պաշտոնյաների հետ միասին... Մշտական զորքն ու ոստիկանությունը, հին կառավարության նյութական իշխանության այդ գործիքները, վերացնելուց հետը Կոմունան անմիջապես ձեռնարկեց խորտակելու հոգևոր ճնշման գործիքը, տերտերների ուժը... Դատական պաշտոնյաները կորցրին իրենց երևույթական անկախությունը... այսուհետև նրանք պետք է բաց կերպով ընտրվեին, պատասխանատու և փոփոխելի լինեին"...*

Այդպես ուրեմն, Կոմունան պետական ջարդուփշուր արված մեքենան կարծես թե փոխարինեց "միմիայն" ավելի լիակատար դեմոկրատիայով, այն է մշտական բանակի ոչնչացումով, բոլոր պաշտոնական անձերի լիակատար ընտրելիությամբ ու փոփոխելիությամբ: Բայց իսկապես այդ "միմիայն" նշանակում է մի տեսակ հիմնարկների հսկայական փոխարինումն ակզբունքորեն այլ տեսակի հիմնարկերով: Այստեղ մենք տեսնում ենք հենց այն դեպքերից մեկը, երբ "քանակը վերածվում է որակի"՝ դեմոկրատիան, որն իրականացված է այնպիսի ամենամեծ լիակատարությամբ, որպիսին ընդհանրապես հնարավոր է երևակալել, բուրժուական դեմոկրատիայից փոխվում է պրոլետարականի, պետությունից (= հատուկ ուժ՝ որոշ դասակարգ ճնշելու համար) փոխվում է մի այնպիսի բանի, որն այլևս իսկապես պետություն չե:
Ճնշել բուրժուազիային ու նրա դիմադրությունը դեռևս անհրաժեշտ է: Այս բանն առանձնապես կարևոր էրԿոմունայի համար, և նրա պարտության պատճառներից մեկն այն է, որ նա բավականաչափ վճռականորեն չէր անում այդ բանը: Բայց այստեղ ճնշող օրգան հանդիսանում է արդեն բնակչության մեշամասնությունը, և ոչ թե փոքրամասնությունը, ինչպես լինում էր միշտ թե' ստրկության, թե' ճորտության, թե' վարձու ստրկության ծամանակ: Իսկ քանի որ ժոխովրդի մեծամսնությունն **ինքն է** ճնշում իրեն ճնշողներին, ապա ճնշման "հատուկ ուժի" **կարիք այլևս չկա**: Այս իմաստով պետություն **սկսում է մահանալ**: Արտոնյալ փոքրամասնության հատուկ հիմնարկների փոխարեն (արտոնյալչինովնիկություն, մշտական զորաբանակի հրամանատարություն) մեծամասնությունն ինքն անմիջականորեն կարող է կատարել այդ բանը, և որքան ավելի համաժաղավրդական է դառնում պետական իշխանության ֆունկցիաների հենց կատարումը, այնքան ավելի պակաս կարևոր է դառնում այդ իշխանությունը:
Այդ տեսակետից առանձնապես ուշագրավ է Կոմունայի ձեռնակրաշ այն միջոցը, որն ընդգծել է Մարքսը. Ներկայացուցչության համար տրվող ամեն տեսակ դրամների, չինովնիկների ամեն տեսակ դրամական արտոնությունների վերացումը, **բոլոր** պաշտոնատար անձերի վարձատրությունը պետության մեջ "բանվորի աշխատավարձի" չափին իջեցնելը: Հենց այստեղ է, որ ամենից ավելի ակնբախ կերպով է արտահայտվում **բեկումը** - բուրժուական դեմոկրատիայից դեպի պրոլետարական դեմոկրատիան, ճնշողական դեմոկրատիայից՝ դեպի ճնշված

դասակարգերի դեմոկրատիան, պետությունից, իբրև որոշ դասակարգ ճնշելու "հատուկ ուժից"՝ դեպի ճնշողներին ժաղավրդի մեծամսնության, բանվորնիեր ու գյուղացիների, **ընդհանուր ուժով** ճնշելը: Եվ պետության հարցին վերաբերող հենց այս, առանձնապես ակնբախ, թերևս ամենակարևոր կետում է, որ Մարքսի դասերն ամենից ավելի են մոռացված: Հանրամատչելի մեկնաբանությունների մեջ, որոնց թիվ ու համար չկա, այդ մասին չեն խոսում: "Ընդունված է" լռել այդ մասին, իբրև իր ժամանակն անցկացրած մի "միամտության"մասին, այնպես, ինչպես որ քրիստոնյաները, պետական կրոնի դիրք ձեռք բերելով, "մոռացան" նախնական քրիստոնեության "միամտությունները" նրա դեմոկրատական-հեղափոխական հոգու հետ միասին:

Պետական բարձրագույն պաշտոնյաների վարձատրության իջեցումը պարզամիտ, պրիմիտիվ դեմոկրատիզմի պահանջ է թվում "պարզապես": Նորագույն օպորտունիզմի "հիմնադիրներից" մեկը, նախկին սոցիալ դեմոկրատ Եգ. Բերնշտայնը, շատ անգամ է վարժություններ արել՝ կրկնելով բուրժուական գռեհիկ հեգնությունները "պրիմիտիվ" դեմօկրատիզմի հասցեին: Ինչպես բոլոր օպորտունիստները, ինչպես այժմյան կաուցկիականները, նա էլ բոլորովին չըմբռնեց այն, որ նաղ՝ անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ **անհնար է**, առանց որոշ "վերադարձի" դեպի "պրիմիտիվ" դեմոկրատիզմը (որովհետև այլ կերպ ինչպես պետք է անցնել պետական ֆունկցիաների կատարմանը բնակչության մեծամասնության և գլխովին ամբողջ բնակչության կողմից), իսկ երկրորդ՝ "պրիմիտիվ դեմոկրատիզմը" կապիտալիզմի ու կապիտալիստակն կուլտուրայի հիման վրա - այն չե, ինչ որ պրիմիտիվ դեմոկրատիզմը նախնադարյան կամ մինչկապիտալիստական ժամանակներում էր: Կապիտալիստական կուլտուրան **ստեղծել է** խոշոր արտադրություն, գործարաններ, երկաթուղիներ, փոստ, հեռախոսներ և այլն, իսկ **այդ հիմքի վրա** հին "պետական իշխանության" ֆունկցիաների հսկայական մեծամասնությունն այնքան պարզացել է ու կարող է վերածվելգրանցման, արձանագրման, ստուգման այնպիսի ամենապարզ գործառնությունների, որ այդ ֆունկցիաները միանգամայն մատչելի կդառնան բոլոր գրագետ մարդկանց, որ այդ ֆունկցիաները լիովին կարելի կլինի "բանվորի" սովորական "աշխատավարձով" կատարել, որ կարելի է (և պետք է) այդ ֆունկցիաներից խլել ինչ-որ արտոնվածության, "իշխանավորության" ամեն մի ստվեր:

Առանց բացառության բոլոր պաշտոնատար անձերի լիակատար ընտրովիությունը, **ամեն ժամանակ** փոփոխելիությունը, նրանց ռոճիկը "բանվորի" սովորական "աշխատավարձին" իջեցնելը, այդ պարզ ու "ինքնըստինքյան հասկանալի" դեմոկրատական միջոցառումները, լիովին միավորելով բանվորների ու գյուղացիության մեծամասնության շահերը, միևնույն ժամանակ ծաջայում են իբրև կամուրջ, որը կապիտալիզմից տանում է դեպի սոցիալիզմը: Այդ միջոցառումները վերաբերում են հասարակության պետական, զուտ քաղաքական վերակառուցմանը, բայց նրանք, իհարկե, իրենց ամբողջ իմաստն ու նշանակությունն ստանում են միմիայն "սեփականազրկողների սեփականազրկման" իրականացման կամ նախապատրաստման կապակցությամբ, այսինքն՝ արտադրության միջոցների վրա ունեցած կապիտալիստական մասնավոր սեփականության՝ հասարակական սեփականություն դառնալու կապակցությամբ:

..."Կոմունան - գրում է Մարքսը - ճշմարտություն դարձրեց բոլոր բուրժուական հեղափոխությունների լոզունգը՝ էժան կառավարությունը, ոչնչացնելով ծախքերի երկու ամենախոշոր հոդվածները՝ բանակն ու չինովնիկությունը":

Գյուղացիությունից, ինչպես նաև մանր բուրժուազիայի մյուս շերտերից միմիայն չնչին փոքրամասնությունն է "վեր բարձրանում", "մարդ դառնում" բուրժուական իմաստով, այսինքն՝ կա'մ ունևոր մարդ, բուրժուա է դառնում, կա'մ ապահովված ու արտոնյալ չինովնիկ: Գյուխացիության վիթխարի մեծամասնությունն ամեն մի կապիտալիստական երկրում, որտեղ միայն գյուղացիություն կա (իսկ կապիտալիստական երկրների մեծամասնությունն այդպես է), ճնշված է կառավարության կողմից և տենչում է նրա տապալումը, փափագում է (жаждет) "էժան"կառավարության: Այդ բանը կարող է իրականացնել **միմիայն** պրոլետարիատը, իսկ իրականացնելով այն՝ նա միևնույն ժամանակ մի քայլ է անում դեպի պետության սոցիալիստական վերակառուցումը:

3. ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

"Կոմունան - գրում է Մարքսը - պետք է լիներ ո՛չ թե պարլամենտական, այլ աշխատող մի կորպորացիա, և միևնույն ժամանակ թե' օրենսդիր էր, թե' օրենքները գործադրող" ...
... "Փոխանակ երեէ կամ վեց տարին մի անգամ որոշելու, թե տիրող դասակարգի որ անդամն է ներկայացնելու և տրորելու (ver und zertreten) -ողովրդին պարլամենտում, դրա փոխարեն ընդհանուր ընտրական իրավունքը պետք է ծառաեր կոմունաներում կազմակերպված ժողովրդին, որպեսզի վերջինս կարողանար իր ձեռնարկությունների համար բանվորներ, հսկիչներ, հաշվապահներ գտնել, ինչպես որ անհատական ընտրական իրավունքն այդ նույն նպատակին է ծառայում մի ուրիշի աշխատանք տվողի համար""

Պառլամենտարիզմի այս երևելի քննադատությունը, որ տրված է 1871 թ.., այժմ, սոցիալ-շովինիզմի ու օպորտունիզմի տիրապետության շնորհիվ, նույնպես պատկանում է մարքսիզմի"մոռացված խոսքերի" շարքին: Մասնագիտությամբ նախարարներն ու պարլամենտական (պատգամավորները) գործիչները, պրոլետարիատի դավաճաններն ու մեր օրերի "գործարար" սոցիալիստները պարլամենտարիզմի քննադատությունն մաբողջությամբ անարխիստներին են փողել, և այդ զարմանալի խելոք հիմունքով, պառլամենտարիզմի **ամեն մի** քննադատություն "անարխիզմ" հայտարարել: Ոչ մի տարորինակ բան չկա, որ "առաջավոր" պերլամենտական երկրների պրոլետարիատը, զզվանք զգալով այնպիսի սոցիալիստներ տեսնելիս, ինչպիսին են՝ Շայդեմանները, Դավիդները, Լեգիններները, Սամբաները, Ռենոդելները, Հենդերսոնները, Վանդերֆելդները, Ստաունինգները, Բրանտինգները, Բիսսոլատիններները և Ընկ., ավել;ի ու ավելի հաճախակի իր համակրանքը նվիրում թր անարխո-սինդիկալիզմին, չնայած այն հանգամանքին, որ նա օպորտունիզմի հարազատ եղբայրն էր:
Բայց Մարքսի համար հեղափոխական դիալեկտիկան երբեք այն դատարկ մոդայիկ ֆրազը, այն չխկչխկան խաղալիքը չի եղել, ինչպիսին այն դարձրել են Պլեխանովը, Կաուցկին և ուրիշները: Մարքսը գիտեր անխնա կերպով իր կապերը խզելաանարխիզմի հետ, երբ վերջինս չեր կարողանում օգտագործելնույնիսկ բուրժուական պարլամենտարիզմի "ախոռը", առանձնապես այն ժամանակ, երբ ակնհայտորեն բացակայում է հեղափոխական իրավիճակը, բայց միևնույն ժամանակ նա գիտեր նաև տալ պարլամենտարիզմի իսկական հեղափոխական-պրոլետարական քննադատությունը:
Միքանի տարին մի անգամ որոշել, թե տիրող դասակարգի որ անդամը պետք է պարլամենտում ճնշի, ճզմի ժողովրդին - ահա բուրժուական պարլամենտարիզմի

իսկական էությունը, ո'չ միայն պարլամենտական-սահմանադրական միապետությունների, այլև ամենադեմոկրատական հանրապետությունների մեջ:
Բայց եթե դնենք պետության հարցը, եթե քննարկենք պարլամենտարիզմն, իբրև պետության հիմնարկներից մեկը, **այդ** բնագավառում պրոլետարիատի անելիքների տեսակետից, ապա ո՞րտեղ է ելքը պարլամենտարիզմից, ի՞նչպես կարելի է առանց նրան կառավարվել:
Կրկին ու կրկին հարկավոր է ասել. Կոմունայի ուսումնասիրության վրա հիմնված Մարքսի դասերն այնքան մոռացված են, որ արդի "սոցիալ-դեմոկրատի" (կարդա՝ սոցիալիզմի արդի դավաճանի) համար ուղղակի անհասկանալի է պարլամենտարիզմի այլ քննադատությունը բացի անարխիստական ակմ ռեակցիոն քննադատությունից:
Ելքը պարլամենտարիզմից, իհարկե, ներկայացուցչական հիմնարկների ուընտրականության ոչնչացման մեջ չե, այլներկայացուցչական հիմնարկները խոսարաններից "աշխատող" հիմնարկներ դարձնելու մեջ: "Կոմունան պետք է ո'չ թե պարլամենտական, այլ հիմնարկ լիներ, այլ աշխատող, միաժամանակօրենսդիր և օրենքները կատարող":
"Ոչ թե պարլամենտական, այլ աշխատող" հիմնարկ - այս խոսքն իսկը տեղին է ասված արդի պարլամենտականների ու սոցիալ-դեմոկրատիայի պարլամենտական "սենյակի ծնիկների" հասցեյին: Դիտեցեք պարլամենտական երկրներից որը կուզեք, Ամերիկայից մինչև Շվեյցարիա, Ֆրանսիայից մինչև անգլիա, Նորվեքիա և այլն. Իսկական "պետական" աշխատանքը կատարում են կուլիսների ետևում և կատարում են դեպարտամենտները, գրասենյակները, շտամները: Պարլամենտներում միմիայն դատարկաբանում են՝ "հասարակ ժողովրդին" խաբելու հատուկ նպատակօով: Այդ այն աստիճան ճիշտ է, որ մինչև անգամ ռուսական հանրապետության մեջ, բուրժուական-դեմոկրատական հանրապետության մեջ, նախքան նրա իսկական պարլամենտ ստեղծել կարողանալը, իսկույն երևան եկան պարլամենտարիզմի այդ բոլոր մեղքերը: Փտած քաղքենիության յան պիսի հերոսները, Չերնովներն ու Ավկսենտյեվները, կարողացան միչև անգամ Խորհուրդներն էլ ապականել ամենագարշելի բուրժուական պարլամենտարիզմի օրինակով, Խորհուրդները դատարկ խոսարաններ դարձնելով: Խորհուրդներում պարոնայք "սոցիալիստական" նախարարները ֆրազյորությամբ ու բանաձևերով խաբխբում են դյուրահավատ մուժիկներին: Կառավարության մեջ պերմանենտ կադրիլ են խաղում, մի կողմից, որպեսզի եկամտաբար ու պատվավոր պաշտոնների "գաթայի մոտ" հերթով որքան կարելի է շատ էսերներ ու մենշևիկներ նստեցնեն, մյուս կողմից, որպեսզի ժողովրդի "ժողովրդի ուշադրությունն զբաղեցնեն": Իկս գրասենյակներում, շտաբներում "պետական" գործ են "գործում":
"Дело народа" - ն, սոցիալիստ - հեղափոխականների" կառավարող կուսակցության օրգանը, վերջերս խմբագրական առաջնորդողում խոստովանեց, - "լավ հասարակության" պատկանող մարդկանց աննման անկեղծությամբ, հասարակություն, որի մեջ "բոլոր" քաղաքական պոռնկությամբ են պարապում, - որ նույնիսկ այն նախարարություններում, որոնք (ներեցեք արտահայտությանս համար) "սոցիալիստներին" են պատկանում, որ նույնիսկ նրանց մեջ ամբողջ չինովնիկական ապարատն ըստ էության հին է մնում, գործում է հին ձևով, միանգամայն "ազատորեն" սաբոտաժի է ենթարկում հեղափոխական փեռնարկումները: Բայց եթե մինչև անգամ այդ խոստովանությունը չլիներ, մի՞թե կառավարության մեջ թսերների ու մենշևիկների մասնակցելու փաստական պատմությունը չի ապացուցում այդ բանը: Բնորոշ է այստեղ միմիայն այն, որ նախարարական հասարակության մեջ լինելով

կադետների հետ, պարոնայք Չերնովները, Ռուսանովները, Զենզինովներն ու "Дело народа" - ի մյուս խմբագիրներն այն աստիճան կորցրել են ամոթը, որ չեն քաշվում հրապարակով, առանց կարմրելու, իբրև մի աննշան բան պատմել, որ "իրենց մոտ" նախարարությունների մեջ ամեն ինչ հին կարգով է գնում: Հեղափոխական-դեմոկրատական ֆրազ՝ Հակոներին տխմարացնելու համար, չ չինովնիկական գրասենյակային ձգձգում՝ կապիտալիստներին "գոհացնելու" համար - ահա ձեզ "ազնիվ" կոալիցիայի **էությունը**:

Կոմունան բուրժուական ծախուև փտած պարլամենտարիզմը փոխարինում է այնպիսի հիմնարկներով, որոնց մեջ դատողության ու քննարկման ազատությունը չի այլասերվում, խաբեություն չի դառնում, որովհետև պարլամենտականներն իրենք պետք է աշխատեն, իրենք պետք է կատարեն իրենց օրենքները, իրենք պետք է ստուգեն, թե ինչ է ստացվում դրանից կյանքում, իրենք պետք է անմիջականորեն պատասխանատու լինեն իրենց ընտրողների առաջ: Ներկայացուցչական հիմնարկները մնում են, բայց այստեղ **չկա** պարլամենտարիզմը, իբրև առանձին համակարգ, իբրև օրենսդի ու գործադիր աշխատանքի բաժանման, իբրև պատգամավորների արտոնյալ դրության համակարգ: Առանց ներկայացուցչական հիմնարկների մենք չենք կարող դեմոկրատիա պատկերացնել, նույնիսկ պրոլետարական դեմոկրատիա. Իսկ առանց պարլամենտարիզմի՝ կորող ենք **պարտական ենք**, եթե բուրժուական հասարակության քննադատությունը մեզ համար դատարկ խոսքեր չեն, եթե բուրժուական տիրապետության տապալելու ձգտումը մեր լուրջ ու անկեղծ ձգտումն է, և ո'չ թե "ընտրական" ֆրազ՝ բանվորների ձայները որսալու համար, ինչպես էսերների ու մենշևիկների համար, ինչպես Շայդեմանների ու Լեգիններ, Սամբաների ու Վանդերֆելդների համար:

Չափազանց ուսանելի է, որ խոսելով **այն** չինովնիկության ֆունկցիաների մասին, որը հարկավոր է թ'ե Կոմունային, թ'ե պրոլետարական դեմոկրատիային, Մարքսը համեմատության համար վերցնում է "ամեն մի այլ աշխատանք տվողի" ծառայողներին, այսինքն՝ սովորական կապիտալիստական մի ձեռնարկություն իր "բանվորներով, հսկիչներով ու հաշվապահներով":

Մարքսի մոտ մի կաթիլ անգամ ուտոպիզմ չկա այն իմաստով, որ նա հնարեր, երևակայությամբ "նոր" հասարակություն ստեղծեր: Ո'չ, նա ուսումնասիրում է, իբրև մի բնապատմական պրոցես, նոր հասարակության **ծնունդը հնից**, այդ հնից դեպի նորը տանող անցման ձևերը: Նա վերցնում է մասսայական պրոլետարական շարժման փորձը և աշխատում է նրանից գործնական դասեր քաղել: Նա "սովորում է" Կոմունայից, ինչպես և բոլոր մեծ հեղափոխական մտածողները չեին վախենում սովորել ճնշված դասակարգի մեծ շարժումների փորձից, առանց երբևից է **պեդանտական** "բարոյախոսություններով" վերաբերվելու նրանց (Պլեխանովի՝ "պետք չեր զենք վերցնել" կամ Ծերեթելու՝ "դասակարգը պետք է ինքնասահմանափակվի" խրատների նման):

Չինովնիկությունը միանգամից, ամենուրեք, մինչև վերջը ոչնչացնելու մասին խոսք չի կարող լինել: Այդ ուտոպիա է: Բայց միանգամից **ջարդուփշուր անել** չինովնիկական հին մեքենան և անմիջապես սկսել նորը կառուցել, որ թույլ է տալիս հետզհետե ոչնչացնել ամեն մի չինովնիկություն, այդ ուտոպիա **չե**, այդ - Կոմունայի փորձն է, այդ - հեղափոխական պրոլետարիատի անմիջական, հերթական խնդիրն է:

Կապիտալիզմը պարզացնում է "պետական" վարչության ֆունկցիաները, հնարավորություն է տալիս դեն շպրտելու "իշխանությունը" (начальствование) ու ամբողջ գործը վերածելու պրոլետարների կազմակերպությանն (իբրև տիրող

դասակարգ), որ ամբողջ հասարակության անունից "բանվորներ, հսկիչներ, հաշվապահներ" է վարձում:
Մենք ուտոպիստներ չենք: Մենք "երազոխներ" ռենք այն մասին, թե ինչպես **միանգամից** կառավարվենք առանց որև է վարչության, առանց որև է ենթարկման այդ անարխիստական ցնորքները, որոնք հիմնված են ռոլետարիատի դիկտատուրայի խնդիրները չհասկանալու վրա, հիմնովին խորթ են մարքսիզմին և գործնականորեն ծառայում են միմիայն սոցիալիստական հեղափոխությունը մինչև այն ժամանակ խեստաձգելուն, երբ երբ մարդիկ կփոխվոն: Ո'չ մենք սոցիալիստական հեղափոխություն էնք ուզում հենց այնպիսի մարդկանցով, որոնք այժմ կան, որոնք առանց ենթարկման, առանց վերահսկողության, առանց "հսկիչների ու հաշվապահների" կառավարվել չեն կարող:
Բայց ենթարկվել պետք է բոլոր շահագործվողների ու աշխատավորների զինված ավանգարդին՝ պրոլետարիատին: Պետական չինովնիկերի առանձնահատուկ "իշխումն" կարել է ու պետք է սկսել անմիջապես, մի օրվա ընթացքում փոխարինել "հսկիչների ու հաշվապահների" հասարակ ֆունկցիաներով, ֆունկցիաներ, որոնք այժմ էլ միանգամայն մատչելի են ընդհանրապես քաղաքացիների զարգացման նպատակին և կարող են լիովին կատարվել "բանվորի աշխատավարձով":
Կազմակերպենք խոշոր արտադրությունը, ելակետ ունենալով այն, ինչ որ արդեն ստեղծել է կապիտալիզմը, մենք **ինքներս**, բանվորներս, հենվելով մեր բանվորական փորձի վրա, ստեղծելով ամենախիտ երկաթե դիսցիպլինան, որ պահպանվելու է զինված բանվորների պետական իշխանությամբ, պետական չինովնիկներին դարձնենք սոսկ մեր հաձնարարությունները կատարողներ, պատասխանատու, փոփոխելու, համեստ վարձատրություն ստացող "հսկիչներ ու հաշվապահներ" (իհարկե, ամեն տեսակի, կերպի ու աստիճանի տեխնիկների հետ միասին). - ահա **մեր** պրոլետարական խնդիրը, ահա ինչից կարելի է և պետք է **սկսել** պրոլետարական հեղափոխություն կատարելիս: Այսպիսի սկիզբը, որը հիմնված է խոշոր արտադրության հիման վրա, ինքնըստինքյան տանում է դեպի ամեն տեսակ չինովնիկության աստիճանական "մահացումը", դեպի հետզհետե այնպիսի կարգ ստեղծելը, - կարգ առանց չակերտների, կարգ, որ նման չի վարջու ստրկության, - դեպի այնպիսի կարգ, երբ հսկողության ու հաշվոտվության ավելի ու ավելի պարզացող ֆունկցիաները կկատարեն բոլորը հերթով, ապա նրանք սովորություն կդառնան և, վերջապես, կվերանա իբրև հատուկ շերտի մարդկանց **հատուկ** ֆունկցիաներ:
Անցյալ դարի յոթանասուական թվականների գերմանական մի սրամիտ սոցիալ-դեմոկրատ **փոստն** անվանել է սոցիալիստական տնտեսության օրինակ: Այդ շատ ճիշտ է: Այժմ թաստը մի տնտեսություն է, որ կազմակերպված է պետական-**կապիտալիստական** մոնոպոլիայի տիպով: Իմպերիալիզմը հետզհետե բոլոր տրեստներն այդ կազմակերպության է փոխարկում: Այստեղ՝ աշխատանքով ծանրաբեռնված ու սովահար "հասարակ" աշխատավորների գլխին կանգնած է նույն բուրժուական բյուրոկրատիան: Բայց այստեղ արդեն պատրաստ է հասարակական տնտեսվարության մեղանիզմը: Տապալենք կապիտալիստներին, զինված բանվորների երկաթե բազուկով կոտրենք այդ շահագործողների դիմադրությունը, ջարդուփշուր անենք արդի պետության բյուրոկրատական մեքենան և մեր առաջ կանգնած կլինի "պարազիտից" ազատված, տեխնիկապես բարձր սարքավորված մի մեխանիզմ, որը լիովին կարող են բանեցնել իրենք, միավորված բանվորները, վարձելով տեխնիկներ, հսկիչներ, հաշվապահներ, վարձատրելով նրանց **բոլորի**, ինչպես նաև առհասարակ բոլոր "պետական" պաշտոնյաների աշխատանքը

բանվորի աշխատավարձով: Ահա կոնկրետ, գործնական, բոլոր տրետների վերաբերյալանմիջապես իրագործելի խնդիր, որն աշխատավորներին ազատում է շահագործումից, որ հաշվի է առնում Կոմունայի՝ արդեն գործնականապես սկսած փորձը (հատկապես պետական շինարարության բնագավառում):
Ամբողջ ժողովրդական տնտեսությունը, կազմակերպված ինչպես փոստը, այն ձևով, որ տեխնիկները, հսկիչները, հաշվապահները, ինչպես և **բոլոր** պաշտոնատար անձերը, "բանվորի աշխատավարձից" բարձր ռոճիկ չստանան և զինված պրոլետարիատի վերահսկողության ու ղեկավարության ներքո գտնվեն, - ահա մեր ամենամերձավոր նպատակը: Ահա թե ինչպիսի պետություն է անհրաժեշտ մեզ, և ինչպիսի տնտեսական հիմունքով: Ահա թե ինչ կտա մեզ պառլամենտարիզմի ոչնչացումն ու ներկայացուցչական հիմնարկների պահպանումը, ահա թե ինչը աշխատավոր դասակարգերին կփրկի այդ հիմնարկների պոռնկացումից, որ կատարում է բուրժուազիան:

4. ԱԶԳԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

... "Ազգային կազմակերպության այն համառոտ ուրվագծում, որ Կոմունան ժամանակ չունեցավ մանրամասն մշակելու, միանգամայն որոշակի ասված է, որ Կոմունան պետք է նույնիսկ ամենափոքրիկ գյուղի քաղաքական փևը լիներ"... Կոմունաներից պետք է ընտրվեր նաև "ազգային պատգամավորությունը" Փարիզում"
... "Այն սակավաթիվ, բայց շատ կարևոր ֆունկցիաները, որոնք այն ժամանակ դեռ կմնային կենտրոնական կառավարության համար, չպետք է վերացվեին, - այդպիսի պնդումը գիտակցական կեղծիք էր, - այլ պետք է հանձնվեին կոմունալ, այսինքն խստորեն պատասխանատու պաշտոնյաների ձեռքը"...
... "Ազգի միասնությունը ո՛չ պետք թր ոչնչացվեր, այլ, ընդհակառակը, կազմակերպվեր կոմունալ կառուցվածքի միջոցով: Ազգի միասնությունը պետք է իրականություն դառնա՝ ոչնչացնելով այն պետական իշխանությունը, որն իրեն այդ միասնության մարմնացումներ ցույց տալիս, բայց ուզում էր ազգից անկախ, նրանից վեր կանգնած լիներ: Այդ պետական իշխանությունն իսկապես միմիայն մակաբուծական մի ուռուցքեր ազգի մարմնի վրա"... "Խնդիրն այն էր, որ կտրվեին դեն զցվեին հին կառավարական իշխանության զուտ ճշիչ օրգանները, իսկ իրեն՝ հասարակությունից բարձր կանգնած լինելու հավակնություն ունեցող այդ իշխանության օրինական ֆունկցիաները նրա ձեռքից խլվեին և հասարակության պատասխանատուպաշտոնյաների ձեռքը հանձնվեին":

Թե որքան չեն հասկացել, գուցե ավելի ճիշտ կլինի ասել՝ չեն կամեցել հասկանալ- արդի սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստները Մարքսի այս դատողությունները, ամենից լավ ցույց է տալիս ռենեգատ Բերնշտայնի "Սոցիալիզմի նախադրյալներն ու սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները" հերոստրատորեն հռչակվոր գիրքը: Մարքսի հենց այդ մեջբերված խասքերի առթիվ Բերնշտայնը գրում էր, թե այդ ծրագիրն "իր քաղաքական բովանդակությամբ բոլոր եական գծերով մեծագույն նմանություն է ցուցաբերում Պրուդոնի ֆեդերալիզմի հետ ... Չնայած Մարքսի ու մանր բուրժուա Պրուդոնի (Բերնշտայնը "մանր բուրժու" բառերը չակերտների մեջ է դնում, կարծելով, թե դրանով հեգնանք է արտահայտում) միջև եղած մյուս բոլոր տարաձայնությունների, այս կետերում նրանց մտածողության ընթացքն այնքան մոտ է միմյանց, որքան որքան հնարավոր է միայն: Իհարկե, զարունակում է Բերնշտայնը, մունիցիպալիստների նշանակությունն աճում է, "ինձ կասկածել է թվում, որ դեմոկրատիայի առաջին խնդիրն արդի պետությունների այդպիսի վերացումն է (AuflÖsung - բառացի՝ ցրում, լուծում) և նրանց կազմակերպության այնպիսի լիակատար փոփոխությունը (Umwandlung - հեղաշրջում), ինչպես պատկերացնում

են Մարքսն ու Պրուդոնը. Այն ՝ ազգային ժողովի կազմումը գավառական կամ մարզային ժողովների պատգամավորներից, որոնք իրենց հերթին պիտի կազմվեին կոմունաների պատգամավորներից, - այնպես որ միանգամայն պետք է վերանար ազգային ներկայացուցչությունների ամբողջ նախկին ձևը" (Բերնշտայն, "Նախադյալներ", 1899թ. գերմաներեն հրատարակություն, էջ 134 և 136):
Այս ուղղակի հրեծավոր ման է. Մարքսի հայացքները "պետական իշխանության - պարազիտի ոչնչացման" մասին շփոթել Պրուդոնի ֆեդերալիզմի հետ: Բայց այս պատահական չե, որովհետև օպորտունիստի մտքովն անգամ չի անցնում, որ Մարքսն այստեղ ամենևին ելֆեդերալիզմի մասին չի խոսում իբրև ցենտրալիզմի հակակշիռ, այլ խոսում է հին, բուրժուական երկրներում գոյություն ունեցող պետական մեքենան փշրելու մասին:
Օպորտունիստի մտքով անցում է միմիայն այն, ինչ որ նա տեսնում է իր շուրջը, քաղքենիական առորյականության ու "ռեֆորմիստական" լճացման շրջանում, այն է՝ միմիայն "մունիցիպալիտետները": Պրոլետարիատի հեղափոխության մասին օպորտունիստն մտածելն անգամ մոռացել է:
Այդ ծիծաղելի է: Բայց ուշագրավ է, որ այս կետի վերաբերմամբ Բերնշտայնի հետ չեին վիճաբանում: Շատերն են հերքել Բերնշտայնին, առանձնապես Պլեխանովը ռուսական, Կաուցկին եվրոպական գրականության մեջ, - բայց ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը **չեն** խոսել Մարքսի **այս** աղավաղման մասին, որ կատարել է Բերնշտայնը:
Օպորտունիստն այնքան մոռացել է հեղափոխականորեն մտածելև հեղափոխության մասին խորհրդակցել, որ նա "ֆեդերալիզմ" է վարագրում Մարքսին, շփոթելով նրան անարծիզմին հիմնադիր Պրուդոնի հետ: Իսկ ուղղափառ մարքսիստ լինել, հեղափոխական մարքսիզմի ուսմունքը պաշտպանել ցանկացող Կաուցկին ու Պլեխանովն այդ մասին լռում են: Այստեղ է թաքնված մարքսիզմի ու անարխիզմի միջև եղած տարբերությանը վերաբերող հայացքների այն ծայրահեղ գռեհկացման արմատներից մեկը, որ հատուկ է թե՛ կաուցկիականներին, թե՛ օպորտունիստներին, և որի մասին մենք դեռ կխոսենք:
Ֆեդերալիզմի հետք անգամ չկա Մարքսի՝ Կոմունայի փորձի վերաբերող մեջբերված դատողությունների մեջ: Մարքսն համաձայն է Պրուդոնին հենց այն բանում, ինչ որ չի տեսնում օպորտունիստ Բերնշտայնը: Մարքսը տարաձայնում է Պրուդոնի հետ հենց այն բանում, որի մեջ Բերնշտայնը նրանց նմանությունն է տեսնում:
Մարքսը Պրուդոնի հետ համայն է այն բանում, որ նրանք երկուսն էլարդի պետական մեքենան "ջարդուփշուր անելու" կաղմնակից են: Մարքսիզմի այս նմանությունն անարխիզմի հետ (թե՛ Պրուդոնի, թե՛ Բակունինի հետ) չեն ուզում տեսնելո՛չ օպորտունիստները, ո՛չ կաուցկիականները, որովհետև այդ կետում նրանք հեռացել են մարքսիզմից:
Մարքսն անհամաձայն է թե՛ Պրուդոնի, թե՛ Բակունինի հետ հենց ֆեդերալիզմի հարցում (էլ չեմ ասում պրոլետաչրիատի դիկտատուրայի մասին): Անարխիզմի մանրա-բուրժուական հայացքներից ֆեդերալիզմը բղխում է սկզբունքորեն: Մարքսը ցենտրալիստ է: Եվ նրա մեջբերված դատողությունների մեջ ոխ մի շեղում չկա ցենտրալիզմից: Միմիայն այն մարդիկ, որոնք լիեն քաղքենիական "սնահավատ հավատով" դեպի պետությունը, կարող են բուրժուական մեքենայի վչնչացումը ցենտրալիզմի ոչնչացում համարել:
էհ, իսկ եթե պրոլետարիատն ու ամենաչքավոր գյուղացիությունն իրենց ձեռքն առնեն պետական իշխանությունը, լիովին ազատորեն կազմակերպվեն ըստ կոմունաների և բոլոր կոմունաների գործողությունը **միացնեն** կապիտալը հարվածելու, երկաթուղիների, գործարանների, հողի և այլն մասնավոր սեփականությունն **ամբողջ**

ազգին, ամբողջ հասարակությանը հանձնելու համար, - մի՞թե այդ ցենտրալիզմ չի լինի, մի՞թե այդ ամենահետևողական դեմոկրատական ցենտրալիզմ չի լինի, և այլն էլ՝ պրոլետարական ցենտրալիզմ:
Բերնշտայնը պարզապես չի կարողանում գլխի ընկնել, որ հնարավոր է կամավոր ցենտրալիզմ, կոմունաների հոժարակամ միավորումն իբրև մի ազգ, պրոլետարական կոմունաների կամավոր ձուլումն բուրժուական տիրապետությունը և բուրժուական պետական մեքենան խորտակելու համար: Ինչպես ամեն մի ֆիլիստերի, Բերնշտայնին թվ ցենտրալիզմը պատկերանում է իբրև այնպիսի մի բան, որ կարելի է միմիայն վերևից, միմիայն չինովնիկության ու զինվորականության միջոցով փաթաթել ժողովրդի լվզին ու պահպանել:
Մարքսը դիտմամբ, կարծես կանխատեսելով իր հայացքերի աղավաղման հնարավորությունն, ընդգծում է, թե' գիտակցական կեղծիք են հանդիսանում Կոմունայի հասցեին այն մեղադրանքները, իբր թե Կոմունան ուզում էր ոչնչացնել ազգի միասնությունը, վերացնել կենտրոնական իշխանությունը: Մարքսը դիտմամբ գործ է ածում "կազմակերպել ազգի միասնությունն" արտահայտությունը, որպեսզի գիտակցական, դեմոկրատական, պրոլետարական ցենտրալիզմը հակադրի բուրժուական, զինվորական, չինովնիկական ցենտրալիզմին:
Բայց ... ամեն տեսակ խուլից վատթարը նա է, ով չի ուզում լսել: Իսկ հատկապես արդի սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստները լսել չեն ուզում պետական իշխանությունը ոչնչացնելու, պարազիտը կտրել-դեն գցելու մասին:

5. ՊԱՐԱԶԻՏԻ, ԱՅՆ Է՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Մենք արդեն մեջ բերեցինք Մարքսի համապատասխան խոսքերը և պետք է լրացնենք դրանք:
... "Նոր պատմական ստեղծագործության ճակատագիրն այն է, - գրում էր Մարքսը, որ այն համարում են հասարակական կյանքի ավելի հին ու մինչև անգամ իրենց ժամանակն անցկացրաց ձևերի ընդորինակումը, որոնց փոքրիշատ նման են նոր հիմնարկները: Այդպես էլ այս նոր Կոմունան, որը կոտրում է (bricht - ջարդում է) արդի պետական իշխանությունը, դիտվում էր իբրև միջնադարյան կոմունաների վերակենդանացում, ...իբրև մանր պետությունների միություն (Մոնտեսքյո, Ժիրոնդիստներ), ... իբրև ծայրահեղ կենտրոնացման դեմ մղվող հին կռվի չափազանցված ձևը"...
... "Կոմունալ կառուցվածքը հասարակական մարմնին կվերադարձներ այն բոլոր ուժերը, որոնք մինչև այժմ լափում էին այդ պարազիտական ուռուցք "պետությունը", որը սնվում է հասարակության հաշվին և կասեցնում նրա ազատ շարժումը: Միայն այս գործով նա արդեն նպաստած կլիներ Ֆրանսիայի վերածնունդը"...
... "Կոմունալ կառուցվածքը գյուղական արտադրողներին կենթարկեր յուրաքանչյուր մարզի գլխավոր քաղաքների հոգևոր ղեկավարությանը և այնտեղ նրանց համար կապահովեր, ի դեմս քաղաքային բանվորների, իրենց շահերի բնական ներկայացուցիչներին: Հենց Կոմունայի գոյությունն իսկ իր հետ, իբրև ինքնըստինքյան հասկանալի մի բան, տեղական ինքնավարություն էր բերում, բայց այլևս ոչ իբրև հակակշիռ պետական իշխանության, որն այժմ ավելորդ է դանում"...

"" Պետական իշխանության ոչնչացումն", որ "պարազիտական ուռուցք էր", նրա "կտրել-դեն նետելը", "նրա խորտակումը", "պետական իշխանությունն այժմ ավելորդ է դառնում", - ահա թե ինչ արտահայտություններով էր խոսում Մարքսը պետության մասին, գնահատելով ու վերլուծման ենթարկելով Կոմունայի փորձը:
Այս ամենը գրված է գրեթե կես դար առաջ, և հիմա, կարծես, պեխումներ պետք է կատարել, որպեսզի չաղավաղված մարքսիզմը լայն մասսաների գիտակցությանը

հասցնենք: Այն եզրակացությունները, որ արված են Մարքսի ապրած մեծ հեղափոխության վրա կատարած դիտողություններից, մոռացել են հենց այն ժամանակ, երբ հասել է պրոլետարիատի հետագա մեծ հեղափոխությունների ժամանակը"

*... "Մեկնաբանությունների այն բազմազանությունը, որ առաջ է բերել Կոմունան, և շահերի այն բազմազանությունը, որոնք իրենց արտահայտությունը գտան նրա մեջ, ապացուցում են, որ նա վերին աստիճանի ճկուն քաղաքական մի ձև թր, մինչդեռ կառավարության բոլոր նախկին ձևերը, ըստ իրեն էության, ճնշման ձևեր էին: Նրա իսկական գաղտնիքն ահա թե ինչ էր. Նա, ըստ էության, **բանվոր դասակարգի կառավարություն էր**, արտադրող դասակարգի կռվի արդյունքը յուրացնող դասակարգի դեմ, վերջապես հայտնագործված այն քաղաքական ձևը, որի ժամանակ կարող էր իրականանալ աշխատանքի տնտեսական ազատագրությունը"...*

Ուտոպիստներն զբաղվում էին այն քաղաքական ձևերի "հայտնագործումով", որոնց ժամանակ պետք է տեղի ունենար հասարակության սոցիալիստական վերակառուցումը: Անարխիստներն իրենցից վանում էին քաղաքական ձևերի հարցն ընթանրապես: Արդի սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստները պարլամենտական դեմոկրատական պետության բուրժուական քաղաքական ձևերն ընդունել են իբրև մի սահման, որից այն կողմն անցնել չի կարելի, և այդ "նմուշի" առաջ աղոթելով՝ կոտրել են իրենց ճակատը, անարխիզմ են հայտարարել այդ ձևերը **ջարդուփշուր անելու** ամեն մի ձգտում:
Սոցիալիզմի ու քաղաքական պայքարի ամբողջ պատմությունից Մարքսն այն եզրակացությունը հանեց, որ պետությունը ետք է անհետանա, որ որ նրա անհետանալու անցնելու ձևը (պետությունից ոչ-պետության անցնելը) պիտի լինի "իբրև տիրապետող դասակարգ կազմակերպված պրոլետարիատը": Բայց Մարքսը չեր ձեռնարկում **հայտնագործելու** այդ ապագայի քաղաքական **ձևերը**: Նա սահմանափակվում էր ֆրանսիական պատմության ճշգրիտ դիտողությամբ, նրա վերլուծմամբ ու այն եզրակացությամբ, որին բերում էր 1851թ., այն է՝ թե գործը հասնում է բուրժուական պետական մեքենան **խորտակելուն**:
Եվ երբ պրոլետարական մասսայական հեղափոխական շարժումը բռնկվեց, Մարքսը, չնայած այդ շարժման անհաջողության, չնայած նրա կարճատևության ու ակնբախ թուկության, սկսեց ուսումնասիրել, թե նա ինչ ձևեր է **հայտնագործել**:
Կոմունան՝պրոլետարական հեղափոխության "վերջապես հայտնագործած" այն ձևբ է, որի ժամանակ կարող է իրականանալ աշխատանքի տնտեսական ազատագրությունը:
Կոմունան պրոլետարական հեղափոխության առաջին փորձն է՝**ջարդուփշուր անելու** բուրժուական պետական մեքենան և "վերջապես հայտնագործված" քաղաքական այն ձևն է, որորվ կարելի է ու պետք է **փոխարինել** ջարդուփշուր արվածը:
Հետագա շարադրանքի ընթացքում մենք կտեսնենք, որ 1905 ու 1917 է.է. ռուսական հեղափոխությունները, այլ պարագաներում, այլ պայմանների առկայությամբ, շարունակում են Կոմունայի գործը և հաստատում Մարքսի հանճարեղ վերլուծությունը:

IV. ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ԷՆԳԵԼՍԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոմունայի փորձի նշանակության հարցի առթիվ Մարքսը տվել է այն, ինչ որ հիմնական է: Էնգելսը շատ անգամ շոշափել է նույն թեման, պարզաբաբելով Մարքսի վերլուծություններն ու եզրակացությունները, երբեմն այնպիսի ուժով ու ցցունությամբ է լուսաբանել հարցի **մյուս** կողմերը, որ այդ պարզաբանությունների վրա անհրաժեշտ է առանձին կանգ առնել:

1. "ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԸ"

Բնակարանային հարցին նվիրված իր երկրում (1872թ.) Էնգեսլն արդեն հաշվի են առնում Կոմունայի փորձը, միքանի անգամ կանգ առնելով այն խնդիրների վրա, որ ունի հեղափոխությունը պետության նկատմամբ: Հետաքրքրական է, որ կոնկրետ թեմայով ակներևաբար պարզվում են, մի կողմից, պրոլետարական պետության նմանության գծերն այժմյան պետության հետ, - գծեր, որոնք երկու դեպքում էլիիմք են տալիս խոսելու պետության մասին, - իսկ մյուս կողմից, տարբերության գծերը կամ անցումը դեպի պետության ոչնչացումը:

*"Ի՞նչպես լուծել բնակարանային հարցը: Արդի հասարակության մեջ այդ ճիշտ այնպես է լուծվում, ինչպես ամեն մի այլ հասարակական հարց, - պահանջի ու առաջարկի տնտեսական աստիճանական հավասարեցումով, իսկ այդ այնպիսի մի լուծում է, որ ինքը շարունակ նորից է ծնում հարցը, այսինքն՝ ոչ մի լուծում չի տալիս: Թե ինչպես կլուծի այդ հարցը սոցիալական հեղափոխությունը, այդ կաղված է ո"չ միայն ժամանակի ու տեղի պարագաներից, այլ կապված է նաև շատ ավելի հեռու գնացող հարցերի հետ, որոնց մեջ կարըորագույններից մեկն է- քաղաքի և գյուղի միջև եղած հակադրությունը ոչնչացնելու հարցը: Քանի որ մենք ապագա հասարակության կառուցման ուտոպիական սիսեմներ հորինելով չենք զբաղվում, դրա վրա կանգ առնելն ավելի քան պարապ գործ կլիներ: Մի բան անկասկած է, - այդ այն է, որ արդեն այժմ մեծ քաղաքներում բավականաչափ բնակելի շենքեր կան և անմիջապես կարելի է բավարարել բնակարանային իրական **կարիքը**, եթե այդ շենքերը խելացի կերպով օգտագործվեն: Հասկանալի է, այդ կարելի է իրականացնել միմիայն այժմյան տերերին սեփականազրկելու միջոցով և այդ տներում անտուն բանվորներին կամ չափից ավելի գերլցված բնակարաններում ապրող բանվորներին բնակեցնելով: Եվ հենց որ պրոլետարիատը քաղաքական իշխանությունը նվաճի, այդպիսի միջոցաառումը, որ հասարակական օգտի շահերից է բղխում, նույնքան հեշտ իրագործելի կլինի, որքն արդի պետության ձեռքով կատարվող մյուս սեփականազրկումներն ու բնակարանների գրավումը" (1887թ. գերմ. հրատարակ, էջ 22):*

Այստեղ չի քննարկվում պետական իշխանության ձևի փոփոխությունը, այլ նկատի է առնվում միմիայն նրա գործունեության բովանդակությունը: Այժմյան պետության կարգադրությամբ էլ սեփականազրկումներ ու բնակարանների գրավումներ են կատարվում: Պրոլետարական պետությունն՝ել, գործի ձևական տեսակետից, "կկարգադրի" գրավել բնակարաններն ու էքսպրոպրիացիայի ենթարկել տները: Բայց

պարզ է, որ հին գործադիր ապարատը, բուրժուազիայի հետ կապված չինովնիկությունը պարզապես անպետք կլիներ պրոլետարական պետության կարգադրությունները կենսագործելու համար:

… "Անհրաժեշտ է հավաստել, որ աշխատավոր ժողովրդի կողմից աշխատանքի բոլոր գործիքներին, ամբողջ արդյունաբերությանը փաստորեն տիրանալը՝ պրուդոնիստական "հետգնման" ուղղակի հակադրություն է հանդիսանում: Վերջին դեպքում՝ առանձին բանվորը բնակարանի, գյուղացիական հողամասի, աշխատանքի գործիքի սեփականատեր է դառնում. Իսկ առաջին դեպքում՝ տների, գործարանների ու աշխատանքի գործիքների հավաքական սեթականատերը մնում է աշխատավոր ժողովուրդը": Այդ տներից, գործարաններից և այլն օգտվել, գոնե անցման շրջանում, հազիվ թե թույլատրվի անհատներին ու ընկերություններին առանց ծախքերը վճարելու: Ճիշտ այդպես էլ հողային սեփականության ոչնչացումը րի ենթադրում հողային ռենտայի ոչվացումը, այլ նրա հանձնումը հասարակությանը, թեպետև փոխակերպված ձևով: Հետևաբար, աշխատավոր ժողովրդի կողմից աշխատանքի բոլոր գործիքներին փաստապես տեր դառնալն ամենևին չի բացառում, որ պահանվի վարձով վերցնելն ու վարձով տալը" (էջ 22):

Այս դատողության մեջ շոշափված հարցը, այն է՝ պետության մահացման տնտեսական հիմունքները մենք կքննարկենք հետևյալ գլխում: Էնգելսը չափազանց զգուշ է արտահայտվում, ասելով, թե պրոլետարական պետությունը "հազիվ թե" առանց վճարի բնակարաններ բաժանի, " գոնե անցման շրջանում": Ամբողջ ժողովրդին պատկանող բնակարաններն առանձին ընտանիքներին վարձով տալը ենթադրում է թե' այդ վարձի գանձում, թե' որոշ վերահսկողություն, թե' բնակարանների բաշխման այս կամ այն նորմայի մշակում: Այդ բոլորը պահանջում է պետության որոշ ձևը, բայց ամենևին չի պահանջում առանձին ռազմական ու բյուրոկրատական ապարատ՝ պաշտոնական անձերի հատուկ արտոնյալ գրությամբ: Իսկ իրերի այնպիսի գրության անցնելը, երբ կարելի կլնի բնակարանները ձրի բաժանել, կապված է պետության լիակատար "մահացման" հետ:
Խոսելով յան մասին, բլանկիստները Կոմունայից հետո ու նրա փորձի ազդեցությամբ անցան մարքսիզմի սկզբունքային դիրքին, Էնգելսն անցողակի հետևյալ կերպով է ձևակեպում այդ դիրքը.

… "Պրոետարիատի քաղաքական գործողության ու նրա դիկտատուրայի անհրաժեշտությունը, իբրև անցում դեպի դասակարգերի, իսկ նրանց հետ միասին նաև պետության վերացումը…(էջ 55):

Տառացի քննադատության ինչ-որ սիրահարներ կամ "մարքսիզմը ոչնչացնող" բուրժուական հեղինակներ, թերևս, հակասություն կհամարեն այն, որ այստեղ, "Անտիդյուրինգից" վերը մեջբերված հատվածում, **ընդունվում է** "պետության վերացումը", բայց այդպիսի բանաձևը ժխտվում ՝ իբրև անարխիստական: Զարմանալի չեր լինի, եթե օպորտունիստները Էնգելսին էլ "անարխիստների" շարքը դասեին, - այժմ ավելի ու ավելի է տարածվում ինտերնացիոնալիստներին անարխիզմի մեջ մեղադրելը սոցիալ-շովինիստների կողմից:
Որ դասակարգերի վերացման հետ միասին տեղի կունենա նաև պետության վերացումը, այդ բանը ուսուցել է մարքսիզմը: "Պետության մահացման" մասին "Անտի-Դյուրինգում" գտնված հանրածանոթ հատվածը անարխիստներին մեղադրում է ո'չ թե սոսկ այն բանում, որ նրանք պետության վերացման կողմնակից են, այլ նրանում, որ նրանք քարոզում են, թե իբր հնարավոր է վերացնել պետությունը "այսօրվանից մինչև վաղը":
Նկատի առնելով այն, որ ներկայումս տիրապետող "սոցիալ-դեմոկրատական" դոկտրինան բոլորովին աղավաղում է մարքսիզմի վերաբերմունքը դեպի

անարխիզմը՝ պետության ոչնչացման հարցի վերաբերմամբ, առանձնապես օգտակար է հիշեցնել Մարքսի ու Էնգելսի մի բանավեճը անարխիստների հետ:

2. ԲԱՆԱՎԵՃ ԱՆԱՐԽԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ

Այդ բանավեճը տեղի է ունեցել 1873թ.: Մարքսն ու Էնգելսը հոդվածներ էին տվել իտալական սոցիալիստական ժողովածուին պրուդոնիստների, " ավտոնոմիստների" կամ "անտիավտորիտարիստների" դեմ և միմիայն 1913թ. այդ հոդվածները գերմաներեն թարգմանությամբ լույս տեսան "Neue Zeit" -ում[1]:

1 (Neue Zeit" - գերմանական սոցիալ-դեմակրատիայի թեորիական օրգանը)

... "Եթե բանվոր դասակարգի քաղաքական պայքարը, - գրում էր Մարքսը, - ծաղրելով անարխիստներին ու քաղաքականության ժխտումը նրանց կողմից, - հեղափոխական ձևեր է ընդունում, եթե բանվորները բուրժուազիայի դիկտատուրայի տեղն իրենց հեղափոխական դիկտատուրան են դնում, ապա նրանք սկզբունքների անարդման մի տսկալի ոճիր են կատարում, որովհետև օրվա իրենց խղճուկ, կոպիտ պահանջներին բավարարություն տալու համար, բանվորները պետությանը հեղափոխական ու անցողիկ ձև են տալիս, փոխանակ զենքը վայր դնելու ու պետությունը վերացնելու"... (Neue Zeit", 1913-1914, 32-որ տարի, հատոր I, էջ):

Ահա թե պետության ինչպիսի "վերացման" դեմ էր ծառանում Մարքսը, հերքելով անրախիստներին: Նա բոլորովին այն բանի դեմ չեր ելնում, որ պետությունն անհետանում է դասակարգերի անհետացման հետ միասին կամ կվերացվի նարց վերացման հետ միասին, այլ նա դեմ էր, վար բանվորները հրաժարվեն զենք գործածելուց, կազմակերպված բռնությունից, **այսինքն այնպիսի պետությունից**, որ պետք է ծառայի "բուրժուազիայի դիմադրությունը խորտակելու" նպատակին:
Մարքսը դիտմամբ ընդգծում է պրոլետարիատի համար անհրաժեշտ պետության "հաղափոխական ու **անցողիկ** ձևը", որպեսզի չաղավաղեն անարխիզմի դեմ նրա մղած պայքարի իսկական իմաստը: Պրոլետարիատին պետությունը պետք է միմիայն ժամանակավորապես: Մեր ու անարխիստների միջև ամենևին տարաձայնություններ չկա պետության վերացման հարցի մասին, որչափ խնդիրը վերաբերվում է այդ վերացման իբրև **նպատակի**: Մենք պնդում ենք, որ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ժամանակավորապես օգտվել պետական իշխանության զենքերից, միջոցներից, գործելակերպից՝ շահագործողների դեմ, ինչպես որ դասակարգերի ոչնչացման համար էլ անհրաածեշտ է ճնշված դասակարգի ժամանակավոր դիկտատուրան: Անարխիստների դեմ Մարքսը հարցերը դնում է ամենակտրուկ ու ամենապարզ ձևով. Արդյոք բանվորները "ցա՞ծ պիտի դնեն զենքը" կապիտալիստների լուծը թոթափելիս, թ՞ե այն օգտագործեն կապիտալիստների դեմ, որպեսզի նրանց դիմադրությունը խորտակեն: Իսկ մի դասակարգի կողմից մյուս դասակարգի դեմ զենքը պարբերաբար գործելն ի՞նչ բան է, եթե ոչ պետության "անցողիկ ձևը":
Թող ամեն մի սոցիալ-դեմոկրատ հարց տա իրեն. արդյոք **այդպ՞ես** է դրել ինքը պետության հարցը անարխիստների դեմ բանակռիվ մղելիս. արդյոք **այդպ՞ես** է դրել հարցը II Ինտերնացիոնալի պաշտոնական սոցիալիստական կուսակցությունների ահագին մեծամասնությունը:
Էնգելսը շատ ավելի մանրամասն ու հանրամատչելի կերպով է շարադրում միևնույն մտքերը: Ամենից առաջ նա ծաղրում է մտքերի շփոթությունը պրուդոնիստների մոտ, որոնք "անտիավտորիտաիստ" էին անվանում, այսինքն՝ ժխտում էին ամեն տեսակ

հեղինակություն, ամեն տեսակ հպատակում, ամեն տեսակ իշխանություն: Վերցրե'ք գործարանը, երկաթուղին, նավը բաց ծովում, - ասում է Էնգելսը, - մի՞էե պարզ չե, որ առանց որոշ հպատակման, հետևաբար, առանց որոշ հեղինակության կամ իշխանության չի կարող գործել և վչ մեկն այդ բարդ տեխնիկական ձեռնարկություններից, որոնք հիմնված են մեքենաների գործողության ու բազմաթիվ անձերի պլանաչափ ազատուաշխատակցության վրա:

*… "Եթե ես, - գրում է Էնգելսը, - ամենակատաղի անտիավտորիտարիստների դեմ առաջ եմ մղում այս փաստարկները, ապա նրանք կարող են ինձ միայն հետևյալ պատասխանը տա.լ. Այ, այդ ճիշտ , բայց խոսքն այստեղ այն ավտորիտետի մասին չեմ որով մենք օժտում ենք մեր պատգամավորներին, **այլ որոշ հանձնարարության մասին**": Այդ մարդիկ կարծում են, թե մենք կարող ենք որևե փոխել, եթե փոխենք նրա անունը"…*

Այս կերպով ցույց տալով, որ ավտորիտետն ու ավտոնոմիան հարաբերական հասկացողություններ են, որ նրանց գործադրության ասպարեզը փոխվում էհասարակական զարգացման տարբեր փուլերի հետ, որ անհեթեթություն է նրանց բացառձակ համարելը, ավելացնելով, որ մեքենաների գործադրության ու խոշոր արտադրության մարզը շարունակ ընդարձակվում է, Էնգելսն ավտորիտետին վերաբերվող ընդհանուր դատողություններից անցնում է պետության հարցին:

…"Եթե ավտոնոմիստները, - գրում է նա, - կամենային միայն այն ասել, թե ապագայի սոցիալական կազմակերպությունը թույլ է տալիս ավտորիտետ միմիայն այն սահմաններում, որոնք անխուսափելիորեն թելադրվում են արտադրության պայմաններով, այդ դեպքում նրանց հետ դեռ կարելի կլիներ ընդհանուր լեզու գտնել: Բայց նրանք կույր են այն բոլոր փաստերի նկատմամբ, որոնք որոնք անհրաժեշտ են դարձնում ավտորիտետը, և բուռն կերպով պայքարում են բառի դեմ:
Ինչու՞անտիավտորիտարիստները չեն սահմանափակվում նրանով, որ ախմկում են քաղաքական ավտորիտետի դեմ, պետության դեմ: Բոլոր սոցիալիստները համաձայն են, որ պետությունը, իսկ նրա հետ միասին քաղաքական ավտորիտետը, կանհետանա ապագա սոցիալական հեղափոխության հետևանքով. այսինքն՝ հասարակական ֆունկցիաները կկորցնեն իրենց քաղաքական բնույթը և կդառնան սոցիալական շահերի վրա հսկող հասարակական վարչական ֆունկցիաներ: Բայց անտիավտորիտարիստները պահանջում են, որպեսզի քաղաքական պետությունը վերացվի մի հարվածով, վերացվի ավելի վաղ, քան այն սոցիալական հարաբերությունները, որոնք ծնել են նրան: Նրանք պահանջում են, որպեսզի սոցիալական հեղափոխության առաջին գործողությունը ավտորիտետի վերացումը լինի:
"Արդյոք երբևիցե հեղափոխություն տեսե՞լ են այդ պարոնները: Անտարակույս հեղափոխությունն ամենաավտորիտար բանն է, ինչպիսին հնարավոր է: Հեղափոխությունը մի գործողություն է, ինչպիսին միայն հնարավոր է, որով բնակչության մի ամսն իր կամքը մյուսի վչին է փաթաթում՝ հրացանների, սվինների, թնդանոթների, այսինքն չափազանց ավտորիտար միջոցների օգնությամբ: Եվ հաղթող կուսակցությունն անհրաժեշտաբար հարկադրված է լինում պահպանել իր տիրապետությունն այն միջոցով, որ ներշնչում է ռեակցիոներներին նրա դեմքը: Եթե Փարիզի Կոմունան զինվա ժողովրդի հեղինակության վրա չհենվեր ընդդեմ բուրժուազիայի, մի՞թե նա կարող էր մի օրվանից ավելի կյանք ունենար:Իրավունք չունե՞նք մենք, ընդհակառակը, կշտամբելու Կոմունային այն բանի համար, որ նա չափազանց քիչէր օգտվում այդ հեղինակությունից: Այդպես ուրեմն՝ երկուսից մեկը: Կա'մ ավտորիտարիստներն իրենք էլ չգիտեն, թե ինչ են ասում, և այդ դեպքում նրանք լոկ խառնաշփոթություն են սերմանում: Կա'մ նրանք գիտեն այդ, և այդ դեպքում նրանք դավաճանում ենպրոլետարիատի գործին: Երկու դեպքում էլ նրանք ծառայում են միմիայն ռեակցիային: (էջ 39):

Այս դատողության մեջ շոշափված են այն հարցերը, որոնք պետք է քննարկվեն պետության մահացման ժամանակ քաղաքականության և էկոնոմիկայի ունեցած հարաբերության թեմայի կապակցությամբ (այդ թեմային նվիրված է հետևյալ գլուխը): Դրանք են՝ հասարակական ֆունկցիաները քաղաքական ֆունկցիաներից հասարակ վարչական ֆունկցիաներ դառնալու և "քաղաքական պետության" հարցերը: Այս

վերջին արտահայտությունը, որ առանձնապես կարող է թյուրիմացության առաջ բերել, մատնանշում է պետության մահացման պրոցեսը. մահացող պետությունը նրա մահացման որոշ աստիճանի ժամանակ կարելի է ոչ-քաղաքական պետություն անվանել:
Էնգելսի այս դատողության մեջ ամենից ավելի ուշագրավը դարձյալ հարցադրումն է անարխիստների դեմ: Այն սոցիալ-դեմոկրատները, որոնք ուզում են էնֆելսի աշակերտները լինեն, 1873թ. սկսած միլիոն անգամ վիճել են անարխիստների դեմ, բայց վիճել են հատկապես **ոչ** այնպես, ինչպես կարելի է ու պետք է վիճեն մարսիստները: Անարխիստների պատկերացումը պետության վերացման մասին խառնաշփոթ է և **ոչ-հեղափոխական**, - ահա թե ինչպես էր դնում հարցը էնգելսը: Հենց հեղափոխությունն է իր ծագման ու զարգացման ընթացքով, բռնության, ավտորիտետի, իշխանության, պետության վերաբերյալ ունեցած ունեցած իր առանձնահատուկ խնդիրներով, որ խեն ուզում տեսնել անարխիստները:
Արդի սոցիալ-դեմոկրատների մոտ անարխիզմի սովորական քննադատությունը հանգել է ամենազուտ քաղքենիական գռեհկության. "մենք իբր ընդունում ենք պետությունը իսկ անարխիստները չե՛ն ընդունում": Հասկանալի է, որ այդպիսի գռեհկությունը չի կարող չվանել փոքրիշատե մտածող ու հեղափոխական բանվորներին: Էնգելսն ուրիշ բան է ասում. նա ընդգծում է, որ բոլոր սոցիալիստներն ընդունում են պետության անհետացումն իբրև սոցիալիստական հեղափոխության հետևանք: Այնուհետև նա կոնկրետ կերպով դնում է հեղափոխության հարցը, հատկապես այն հարցը, որը սովորաբար սոցիալ-դեմոկրատները օպորտունիզմից դրդված, շրջանցում են, թոխնելով, որ այդ հարցն այսպես ասած "մշակեն" բացառապես անարխիստները: Եվ այս հարցը դնելով, էնգելսը ցուլին ուղղակի եղջյուրներից է բռնում. արդյոք Կոմունան չպե՞տքե **ավելի շատ օգտվեր պետության**, այսինքն՝ զինված, իբրև տիրապետող դասակարգ կազմակերպված պրոլետարիատի **հեղափախական** իշխանությունից:
Տիրող պաշտոնական սոցիալ-դեմոկրատիան հեղափոխության մեջ պրոլետարիատի ունեցած կոնկրետ խնդիրների հարցից իր գլուխը սովորաբար ազատում էր կա'մ սոսկ ֆիլիստերի ծաղրանքով, կա'մ, լավագույն դեպքում՝ խուսափողական սոփեստական "բանը բան ցույց կտա" ֆրազով: Եվ անարխիստներն իրավունք էին ստանում խոսելու այդպիսի սոցիալ-դեմոկրատիայի դեմ, թե նա դավաճանում է բանվորներին հեղափոխական դաստիարակություն տալու իր խնդրին: Էնգելս օգտագործում է վերջին պրոլետարական հեղափոխության փորձը հենց այն բանի համար, ար ամենականկրետ կերպով ուսումնասիրի, թե պրոլետարիատն ին'չ ու ի'չպես պիտի անի թե' բանկերի և թե' պետության վերաբերյալ:

3. ՆԱՄԱԿ ԲԵԲԵԼԻՆ

Մարքսի ու էնգելսի՝ պետության հարցին նվիրված երկերում ամենաուշագրավ դատողություններից մեկը, եթե ոչ ամենաուշագրովը, հետևյալ հատվածն է այն նամակից, որն ուղղել է էնգելսը Բեբելին 1875թ. մարտի 18-28-ին: Այս նամակը, - փակագծերի մեջ նկատենք, - տպագրել է, որքան մենք գիտենք, առաջին անգամ Բեբելն իր հիշողությունների ("Իմ կյանգից") երկրորդ հատորում, որ լույս է տեսել 1911թ., այսինքն՝ գրվելուց և ուղարկվելուց 36 տարի անցնելուց հետո:

Քննադատելով Գոթայի ծրագրի հենց այն նախագիծը, որ քննադատել է նաև Մարքսը Բրակկեին ուղղած իր հռչակավոր նամակում, և շոշափելով հատկապես պետության հարցը, էնգելսը գրում էր Բեբելին հետևյալը.

*… "Ազգը ժողովրդական պետությունն ազատ պետության փոխարկվեց: Այդ բառերի քերականական իմաստի համաձայն՝ ազատ պետությունն այնպիսի պետություն է, որի մեջ պետությունն ազատ է իր քաղաքացիների վերաբերմաբ, այսինք բռնակալական կառավարություն ունեցող պետություն է: Պետք էր մի կողմ նետելայդ ամբողջ շաղակրատությունը պետության մասին, մանավանդ Կոմունայից հետո, որն արդեն բուն իմաստով պետություն չեր: Անարխիստները "ժողովրդական պետությամբ" ավելի քան բավականաչափ ծակել են մեր աչքերը, թեև արդեն Մարքսի երկը Պրուդոնի դեմ, և ապա "Կոմունիստական մանիֆեստն" ուղղակի ասում են, թե սոցիալիստական հասարակարգ մտցնելու հետ պետությունն ինքն իրեն լուծվում (sich auflost) և անհետանում է: Որովհետև պետությունն միմիայն մի անցողիկ հիմնարկություն է, որից հարկ է լինում օգտվել պայքարի մեջ, հեղափոխության ընթացքում՝ իր հակառակորդներին բռնությամբ ճնշելու համար, ուստի ազատ ժողովրդական պետության մասին խոսելը զուտ անմտություն է. քանի պրոլետարիատը դեռ **կարիք ունի** պետության, նա ազատության ծահերի համար չե, որ զգում է նրա կարիքը, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ երբ հնարավոր է դառնում ազատության մասին խոսել, այն ժամանակ պետությունն, իբրև այդպիսին, դադարում է գոյություն ունենալուց: Այդ պատճառով ել մենք կառաջարկեինք ամենուրեք **պետություն** բառի տեղ դնել "համայնք" (Gemeinwesen) բառը, գեղեցիկ հին գերմաներեն մի բառ, որ համապատասխանում է ֆրանսերեն "կոմունա" բառին" (գերմաներեն բնագիր, էջ 332):*

Պետք է նկատի ունենալ, որ այս նամակը վերաբերվում է կուսակցական այն ծրագրին, որ Մարքսը քննադատել էր այս նամակից ընդամենը միքանի շաբաթ հետո թվագրված իր նամակում (Մարքսի նամակը գրված է 1875թ. մայիսի 5-ին), և որ էնգելս այն ժամանակ Մարքսի հետ միասին Լոնդոնում էր ապրում: Ուստի վերջին ֆրազում "մենք" ասելով, էնգելսն, անկասկած, իր ու մարքսի անունից է առաջարկում բանվորական կուսակցության առաջնորդին՝ **ծրագրից դուրս գցել** "պետություն" բառը և փոխարինել այն "**համայնք**" բառով:
Ի՜նչպիսի ոռնոց կբարձրացնեին "անարխիզմի" մասին՝ օպորտունիստներին հարմարեցնելու համար կեղծած այժմյան "մարքսիզմի" պարագլուխները, եթե նրանց առաջարկվեր ծրագրի այդպիսի՜ ուղղում:
Թող ոռնա: Դրա համար նրանց կգավի բուրժուազիան:
Իսկ մենք մեր գործը կանենք: Մենք կուսակցության ծրագրի վերաքննության ժամանակ անպայման պետք է նկատի ունենալ էնգելսի ու Մարքսի խորհուրդը, որպեսզի ճշմարտությանն ավելի մոտի լինենք, որպեսզի վերականգնենք մարքսիզմը, մաքրելով այն աղավաղումներից, որպեսզի ավելի ճիշտ ուղղություն տանք իր ազատագրման համար բանվոր դասակարգի մղած պայքարին: Բոլշևիկների մեջ, անշուշտ, էնգելսի ու Մարքսի խորհրդի հակառակորդներ չեն գտնվի: Դժվարություն առաջ կգա, թերևս, միմիայն տերմինի հարցում: Գերմաներեն երկու բառ կա, որոնք "համայնք" են նշանակում. էնգելսը դրանցից ընտրել է այն բառը, որը **չի** նշանակում առանձին, համայնքների համակարգը: Ռուսերեն այդպիսի բառ չկա, և գուցե հարկ լինի ընտրել ֆրանսերեն "կոմունա" բառը, թեև այդ էլ իր անհարմարություններն ունի:
"Կոմունան արդեն բուն իմաստով պետություն չեր" - ահա, տեսականորեն, էնգելսի կարևորագույն պնդումը: Վերևում շարադրածից հետո՝ այդ պնդումը միանգամայն հասկանալի է: Կոմունան **դադարում էր** պետություն լինելուց, որչափով նա հարկադրած էր ճմշելուո'չ թե բնակչության մեծամասնությանը, այլ փոքրամասնությանը (շահագործողներին). բուրժուական պետական մեքենան նա ջարդուփշուր արեց. ճնշման **հատուկ** ուժի տեղ ասպարեզ էր մղվում բնակչությունն ինքը: Այս բոլորը շեղումներ են պետությունից՝ այդ բառի բուն իմաստով: Եվ եթե

Կոմունան ամրապնդվեր, ապա նրա մեջ իրենք իրենց "կմահանային" պետության հետքերը, նա կարիք չեր ունենա "վերացնելու" սրա հիմնարկները. վերջիններս կդադարեին գործելուց, երբ ոյլևս ոչինչ չեին ունենա անելու:
"Անարխիստները մեր աչքերը ծակում են ժաղավրդական պետությամբ". այս ասելով, էնգելսն ամենից առաջ նկատի ունի Բակունինին ու նրա հարձակումները գերմանական սոցիալ-դեմոկրատների պայքարն անարխիստների վրա: նգելսն այդ հարձակումները ճիշտ է համարում **այնչափով**, որչափով "ժողովրդական պետությունը" նույնպիսի մի անմտություն ու նույնպիսի մի շեղումն է սոցիալիզմից, ինչպես և "ազատ ժողովրդական պետությունը": Էնգելսն աշխատում է շտկել գերմանական սոցիալ-դեմոկրատների պայքարը անարխիստների դեմ, այդ պայքարը սկզբունքորեն ճիշտ դարձնել, այն ազատել "պետության" վերաբերյալ օպորտունիստական նախապաշարումներից: Ավաղ՝: Էնգելսի նամակև 36 տարի ծացկոցի տակ մնաց: Մենք կտեսնենք ներքևում, որ այդ նամակի հրատարակումից հետո էլ Կաուցկին համառորեն պնդում է, ըստ էության, հենց հենց նույն սխալները, որոնց զգուշացրել էր Էնգելսը:
Բեբելն Էնգելսին պատասխանեց 1875թ. սեպտեմբերի 21-ին գրած նամակով, ոչի մեջ, նա իմիջի այլոց, գրում էր, թե "լիովին համաձայն է" Էնգելսի դատողությանը խրագրի նախագծի մասին, և թե ինքը կշտամբել է Լիբկնեխտին զիջողականության համար (Բեբելի հիշողությունների գերմ. հրատարակություն, II հատոր, էջ 304): Բայց եթե վերցնենք Բեբելի "Մեր նպատակները" բրոշյուրը, այնտեղ բոլորովին անճիշտ դատողությունների կհանդիպենք պետության մասին.

*"Պետությունը պետք է **դասակարգային տիրապետության** վրա հիմնված պետությունից **ժողովրդական պետության** փոխարկվի" ("Unzere Ziele" , գերմ. հրատ. 1886, էջ 14):*

Այսպեսե տպված Բեբելի բրոշյուրի **իններորդ** (իններո՛րդ) հրատարակության մեջ: Զարմանալի չե, որ պետության վերաբերյալ օպորտունիստական դատողություներն այդչափ համառորեն կրկնելը ներծծվել է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, մանավանդ, երբ Էնգելսի հեղափոխական բացատրությունները ծածկոցի տակ էին դրվում, իսկ ամբողջ կենսապայմանները երկար ժամանակով "մոռանալ էին տալիս" հեղափոխությունը:

4. ԷՐՖՈՒՐՏԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարքսիզմի ուսմոընքը պետության մասին քննության առնելիս չի կարելի մի կողմ թողնել էրֆուրտիծրագրի այն քննադատությունը, որ Էնգելսն ուղարկելի Կաուցկուն 1891թ. հունիսի 29-ին և հրատարակվել է միմիայն 10 տարի հետո "Neue Zeit" -ում, չի կարելի մի կողմ թողնել, որովհետև այդ քննադատությունը նվիրված է, գլխավորապե, սոցիալ-դեմակրատիայի հենց **պետական** կառուցվածքի հարցերի վերաբերող **օպորտունիստական** հայացքների քննադատությանը:
Մացողիկ կերպով նծենք, որ Էնգեսլն տնտեսական հարցեի վերաբերյալ ևս մի վերին աստիճանի արժեքավոր մատնանշում է անում, որը ցույց է տալիս, թե նա որքան ուշադրի ու լրջամտորեն է հետևել հենց նորագույն կապիտալիզմի կերպարանփոխություններին և ինչպես կարողացել է, այդ իսկ պատճառով, որոշ չափով կանխատեսել մեր, իմպերիալիստական դարաշրջանի խնդիրները: Ահա յադ ցուցումը. կապիտալիզմը բնորոշելու համար ծրագրի նախագծում գործածված

"պլանաչափության բացակայություն" (Planlosigkeit) արտահայտության առթիվ Էնգելսը գրում է.

… "Եթե մենք բաժնետիրական ընկերություններից անցնում ենք տրեստներին, որոնք հպատակեցնում են իրենց և մոնոպոլիզացիայի են ենթարկում արդյունաբերության ամբողջ ճյուղեր, ապա այստեղ դադարում է ո՛չ միայն մասնավոր արտադրությունը, այլև պլանաչափության բացակայությունը" ("Neue Zeit" 20-րդ տարի, I հատոր, 1901-1902, էջ 8):

Այստեղ վերցված է նորագույն կապիտալիզմի, այսինքն՝ իմպերիալիզմի թեորիական գնահատության ամենից ավելի գիտական կողմը, այն է՝ որ կապիտալիզմը մոնոպոլիստական **կապիտալիզմի** է փոխարկվում: Այս վերջին հանգամանքը պետք է ընդգծել, որորվհետև ամենատարածված սխալն այն բուրժուական-ռեֆորմիստական պնդումն է հանդիսանում, իբր թե մոնոպոլիստական կամ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն **այլևս** կապիտալիզմ **չե**, արդեն կարող է "պետական սոցիալիզմ" կոչվել և այլն: Կատարյալ պլանայնություն տրեստներն, իհարկե, չեն տվել, մինչև այսոր էլ չեն տալիս և չեն կարող տալ: Բայց որչափով նրանք պլանայնութնու են տալիս, որչափով կապիտալի մագնատներն ազգային կամ մինչև իսկ միջազգային մասշտաբով սկզբից հաշվի են առնում արտադրության ծավալը, որչափով նրանք կարգավորում են այն պլանայնորեն, - այդ չափով մենք, այնուամենայնիվ, մնում ենք **կապիտալիզմի** շրջանում, թեև նրա զարգացման նոր ստադիայում, բայց, անկասկած, կապիտալիզմի շրջանում: **Այդպիսի** կապիտալիզմի "մոտիկությունը" սոցիալիզմին՝ պետք է պրոլետարիատի իսկական ներկայացուցիչների համար սոցիալիստական հեղափոխության մոտիկության, հեշտության, իրագործելիության, անհետաձգելիության փաստարկ լինի և ոչ երբեք այն բանի փաստարկ, թե պետք է հանդուրժող վերաբերմունք ցույց տալ դեպի այդ հեղափոխության ժխտումն ու կապիտալիզմի գունազարդումը, որով զբաղվում են բոլոր ռեֆորմիստները:
Բայց վերադառնանք պետության հարցին: Այստեղ երեք տեսակ առանձնապես արժեքավոր ցուցումներ է տալի Էնգելսը. նախ՝ հանրապետության հարցի մասին. երկրորդ՝ ազգային հարցի կապակցության մասին պետության կառուցվածքի հետ. երրորդ՝ տեղական ինքնավարության մասին:
Ինչ վերաբերվում է հանրապետությանը, Էնգելսն այն դրաձրել է Էրֆուրտի ծրագի նախագծի իր քննադատության ծանրության կենտրոնը: Իսկ եթե մենք մտաբերենք, թե ինչպիսի նշանակություն է ձեռք բերել Էրֆուրտի ծրագիրն ամբողջ միջազգային սոցիալ-դեմակրատիայի համար, ինչպես այն օրինակ է դարձել ամբողջ II Ինտերնացիոնալի համար, ապա առանց չափազանցության մեջ ընկնելու կարելի կլնինի ասել, որ Էնգելսն այստեղ քննադատում է ամբողջ II Ինտերնացիոնալի օպորտունիզմը:

*"Նախագծի քաղաքական պահանջները, - գրում է Էնգելսը, - մեծ թերություն ունեն: **Նրա մեջ չկա այն** (ընդգծումը Էնգելսինն է), ինչ որ իսկապես պետք էր ասել":*

Եվ այնուհետև պարզաբանվում է, որ գերմանական սահմանադրությունն իսկապես 1850թ. ամենառեակցիոն սահմանադրության պատճենն է, որ ռայխստագը, ինպես ասել է Վիլհելմ Լիբկնեխտը, "աբսոլուտիզմի թզենու տերևն ե" միայն, որ "ակներև անմտություն է" " աշխատանքի բոլոր գործիքներն ընդհանուր սեփականություն դարձնել" իրագործել կամենալն այն այն սահմանադրության հիման վրա, որն

օրինականացնում է[1] մանր պետություններն ու գերմանական մանր պետությունների միությունը:

1 Ձեռագրում "ընդունում է"

"Այս թեման շոշափելը վտանգավոր է", - ավելացնում է Էնգելսը, շատ լավ իմանալով, որ չի կարելի ծրագրում լեգալ կերպով հանապետության պահանջ դնել Գերմանիայի համար: Բայց Էնգելս առանց այլևայլության չի հաշտվում այս ակներև նկատառման հետ, որով բավարարվում են "բոլորը": Էնգելսը շարունակում է. "Բայց, այնուամենայնիվ, գործը պետք է այս կամ այն կերպ առաջ մղվի: Թե որ աստիճանի անհրաժեշտ է այդ, ցույց է տալիս սոցիալ-դեմոկրատական մամուլի խոշոր մասի մեջ հենց այժմ ծավալում գտած (einreissende) օպորտունիզմը: Վախենալով սոցիալիստների դեմ ուղղված օրենքի վերականգնումից, կամ հիշելով այդ օրենքի տիրապետության ժամանակ արված միքանի վաղաժամ հայտարարություններ, հիմա ուզում են, որ կուսակցությունը Գերմանիայի այժմյան օրինակարգը բավարար համարի՝ իր բոլոր բոլոր պահանջները խաղաղ ճանապարհով կենսագործելու համար"..

Որ գերմանական սոցիալ-դեմոկրատները գործում էին բացառիկ օրենքի վերականգնումից վախենալով, այս հիմնական փաստն Էնգելսն առաջին պլան է մղում և, առանց տատանվելու, օպորտունիզմէ անվանում այն, հայտարարելով, որ, հատկապես հանրապետության ու ազատության բացակայության շնորհիվ Գերմանիայում, միանգամայն անմիտ են "խաղաղ" ճանապարհով գործելու ցնորքները: Էնգելսը բավականաչափ զգուշ է, որպեսզի իրեն չկաշկանդի: Նա ընդունում է, որ հանրապետություն ունեցող կամ շատ մեծ ազատություն վաելող երկրներում՝ խաղաղ զարգացում դեպի սոցիալիզմը ("կաչելի է պատկերացնե՛լ"), բայց Գերմանիայում, կրկնում է նա.

... "Գերմանիայում, որտեղ կառավարությունը համարյա թե ամենազոր է, իսկ ռայդստագն ունի բոլոր մյուս նարկայացուցչական հիմնարկներն իրական իշխանություն չունեն, - Գերմանիայում որև է նման բան հայտարարելը, ր այն էլ՝ առանց որև է կարիքի, նշանակում է աբսոլուտիզմի վրայից թզենու տերևը վերցնել և անձամբ կանգնել՝ նրա մերկությունը ծածկելու համար"...

Իսկապես էլ աբսոլուտիզմի մերկությունը ծածկողները հանդիսացան ահագին մեծամասնությամբ գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության պաշտոնական առաջնորդները, կուսակցության, որ "մահուդի տակ" պահեղ այդ ցուցումները"

... "Այդպիսի քաղաքականությունը, վերջիվերջո, կարող է կուսակցությանը միմիայն սխալ ճանապարհի վրա դնել: Առաջին պլաններն դնում ընդհանուր, վերացական քաղաքական հարցերը ր այդ ձևով քողարկու մերձավորագույն կոնկրետ հարցերը, որոնք հենց առաջին խոշոր անցքերի, հենց առաջին քաղաքական ճգնաժամի միջոցին իրենք իրենց օրակարգի հարց են դառնում: Սրանից ի՞նչ կարող է դուրս գալ, բացի նրանից, որ կուսակցությունը հանկարծ վճռական պահին անոգնական վիճակի մեջ կընկնի, որ վչռական հարցերի շուրջը նրա մեջ անորոշության ու միասնության բացակայությունն է իշխում, որովհետև այդ հարցերը երբեք չեն քննարվել...
"Մեծ, արմատական նկատառումների այս մառացումը հանուն օրվա ռոպեական շահերի, այդ վազքը ռոպեական հաջողությունների հետևից և նրանց համար մղվող պայքարը՝ առանց քալիք հետևանքները հաշվի առնելու, ապագա շարժման այդ զոհաբերումը ներկային, թերևս և "ազնիվ" մոտիվներից է բղխում: Բայց օպորտունիզմ է և օպորտունիզմ էլ կմնա, իսկ "ազնիվ" օպորտունիզմի, գուցե, ավելի վտանգավոր է, քան նրա բոլոր մյուս տեսակները ...
"Եթե կա մի բան, որ ոչ մի կասկածի ենթակա չե, այդ այն է, որ մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը իշխանության կարող են հասնել միմիայն այնպիսի քաղաքական ձևի ժամանակ, ինչպիսին դեմոկրատական հանրապետությունն է: Այս վերջինը մինչև անգամ պրոլետարիատի դիկտատուրայի առանձնահատուկ ձևն է հանդիսանում, ինչպես արդեն ցույց է տվել ֆրանսիական մեծ հեղափոխությունը"...

Էնգելսն այստեղ առանձնապես ցայտուն կերպով կրկնում է այն հիմնական իդեան, որ կարմիր թելի նման անցնում է Մարքսի բոլոր գրվածքներում, այն է, թե դեմոկրատական հանրապետությունն ամենից ավելի է մոտեցնում մեզ պրոլետարիատի դիկտատուրային: Որովհետև այդպիսի հանրապետություն, ամենևին չվերացնելով կապիտալի տիրապետությունը, հետևաբար և մասսաների ճնշումն ու դասակարգային պայքարը, անխուսափելիորեն տանում է դեպի այդ պայքարի այնպիսի ընդլայնում, ծավալում, դրսևորում ու սրում, որ եթե հնարավորություն է առաջ գալիս ճնշված մասսաների արմատական շահերը բավարարելու, այդ հնարավորությունը կենսագործվում է անխուսափելիորն ու միմիայն պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով, երբ այդ մասսաներին ղեկավարում է պրոլետարիատը: Ամբողջ II Ինտերնացիոնալի համար սրանք նույնպես մարքսիզմի "մոռացված խոսքեր են", և նրանց մոռացումն արտասովոր վառ կերպով երևան հանեց մենշևիկների կուսակցության պատմությունը 1917թ. ռուսական հեղափոխության առաջին կիսամյակի ընթացքում:
Ֆեդերատիվ հանրապետության հարցի մասիսն՝ բնակչության ազգային կազմի կապակցությամբ՝ էնգելսը գրում է.

"Ի՞նչպետք է կանգնի այժմյան Գերմանիյա տեղը" (նրա ռեակցիոն միապետական սահմանադրությամբ ր մանր պետությունների նույնքան բաժանմամբ, մի բաժանում, որը հավերժացնում է "պրուսականության" առանձնահատկությունները, փոխանակ լուծելու այն մի ամբողջություն կազմեղ Գերմանիայի մեջ): " Իմ կարծիքով՝ պրոլետարիատը կարող է միմիայն միասնական ու անբաժանելի հանրապետության ձևը գործադրել: Ֆեդերատիվ հանրապետությունը դեռ այժմ էլ, ամբոխջությամբ վերցրած, անհրաժեշտություն է հանդիսանում Միացյալ Նահանգների հսկայական տարածքի վրա, թեև նրա արևելքու այն արդեն արգելք է դառնում:Դա առաջադիմական մի քայլ կլիներ Անգլիայում, որտեղ երկու կղզու վրա չորս ազգ է ապրում, և չնայած պարլամենտի միասնական լինելուն՝ իրար կողքի օրենսդրության երեք համակարգ գոյություն ունի: Այն վաղուց արդեն արգելք է դարձել փոքրիկ Շվեյցարիայում, և եթե այնտեղ կարելի է հանդուրժել ֆեդերատիվ հանրապետությունը, ապա միմիայն այն պատճառով, որ Շվեյցարիան բավականանում է եվրոպական պետական համակարգի զուտ պասսիվ անդամի դերով: Գերմանիայի համար նրա ֆեդերալիստական շվեյցարացումը վիթխարի հետադարձ քայլ կլիներ: Երկու կետ ով են տարբերվում դաշնակցային պետությունը լիովին միասնական պետությունից. այդ այն է, որ միության մեջ մտնող մաեն մի առանջին ունի իր հատուկ քաղաքացիական ու քրեական օրենսդրությունը, իր հատուկ դատավարությունը, և ապա յան, որ ժողովրդական ներկայացուցիչների պալատի կողքին գոյություն ունի պետությունների ներկայացուցիչներից կազմված պալատը, և այնտեղ ամեն մի կանտոն քվեարկում է իբրև այդպիսին, անկախ այն բանից՝ մեծ է այն, թե փոքր": Գերմանիայում դաշնակցային պետությունը մի անցում է դեպի լիովին միասնական պետությունը, և 1866 ու 1870թ.թ. "վերևից եկող հեղափոխությունը" ո'չ թե պետք է հետ շուռ տալ, այլ լրացնել "ներքևից եկող շարժումով":

Էնգելսը ո'չ միայն անտարբերություն չի երևան հանում պետության ձևերի հարցի վերաբերյալ, այլ, ընդհակառակը, արտակարգ խնամքով աշխատում է վերլուծել հատկապես անցման ձևերը, որպեսզի յուրաքանչյուր առանձին դեպքի կոնկրետ պատմական առանձնահատկությունների կապակցությամբ հաշվի առնի, թե տվյալ անցման ձևն **ինչից դեպի ինչ է** անցում հանդիսանում:
Էնդելսն, ինչպես և Մարքսը, պրոլետարիատի ու պրոլետարական հեղափոխության տեսակետից պաշտպանում է դեմոկրատական ցենտրալիզմը, միասնական ու անբաժան հանրապետությունը: Ֆեդերատիվ հանրապետությունը նա դիտում է կա'մ իբրև զարգացման բացառություն ու արգելք, կա'մ իբրև անցնում միապետությունից դեպի ցենտրալիստական հանրապետությունը, իբրև "մի քայլ առաջ"՝ որոշ հատուկ պայմաններում: Եվ այդ հատուկ պայմանների մեջ առաջ է մղվում ազգային հարցը:

Էնգելսի, ինչպես և Մարքսի մոտ, - չնայած այն բանին, որ նրանք անխնա քննադատության են ենթարկում մանր պետությունների ռեակցիոնությունը և որոշ կոնկրետ դեպքերում այդ ռեակցիոնության քողարկումն ազգային հարցով, - ոչ մի տեղ ազգայիյն հարցի խուսափելու ձգտման ստվերն անգամ չկա. մի ձգտում, որով հաճախ են մեղանչում հոլանդական ու լեհական մարքսիստները, որոնք ելնում են "իրենց" մանր պետությունների քաղքենիորեն նեղ նացիոնալիզմի դեմ ամենաորինական պայքար մղելու հանգամանքից[1]:

1 Լենինն այստեղ նկատի ունի լեհական (Ռ. Լյուքսեմբուրգ և Ռադեկ) և հոլանդական (Գորտեր) սոցիալ-դեմոկրատներին:

Նույնիսկ Անգլիայում, որտեղ թե' աշխարհագրական պայմանները, թե' լեզվի ընդհանրությունը, թե' բազմաթիվ հարյուրամյակների պատմությունը, թվում է, թե "վերջ է տվել" Անգլիայի առանձին մանր բաժանումների ազգային հարցին, մինչը անգամ այստեղ Էնգելսը հաշվի է առնում այն պարզ իրողությունը ", որ ազգային հարցը դեռ վերացված չե, և դրա համար էլ ֆեդերատիվ հանրապետությունը "առաջընթաց մի քայլ" է համարում: Հասկանալի է, որ այստեղ ֆեդերատիվ հանրապետության թերությունների քննադատությունից, ինչպես և միասնական, ցենտրալիստորեն դենակրատական հանրապետության համար ամենավճռական պրոպագանդա ոը պայքար մղելուց հրաժարվելու ստվերն անգամ չկա:

Բայցդեմակրատական ցենտրալիզմն Էնգելսն ամենևին այն բյուրակրատական իմաստով չի ընբռնում, որպեսզի իմաստով այդ հասկացողությունը գործ են ածում բուրժուական ու մանր-բուրժուական իդեոլոգները, վերջինների թվում նաև անարխիստները: Էնգելսի կարծիքով՝ ցնետրալիզմ ամենևին չի բացառում այնպիսի լայն տեղական ինքնավարություն, որը "կոմունաների" ու մարզերի կողմից պետության միասնությունը հոժարակամ կերպով պաշտպանվելու դեպքում՝ անպայման վերացնում է ամեն մի բյուրոկրատիզմ ու ամեն մի "հրամանատարություն" վերևից:

... "Այդպես ուրեմն, միասնական հանրապետություն", - գրում է Էնգելսը, զարգացնելով մարքսիզմի ծրագրային հարցերը պետության վերաբերյալ, - "բայց ոխ այժմյան ֆրանսիական հանրապետության իմաստով, որն իրենից ուրիշ բան չի ներկայացնում, քան 1898թ. հիմնված կայսրությունը առանց կայսրի: 1792թ.-ից մինչև 1798թ. ամեն մի ֆրանսիական դեպարտամենտ, ամեն մի համայնք (Gemeinde) լիակատար ինքնավարություն էր վաելում ամերիկյան օրինակով, և այդ պետք է ունենանք նաև մենք: Թե ինչպես պետքե կազմակերոել ինքնավարությունը և ինչպես կարելի է կառավարվել առանց բյուրոկրատիայի, այդ ցույց են տվել ու ապացուցել են մեզ Ամերիկնա ու ֆրանսիական առաջին հանրապետությունը, իսկ այժմ էլ դարձյալ ցույց են տալիս Կանադան, Ավստրալիան ու անգլիական մյուս գաղութները: Եվ այդպիսի գավառական (մարզային) ու համայնական ինքնավարությունը շատ ավելի ազատ հիմնարկներ են, քան էե, օրինակ, շվեյցարական ֆեդերալիզմը, որտեղ, ճիշտ է, կանտոնը շատ անկախ ե բունդի (այսինքն՝ ամբողջ ֆեդերատիվ պետության) նկատմամբ, բայց անկախ ե նաև գավառակի (բեցիրկ) ու համայնքի նկատմամբ: Կանտոնային կառավարություններն են նշանակում գավառական ոստիկանապետներին (շտատհալտերներին) ու պերֆեկտներին, մի բան, որ բոլորովին գոյություն չունի անգլերեն խոսող երկրներում, և որ մենք ապագայում նույնպիսի վճռականությամբ պետք է վերացնենք, ինչպես և պրուսական լանդռատներին ու ռեգիռունգսռատներին" (կոմիսարներին, գավառական ոստիկանապետերին, նահանգապետերին, ընդհանրապես՝ վերևից նշանակված չինովնիկներին): Դրան համապատասխան՝ Էնգելսն առաջարկում է հետևյալ կերպով ձևակարպել ծրագրի կետը ինքնավարության մասին. "Լիակատար ինքնավարություն երկրամատում" (նահագում կամ մարզում), "գավառում ու համայնքում ընհանուր ընտրական իրավունքի հիման վրա ընտրված պաշտոնյաների միջոցով. պետության կողմից նշանակված բոլոր տեղական ու երկրային իշխանությունների վերացում":

Կերենսկու և մյուս սսոցիալիստական"նախարարների ձեռքով փակված **"Правда"** - յում (N68, 1917թ. մայիսի 28-ին) ես արդեն առիթ եմ ունեցել մատնանշելու[1], թե

ինչպես այս կետում - իհարկե, ամենևին ոչ միմիայն այս կետում - իբր թե հեղափոխական իբր թե դեմոկրատիայի իբր թե սոցիալիստական մեր ներկայացուցիչներն աղաղակող շեղումներ էին կատարում **դեմոկրատիզմից**: Հասկանալի է որ այդ ցուցումների նկատմամբ խուլ պետք է մնային այն մարդիկ, որոնք "կոալիցիայով" իրենց կապել էին իմպերիալիստական բուրժուազիայի հետ:

1 Երկեր, հատ. XX, էջ 437

Չափազանց կարևոր է նշել, որ Էնգելսը փաստերը ձեռքին, ամենաճշգրիտ օրինակով, հերքում է հատկապես մանր-բուրժուական դեմոկրատիայի շարքերում սաստիկ տարածված այն նախապաշարումը, իբր թե ֆեդերատիվ հանրապետությունն անպայման ավելի շատ ազատություն է նշանակում, քան ցենտրալիստականը: Այդ սխալ է: Այն փաստերը, որ բերում է Էնգելսը 1792-1798թ.թ. ֆրանսիական ցենտրալիստական ու շվեյցարական ցենտրալիստական հանրապետությունների վերաբերյալ, հերքում են այդ նախապաշարումն: Իրապես դեմակրատական ցենտրալիստական հանրապետությունն **ավելի շատ** ազատություն է տվել, քան ֆեդերալիստականը: Կամ այլ կերպ՝ պատմության մեջ հայտնի **ամենից ավելի լայն** տեղական, մարզային և այլ ազատություն տվել է ո'չ թե ֆեդերատիվ, այլ ցենտրալիստական հանրապետույունը:

Այս փաստի, ինչպես և ադհասարակ ֆեդերատիվ ու ցենտրալիստական հանրապետության ու տեղական ինքնավարության ամբողջ հարցի վրա բավականաչափ ուշադրություն չի դարձվում մեր կուսակցական պրոպագանդայի և ագիտացիայի մեջ:

5. ՄԱՐՔՍԻ "ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ" ԱՌԹԻՎ 1891թ. ԳՐԱԾ ԱՌԱՋԱԲԱՆԸ

"Քաղաքացիական պատերազմը Ֆրասիայում" աշխատության 3րդ հրատարակության առաջաբանում այդ առաջաբանը թվագրված է 1891թ. մարտի 18 և ակզբնապես տպագրվել է "Neue Zeit" ամսագրում - Էնգելսը պետության վերաբերյալ բռնելիք դիրքի հետ կապված մի շարք հարցերի մասին հետաքրքրական անցողակի դիտողությունների հետ մեկտեղ՝ տալիս է Կոմունայի դասերի մի շատ ցայտուն ամփոփում: Այդ ամփոփումն՝ խորացրած այն քսանամյա շրջանի փորձով, որ հեղինակին բաժանում էր Կոմունայից, և ուղղված հատկապես Գերմանիայում տարածված "սնահավատության պետության նկատմամբ", կարող է իրավամբ մարքսիզմի **վերջին խոսքը** կոչվել քննարկվող հարցի մասին:

"Ֆրանսիայում, - նշում է Էնգելսը, - յուրաքանչյուր հեղափոխությունից հետո բանվորները զինված էին լինում. այդ պատճառով ելպետության դեկի մոտ կանգնած բուրժուաների համար բանվորների զինաթափումն առաջի պատվիրաններ: Այստեղից - բանվորների նվաճած ամեն մի հեղափոխությանմինոր պայքար էր հետևում, որը վերջանում էր բանվորների պարտությամբ"...

Բուրժուական հեղափոխության այս ամթոթումը որքան կարճ է, նույքան էլ արտահայտիչ է: Խնդի էությունը - իմիջի այլոց նաև պետության հարցի նկատմամբ (**արդյոք ճնշված դասակարգը զենք ունի՞**) - այստեղ հիանալի կերպով ըմբռնված է: Հենց այդ էական է, որ ամենից ավելի հաճախ անտեսում են ինչպես բուրժուական իդեոլոգիայի ազդեցության ներքո գտնվող պրոֆեսորները, այնպես էլ մանր-բուրժուական դեմոկրատները: 1917թ. ռուսական հողափոխության ժամանակ

"մենշևիկ", "նույպես մարքսիստ" Ծերեթելուն բաժին ընկավ բուրժուական հեղափոխությունների այդ գաղտնիքը դուրս տալու պատիվը (կավենյական պատիվը): Հունիսի 9-ի արտասանած իր "պատմական" ճառում Ծերեթելին բերանից խոսք թռցրեց բուրժուազիայի վճռականության մասին՝ Պիտերի բանվորներին զինաթափ անելու, իհարկե, այդ վճիռն անցկացնելով թե' իբրև իր վճիռ և թե' իբրև ընդհանրապես "պետական" անհրաժեշտություն:
Ծերեթելու հունիսի 9-ին արտասանած պատմական ճառն , իհարկե, 1917թ. հեղափոխության ամեն մի պատմաբանի համար ամենաակնառու նկարագարդումներից մեկն է լինուլու, թե ինչպես պարոն Ծերեթելու առաջնորդած էսերների ու մենշևիկների բլոկը բուրժուազիայի կողմն անցավ **ընդդեմ** հեղափոխական պրոլետարիատի:
Ենգելսի մյուս անցողակի դիտողությունը, որը նույնպես կապված է պետության հարցի հետ, վերաբերվում է կրոնին: Հայտնի է, որ գերմանական սոցիալ-դեմոկրատիան քանի նեխվում, ավելի ու ավելի օպորտունիստական է դառնում, այնքան ավել;ի ու ավելի հաճախ գլորվում էր դեպի "կրոնը մասնավոր գործ հայտարարելու" հռչակավոր բանաձևի ֆիլիստերական ծուռ մեկնաբանությունը: Այսինքն՝ այդ բանաձը մեկնաբանվում էր այնպես, որ իբր թե հեղափոխական պրոլետարիատի **կուսակցության** համարել կրոնի՛ հարցը մասնավո՛ր գործ է: Պրոլետարիտի հեղափոխական ծրագրին կատարելապես դավաճանելու այդ դեմ էլ ծառացավ Ենգելսը, որը 1891թ. տեսնում էր օպորտունիզմի միմիայն **ամենաթույլ** սաղմերն իր կուսակցության մեջ և այդ պատճառով էլ շատ ավելի զգուշ էր արտահայտում.

*"Քանի որ Կոմունայի մեջ նստած էին գրեթե բացառապես բանվորներ կամ նրանց ճանաչված ներկայացուցիչները, նրա վորոշումներն էլ վճռական պրոլետարական բնույթ ուներին: Նրանք կա'մ այնպիսի ռեֆորմեր էին օրինադրում, որոնցից հանրապետական բուրժուազիան հրաժարվել էր միմիայն իր ստոր երկչոտության պատճառով և որոնք բանվոր դասակարգի ազատ գործունեության համար անհրաժեշտ հիմք էին ծառայում: Այդպես էր, օրինակ, այն սկզբունքի կենսագործումը, թե **պետության վերաբերյալ** կրոնը լոկ անհատական գործ է: Կա'մ Կոմունան այնպիսի որոշումներ էր հրատարակում, որոնք ուղղակի բանվոր դասակարգի շահերից էին բղխում և որոնք մասամբ խոր ճեղքվածք էին առաջացնում հին հասարակարգի մեջ"…*

Ենգելսը դիտավորյալ կերպով է ընդգծել "պետության վերաբերյալ" բառերը՝ հարվածն ուղղելով գերմանական օպորտունիզմի ո'չ թե հոնքին, այլ աչքի մեջտեղը, այն օպորտունիզմի, որ կրոնը **կուսակցության վերաբերյալ** մասնավոր գործ էր հայտարարում է այդպիսով հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունն իջեցնում էր ամենագռեհիկ "ազատամիտ" քաղքենիության մակարդակին, որ պատրաստ էր արտադավանական կացություն թույլ տալու, բայց հրաժարվում էր ժողովրդին հիմարացնող օպիումի դեմ կուսակցական պայքար մղելու խնդրին:
Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ապագա պատմագիրը, հետախուզելով նրա 1914թ. անարգ անկման արմատները, բավական առատ հետաքրքրական նյութ է գտնելու այս հարցի մասին, սկսած կուսակցության իդեական առաջնորդ Կաուցկու հոդվածների խուսափողական, օպորտունիզմի առաջ դռները լայն բաց անող հայտարարություններից, մինչև կուսակցության բռնած դիրքը դեպի "Los-von-Kirche-Bewegung" -ը (եկեղեցուց հեռանալու շարժումը) 1913թ.:
Սակայն, անցնենք այն բանին, թե ինչպես էր Ենգելսը, Կոմունայից քսան տարի անցնելուց հետո, նրա դասերն ամփոփում մարտնչող պրոլետարիատի համար:
Ահա թե որ դասերն էր առաջին պլանը մղում Ենգելսը.

… "Հատկապես նախկին կենտրոնացված կառավարության ճնշող ուժը՝ բանակը, քաղաքական ոստիկանությունը, բյուրոկրատիան, որ ստեղծել էր Նապոլեոնը 1798թ. և նրանից հետո բոլոր նոր կառավարությունները սիրով ընդունել էին իբրև ցանկալի զենք և իրենց հակառակորդների դեմ օգտագործել, - հատկապես այդ ուժը պետք է ամենուրեք ընկներ Ֆրանսիայում, ինչպես որ արդեն ընկել էր Փարիզում:
"Կոմունան սկզբիցևեթ ստիպված էր ընդունելու, որ բանվոր դասակարգը, իշխանության հասնելով, չի կարող օգտագործել իր նպատակների համար հին պետական մեքենան, որ բանվոր դասակարգը, իր սեփական, հենց նոր նվաճած իշխանությունը կրկին չկորցնելու համար, պետք է, մի կողմից, վերացնի ամբողջ հին, մինչև այժմ հենց իրեն դեմ գործադրվող ճնշման մեխանիզմը, իսկ մյուս կողմից, պետք է իրեն ապահովի հենց իր սեփական պատգամավորների ու պաշտոնյաների դեմ, նրանց բոլորին, առանց որև է բացառության, միշտ և ամեն ժամանակ փոփոխելու հայտարարելով"…

Էնգելսը կրկին ու կրկին անգամ ընդգծում է, որ ո'չ միայն միապետության, այլ նաև **դեմոկրատական հանրապետության մեջ** պետությունը պետություն է մնում, այսինքն՝ պահպանում է իր հիմնական տարբերիչ գիծը, այն է՝ պաշտոնատար անձերին, "հասարակության սպասավորներին", նրա օրգաններին **տեր** է դարձնում նույն հասարակության գլխին:

… "Պետության և պետական օրգանների՝ այս ձևով հասարակության սպասավորներից հասարակության տերերի փոխարկվելու դեմ, որ անխուսափելի էր մինչայժմյան բոլոր պետությունների մեջ, Կոմունան երկու անվրեպ միջոց գործադրեց: Առաջին՝ կառավարման, դատական, ժողովրդական լուսավորության բոլոր պաշտոնները պետք է տրվերին ընդհանուր ընտրական իրավունքով ընտրված անձերին, ըստվորում իրավունք է տրվում ուզած ժամանակ հետ կանչելու այդ ընտրվածներին՝ նրանց ընտրողների որոշմամբ: Եվ երկրորդ՝ Կոմունան բոլոր պաշտոնատար անձերին, բարձր թե ցածր, միմիայն այնպիսի աշխատավարձ էր վճարում, որ ստանում էին մյուս բանվորները: Ամենաբարձր ռոճիկը, որ նա ընդհանրապես վճարում էր 6000 ֆրանկ էր[1]: Այդպիսով հուսալի արգելք էր ստեղծված պաշտոնների հետևից ընկնելու և կարյերիզմի դեմ, նույնիսկ անկախ այն կաշկանդիչ մանդատներից էլ, որոնք, բացի դրանից, ստանում էին իրենց ընտրողներից ներկայացուցչական հիմնարկների պատգամավորները Կոմունայի կարգադրությամբ:
1 Անվանական արժեքով այդ անում է 2400 ռուբլի, իսկ այժմյան կուրսով՝ մոտ 6000 ռուբլի: Միանգամայն անհերելի բան են անում այն բոլշևիկները, որոնք առաջարկում են, օրինակ, քաղաքային դումաներում 9000-ական ռուբլի ռոճիկ տալ, փոխանակ առաջարկելու, որ **ամբողջ պետության համար** *մաքսիմումը լինի 6000 ռուբլի. - մի գումար, որ բավարար է:* **Ծանոթագրություն Լենինի:**

Էնգելսն այստեղ մոտենում է այն հետաքրքրական սահմանագծին, որտեղ հետևողական դեմոկրատիան, մի կողմից, սոցիալիզմի է **փոխարկվում**, իսկ մյուս կողմից, սոցիալիզմ է **պահանջում**: Որովհետև պետությունը վչնչացնելու համարանհրաժեշտ է պետական ծառայության ֆունկցիաները փոխարկել վերահսկողության ու հաշվաջման այնպիսի պարզ օպերացիաների, որոնք մատչելի են բնակչության վիթխարի մեծամսնությանը, և ապա նաև գլխովին ամբողջ բնակչությանը և նրա ուժերից վեր չեն: Իսկ կարյերիզմը կատարելապես վերացնելու համար անհրաժեշտ է, որ "պատվավոր", թեկուզ և ոչ եկամտաբեր պետական պաշտոնը չկարողանա կամուրջ ծառաել բանկերում ու բաժնետիրական ընկերություններում բարձր եկամուտ բերող պաշտոնների անցնելու համար, ինչպես այդ **շարունակ** լինում է բոլոր ամենաազատ կապիտալիստական երկրներում:
Բայց Էնգելսը չի անում այն սխալը, որ անում են, օրինակ, մարքսիստերից ոմանք ազգերի ինքնորոշման իրավունքի հարցի վերաբերյալ, իբր, կապիտալիզմի ժամանակ այն անկարելի է, իսկ սոցիալիզմի ժամանակ ավելորդ է: Այդպիսի, իբր թե արամիտ, բայց իսկապես սխալ դատողությունը կարելի է կրկնել **ամեն մի** դեմակրատական հիմնարկի, այդ թվում նաև պաշտոնյաների համեստ ռոճիկի վերաբերյալ, որովհետև մինչև վերջը գնացող հետևողական դեմոկրատիզմը

կապիտալիզմի ժամանակ անհնարին է, իսկ սոցիալիզմի ժամանակ ամեն մի դեմոկրատիա **մահանում է**:
Այդ սոփեստություն է, որ նման է այն հին կատակին, թե արդյոք մարդ կՃաղատանա՞, եթե նրա գլխի մազերից միմիայն մեկը պակասի:
Դեմոկրատիայի զարգացումը **մինչև վերջ**, այդպիսի զարգացման **ձևերի** հայտնագործումը, նրանց փորձարկումը **գործնականում** և այլն, այս բոլորը սոցիալական հեղափոխության համար մղվող պայքարի բաղկացուցիչ խնդիրներից մեկն է: Առանձին վերցրած ոչ մի դեմոկրատիզմ սոցիալիզմ չի տա, բայց կյանքի մեջ դեմոկրատիզմը երբեք չի "վերցվի առանձին", այլ "կվերցվի միասին"՝ իր ազդեցությունը գործելու համար նաև էկոնոմիկայի վրա, **նրա** կերպարանափոխությունն առաջ մխելու, տնտեսական զարգացման ազդեցությանը ենթարկվելու համար և այլն: Այդ է կենդանի պատմության դիալեկտիկան:
Էնգելսը շարունակում է.

...“Հին պետական իշխանության այդ պայթեցումը (Sprengung) և նրա փոխարինումը մի նոր իսկապես դեմոկրատական իշխանությամբ, մանրամասն նկարագրված է "Քաղաքացիական պատերազմի" երրորդ հատված ում: Սակայն անհրաժեշտ էր այստեղ մի անգամ էլ հակիրճ կերպով կանգ առնել այդ փոխարինման մի քանի գծերի վրա, որովհետև հատկապես Գերմանիայում սնահավատությունը դեպի պետությունը՝ փիլիսոփայությունից անցել է բուրժուազիայի և մինչև իսկ շատ բանվորների ընդհանուր գիտակցության մեջ: Փիլիսոփաների ուսմունքի համաձայն, պետությունը "իդեայի իրականացումն է" կամ, փիլիսոփայական լեզվի վերածած՝ ստտծու արքայությունը երկրի վրա. պետությունն այն ասպարեզն է, որտեղ կենսագործվում է կամ պետք է կենսագործվիհավիտենական ճշմարտությունն ու արդարությունը: Իսկ այստեղից բղխում է մի սնահավատ ակնածանք դեպի պետությունն ու այն ամենը, ինչ որ կապ ունի պետության հետ. - մի սնահավատ ակնածանք, որն ավելի ևս հեշտությամբ է արմատանում, քանի որ մարդիկ երեխայական հասակից սովորում են երևակել, թե ամբողջ հասարակության համար ընդհանուր գործն ու շահերը չեն կարող այլ կերպ իրականացվել ու պահպանվել, բացի նախկին եղանակից, այսինքն՝ պետության և նրա եկամտաբեր պաշտոններով պարքևատրված չինովնիկների միջոցով: Մարդիկ երևակայում են, թե արտասովոր ուժեղ առաջընթաց քայլ են անում, եթե ազատվում են ժառանգական միապետության մասին ունեցած հավատից և անցնում են դեմոկրատական հանրապետության կողմը: Բայց իսկապես, պետությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի մեքենա, որով մի դասակարգ ճնշում է մյուսին, և այն էլ՝ դեմոկրատական հանրապետության մեջ ամենևին ոչ պակաս, քան միապետության մեջ: Եվ լավագույն դեպքում պետությունը մի չարիք է, որ իբրև ժառանգություն անցնում է դասակարգային տիրապետության համար մղվող պայքարի մեջ հաղթանակող պրոլետարիատին. հաղթոխ պրոլետարիատնել, Կոմունայի նման, հարկադրված կլինի անմիջապես կտրելու-դեն գցելու այդ չարիքի վատթարագույն կողմերը, մինչև որ մի նոր, ազատ հասարակական պայմաններում մեծացած սերունդ ի վիճակի կլինի դուրս շպրտելու պետականության այդ ամբողջ հնոտին”:

Էնգելսը նախազգուշացնում էր գերմանացիներին, որ նրանք միապետությունը հանրապետության փոխարինելու առթիվ չմոռանան սոցիալիզմի հիմունքները պետության հարցի մասին ընդհանրապես: Նրա նախազգուշացումներն այժմ կարդացվում են իբրև ուղղակի դաս պարոնայք Ծերեթելիներին ու Չերնովնեչին, որոնք իրենց "կոալիցիոն" պրակտիկայում սնոտի հավատ ու սնոտի ակնածանք են ցուցաբերում դեպի պետությունը:
Երկու դիտողություն ևս: 1) Եթե Էնգելսն ասում է, թե դեմոկրատական հանրապետության ժամանակպետությունն "ամենևին ոչ պակաս" չափով, քան միապետության ժամանակ, մնում է "մի մեքենա, որով մի դասակարգ ճնշում է մյուսին", ապա այդ բոլորովին չի նշանակում, թե ճնշման **ձևը** պրոլետարիատի համար աննշանակ մի բան է, ինչպես "ուսուցանում են" անարխիստներից ոմանք: Դասակարգայի պայքարի ու դասակարգային ճնշման ավելի լայն, ավելի ազատ,

ավելի բացահայտ ձևը վիթխարի չափով թեթևացնում է պրոլետարիատի գործը՝ դասակարգերի լիակատար ոչնչացման համար մղվող պայքարում:
2) Թե ինչու միմիայն նոր սերունդն է իվիճակի լինելու բոլորովին դուրս շպրտելու պետականության այդ ամբողջ հնոտին, - այս հարցը կապ ունի դեմոկրատիայի հաղթահարման հարցի հետ, որին և անցնում ենք մենք:

6. ԷՆԳԵԼՍԸ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Էնգելսն առիթ ունեցավ այս մասին արտահայտվելու "սոցիալ-դեմակրատ" ավան **գիտական** անճշտության հարցի կապակցությամբ:
1870-ական թվականների զանազան, գլխավորապես "միջազգային" բովանդակությունունեցող թեմաներին նվիրված իր հոդվածների հրատարակության առաջաբանում ("Interationales aus dem "Volksstaat""[1]) , որ թվագրված է 1894թ. հունվարի 3-ին, այսինքն՝ Էնգելսի մահից տարի ու կես առաջ, նա գրում է, որ բոլոր հոդվածներում գործ է ածվում "կոմունիստ", **այլ ոչ թե** "սոցիալ-դմոկրատ" բառերը, որովհետև այն ժամանակ իրենց սոցիալ-դեմակրատ էին անվանում պրուդոնիստները Ֆրանսիայում, լասսալականները՝ Գերմանիայում:
1 "Միջազգային հարցեր "ժողովրդական պետություն" ամսագրից"

*... "Մարքսի ու ինձ համար - շարունակում է Էնգելսը - այդ պատճառով միանգամայն անկարելի էր այդքան առաձգական մի արտահայտություն գործածել հատկապես մեր տեսակետը նշելու համար: Ներկայումս իրերի դրությունն այլ է, և այդ բառը ("սոցիալ-դեմոկրատ") կարող է, թերևս, համապատասխան լինել (mag passieren), թեև այն ճշգրիտ (unpassend - անհարմար, անհամապատասխան) է մնում այնպիսի մի կուսակցության համար, որի տնտեսական ծրագիրը պարզապես սոցիալիստական չի հանդիսանում ընդհանրապես, այլ ուղղակի կոմունիստական է, - մի կուսակցության համար, որի վերջնական քաղաքական նպատակն ամբողջ պետության , հետևաբար, նաև դեմոկրատիայի հաղթահարումն է: Սակայն **իսկական** (ընդգծումը Էնգելսինն է) քաղաքական կուսակցությունների անունը երբեք լիովին չի համապատասխանում նրանց. կուսակցությունը զարդանում է, անունը մնում":*

Դիալեկտիկ Էնգելսն իր կյանքի վերջալույսին հավատարիմ է մնում դիալեկտիկային: Ես ու Մարքսն, ասում է նա, ունեինք կուսակցության համար գեղեցիկ, գիտականորեն ճշգրիտ անուն, բայց իսկական, այսինքն՝ մասսայական պրոլետարական կուսակցություն չկար: Այժմ (XIX դարի վերջին) իսկական կուսակցություն կա, բայց նրա անունը գիտականորեն ճիշտ չե: Վնաս չունի՛, "անցկկենա՛", միայն թե կուսակցությունը **զարգանա** , միայն թե նրա անվանման գիտական անճշգրտությունը չթագցվի նրանից և չխանգարի նրան ճիշտ ուղղությամբ զարգանալու:
Թերևս, որևե մի կատակախոս մեզ, բոլշևիկներիս, էլ սկսի Էնգելսի նման մխիթարել - մենք իսկական կուսակցություն ունենք, նա հրածալի կերպով զարգանում է, "անց կկենա"[1] նաև "բոլշևիկ" բառի նման անիմաստ ու այլանդակ բառը, որ բացառձակապես ոչինչ չի նշանակում, բացի այն զուտ պատահական հանգամանքից, որ Բրյուսել-Լոնդոնի համագումարում 1903թ. մենք մեծամասնություն էինք կազմում ... Գուցե այժմ, երբ հանրապետականների և "հեղափոխական" քաղքենիական դեմոկրատիայի կողմից մեր կուսակցության դեմ ուղղված հուլիսյան ու օգոստոսյան հալածանքները "բոլշևիկ" բառը համաժողովրդականորեն պատվավոր բառ դարձրին, երբ, բացի դրանից, այդ հալածանքները նշեցին մեր կուսակցության իր **իսկական** զարգացման մեջ արած այնքան ահագին, պատմական քայլը դեպի առաջ, - գուցե այժմ ես էլ տատանվեի պնդելու իմ ապրիլյան առաջարկը

կուսակցության անունը փոխելու մասին: Գուցե ես իմ ընկերներին "կոմպրոմիս" առաջարկեի, այն է՝ կոմունիստական կուսակցություն կոչվել, բայց փակագծի մեջ թաղնել "բոլշևիկներ" բառը …
1 Ձեռագրում՝ "" անց կկենա" նույնիսկ"

Բայց կուսակցության անվան հարցն անհամեմատ ավելի պակաս կարևորություն ունի, քան հեղափոխական պրոլետարիատի դեպի պետություն ունենալիք վերաբերմունքի հարցը:
Պետության վերաբերյալ սովորական դատողությունների մեջ շարունակ այն սխալն է արվում, որից հարևանցի կերպով նշեցին նախընթաց շարադրանքի մեջ: Այդ այն է, որ շարունակ մոռացության են տալիս, թե պետության վչնչացումը նաև դեմոկրատիայի ոչնչացնումն է, թե պետության մահացումը դեմոկրատիայի մահացումն է:
Առաջին հայացքից այդպիսի պնդումը չափազանց տարորինակ ու անհասկանալի է թվում. թերևս, մեկնումեկի միջև մինչև անգամ երկյուղ ծագի, թե մենք արդյոք այնպիսի մի հասարակական կառուցվածք չենք ակնկալում, որի մեջ չի պահպանվելու փոքրամասնության՝ մեծամասնությանը հպատակվելու սկզբունքը, որովհետև չե՞ որ դեմակրատիան էլ հենց այդ սկզբունքն ընդունելն է:
Ո'չ: Դեմակրատիան **չի** նույնանում փոքրամասնության՝ մեծամասնությանը հպատակվելու հետ: Դեմոկրատիան փոքրամասնութոյւնը մեծամասնությանը հպատակվելու սկզբունք ընդունող **պետությունն է**, այսինքն՝ մի կազմակերպություն է, որի միջոցով մի դասակարգ պարբերաբար **բռնություն** է գործ դնում մյուսի վրա, բնակչության մի մասը բռնություն է գործ դնում մյուսի վրա:
Մենք մեզ համար վերջնական նպատակ ենք դնում ոչնչացնել պետությունը, այսինքն՝ ամեն տեսակ կազմակերպված ու պարբերաբար բռնություն, ընդհանրապես մարդկանց վրա գործադրվող ամեն մի բռնություն: Մենք չենք սպասում, որ այնպիսի մի հասարակարգ գա, երբ չի պահպանվելու փոքրամասնության՝ մեծամսնությանը հպատակվելու սկզբունքը: Բայց ձգտվելով դեպի սոցիալիզմ, մենք համոզված ենք, որ այն պետք է վերաճելով կոմունիզմ դառնա, իսկ այդ կապակցությամբ՝ պետք է անհետանա ընդհանրապես մարդկանց վրա բռնության գործ դնելու ամեն մի կարիք, մի մարդու՝ մի ուրիշին, բնակչության մի մասի՝ նրա մյուս մասին **հպատակվելու** կարիքը, որովհետև մարդիկ **կընտելանան առանց բռնության ու առանց հպատակման**՝ կատարելու հասարակայնության տարրական պայմանները:
Ընտելացման այս տարրն ընդգծելու համար է, որ էնգելսը խոսում է նոր **սերնդի** մասին, "որ մեծացած պետքե լինի նոր, ազատ, հասարակական պայմաններում. սի սերունդ, որ ի վիճակի կլինի բոլորովին դուրս շպրտելու պետականության այդ ամբողջ հնոտին" - ամեն մի պետականության, այդ թվում նաև դեմոկրատական պետականության հնոտին:
Այս բանը պարզաբանելու համար պետք է վերլուծել պետության մահացման տնտեսական հիմունքների հարցը:

V. ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Այս հարցի ամենամանրամասն պարզաբանումը Մարքսը տվել է իր "Գոթայի ծրագրի քննադատության" մեջ (Բրակկեյին ուղղված 1875թ. մայիսի 5 թվակիր նամակով, որ տպագրվել է միմիայն 1891թ. "Neue Zeit" -ում, IX, 1 և ռուսերեն լույս է տեսել առանձին հրատարակությամբ): Այս նշանավոր աշխատության բանավիճական մասը, որ լասսալական քննադատություն է պարունակում, ստվերի մեջ է պահել, այսպես ասած, նրա դրական մասը, այն է՝ կոմունիզմի զարգացման ու պետության մահացման փոխադարձ կապակցության վերլուծությունը:

1. ՄԱՐՔՍԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ

Մարքսի 1875թ. մայիսի 5-ին Բրակկեիյին ուղղած նամակն ու վերը քննարկված՝ Էնգելսի 1875թ. մարտի 28-ին Բեբելին ուղղած նամակը մակերեսորեն համեմատելիս կարող է այնպես թվալ, թե Մարքսը շատ ավելի մեծ չափով է "պետականության" կողմնակից, քան Էնգելսը, և թե պետության մասին այդ երկու հեղինակների ունեցած կարծիքների տարբերությունը շատ զգալի է:
Էնգելսն առաջարկում է Բեբելին բոլորովին դեն գցել շաղակրատանքը պետության մասին, ծրագրից միանգամայն վտարել պետություն բառը, փոխարինել այն "համայնք" բառով. Էնգելսը մինչև անգամ հայտարարում է, որ Կոմունան արդեն բառի բուն իմաստով պետություն չի եղել: Մինչդեռ Մարքսը խոսում է նույնիսկ "կոմունիստական հասարակության ապագա պետականության" ամսին, այսինքն՝ կարծես ընդունում է պետության անհրաժեշտությունը նույնիսկ կոմունիզմի ժամանակ:
Բայց այդպիսի կարծիքն արմատապես սխալ կլիներ: Ավելի մոտիկ քննարկումը ցույց է տալիս, որ Մարքսի ու Էնգելսի հայացքները պետության ու նրա մահացման մասին միանգամայն համապատասխանում են միմյանց, իսկ մարքսի վերևում առաջ բերված արտահայտությունը հենց այս **մահացող** պետականությանն է վերաբերվում:
Պարզ է, որ խոսք անգամ չի կարող լինել **ապագա** "մահացման" պահը որոշելու մասին, մանավանդ որ այն ակնհայտ կերպով տևական մի պրոցես է հանդիսանում: Մարքսի ու Էնգելսի միջև եղած կարծեցյալ տարբերությունը բացատրվում է այն թեմաների տարբերությամբ, որ վերցրել են նրանք, այն խնդիրների տարբերությամբմ, որ հետապնդում էին նրանք: Էնգելսն իր առաջ խծնդիր էր դրել ակնբախ, կտրուկ կերպով, խոշոր գծերով ցույց տալ Բեբելին պետության մասին տարածված սովորական նախապաշարմունքների (որոնց ոչ փոքր չափով ենթակաեր նաև Լասսալը) ամբողջ անհեթեթությունը: Մարքսը միմիայն անցողակի է շոշափում **այդ** հարցը, հետաքրքրվելով մի ուրիշ թեմայով, ոյն է՝ կոմունիստական հասարակության **զարգացմամբ**:

Մարքսի ամբողջ թեորիան զարգացման թեորիայի կիրառումն է արդի կապիտալիզմի վերաբերյալ - այդ թեորիայի ամենահետևողական, ամենալիակատար, մտածված ու բովանդակությամբ հարութտ ձևով: Բնականաբար, Մարքսի առաջ բարձրացավ այդ թեորիայի կիրառման հարցը թե' կապիտալիզմի առաջիկա խորտակման և թե' **ապագա** կոմունիզմի **ապագա** զարգացման վերաբերյալ:
Իսկ ի՞նչպիսի **տվյալների** հիման վրա կարելի է առաջադրել ապագա կոմունիզմի ապագա զարգացման հարցը:
Այն հիման վրա, որ այն **ծագում է** կապիտալիզմից, պատմականորեն զարգանում է կապիտալիզմից, հետևանքէ այնպիսի հասարակական ուժի գործողությունների, որը կապիտալիզմն է **ծնել**: Մարքսի մոտ փորձերի հետք անգամ չկա՝ ուտոպիաներ հորինելու, դատարկ գուշակություններ անելու այնպիսի բաների մասին, ինչ որ չի կարելի գիտենալ: Մարքսը դբում է կոմունիզմի հարցն այնպես, ինչպես բնագետը կդներ մի նոր, ասենք, կենսաբանական տեսակի զարգացման հարցը, երբ մենք գիտենք, որ այն հենց այս կերպ է ծագել ու այս-ինչ որոշ ուղղությամբ է կերպարանափոխվում:
Մարքսն ամենից առաջ դեն է շպրտում այն խառնաշփոթությունը, որ մտցնում է Գոթայի ծրագիրը պետության ու հասարակության փոխհարաբերության հարցի մեջ:

… "Արդի հասարակությունը, գրում է նա, - կապիտալիստական հասարակություն է, որ գոյություն ունի բոլոր քաղաքակիրթ երկրներում, քիչ թե շատ ազատ է միջնադարյան խառնուրդից, քիչ թե շատ կերպարանափոխված է յուրաքանչյուր երկրի պատմական զարգացման առանձնահատկությունների շնորհիվ, քիչ թե շատ զարգացած է: Դրան հակառակ "արդի պետությունը" փոխվում է ամեն մի պետական սահմանի փոփոխության հետ: Պրուս-գերմանական կայսրության մեջ այն բոլորովին այլ է, քան թե Շվեյցարիայում, Անգլիայում՝ բոլորովին այլ, քան թե ՄԻացյալ նահանգներում: Հետևաբար, հակառակ "արդի պետությունը" մի ֆիկցիա է:
"Սակայն, չնայած նրանց ձևերի խայտաբղետ բազմազանությանը՝ տարբեր քաղաքակիրթ երկրների տարբեր պետություններն այն ընդհանուր գիծն ունեն միմյանց հետ, որ նրանք կանգնած են կապիտալիստորեն քիչ թե շատ զարգացած արդի բուրժուական հասարակության հողի վրա: Այդ պատճառով էլ նրանք մի քանի ընդհանուր եական հատկանիշներ ունեն: Այդ իմաստով կարելի է խոսել "արդի պետականության" մասին, հակադրելով վերջինս այն ապագային, երբ կմահանա նրա այժմյան արմատը, բուրժուական հասարակությունը:
"Այնուհետև հարցն այնպե է դրվում. ի՞ինչպիսի կերպափոխվության կենթարկվի պետականությունը կոմունիստական հասարակության մեջ: Այլ խոսքով, այն ժամանակ ի՞ինչպիսի հասարակական ֆունկցիաներ կմնան, որ նման կլինեն այժմյան պետական ֆունկցիաներին: Այս հարցի կարելի է միմիայն գիտականորեն պատասխանել. և քանի հազար անգամ էլ զուգորդեն "ժողովուրդ" բառը "պետություն" բառի հետ, այդ բանը մազաչափ անգամ առաջ չի մղի հարցի լուծումը"…

Այս ձևով ծաղրի ենթարկելով "ժողովրդական պետության" մասին եղած բոլոր խոսակցությունները, մարքսը դնում է հարցը և կարծես նախազգուշացնում է, թե այդ հարցին գիտական պատասխան տալուհամար կարելի է գործադրել միմիայն ամրապես հաստատված գիտական տվյալները:
Առաջինն, ինչ որ միանգամայն ճծգրիտ կերպով սահմանել է զարգացման ամբողջ տերոիան, ամբողջ գիտությունն ընդհանրապես, - և ինչ որ մոռացել են ուտոպիստները, ինչ որ մոռանում են սոցիալիստական հողափոխությունից վախեցող այժմյան օպորտունիստները, - այն հանգամանքն է, որ պատմականորեն սկսած գոյություն պետք է ունենա կապիտալիզմից դեպի կոմունիզմ տանող **անցման** մի հատուկ ստադիա կամ մի հատուկ էտապ"

2. ԱՆՑՈՒՄՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՑ ԴԵՊԻ ԿՈՄՈՒՆԻԶՄ

*… "Կապիտալիստական և կոմունիստական հասարակության միջև, - շարունակում է Մարքսը, - ընկնում է մի շրջան, երբ առաջինը հեղափոխականորեն փխակերպվում է վերջինին: Այդ շրջանին համապատասխանում է նաև անցման մի քաղաքական շրջան, և յադ շրջանի պետությունն ուրիշ ոչինչ չի կարող լինել, բացի **հեղափոխական դիկտատուրայից**" …*

Մարքսի այս եզրակացությունը հիմնված է այն դերի վերլուծության վրա, որ խաղում է պրոլետարիատն արդի կապիտալիստական հասարակության մեջ, հիմնված է այդ հասարակության զարգացման և պրոլետարիատի ու բուրժուազիայի հակադիր շահերի անհաշտելիության տվյալների վրա:
Առաջ հարցը դրվում էր այսպես. իր ազատագրությունը ձեռք բերելու համար պրոլետարիատը պետք է տապալի բուրժուազիային, նվաճի քաղաքական իշխանությունը, հաստատի իր հեղափոխական դիկտատուրան:
Այժմ հարցը մի փոքր այլ կերպ է դրվում. դեպի կոմունիզմ զարգացող կապիտալիստական հասարակությունից կոմունիստական հասարակությունը անցնելն անկարելի է առանց "քաղաքական անցման շրջանի", և այդ շջանի պետությումը կարող է միմիայն պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան լինել:
Իսկ ի՞նչպիսի հարաբերություն ունի այս դիկտատուրան դեպի դեմոկրատիան:
Մենք տեսանք, որ "Կոմունիստական մանիֆեստը" պարզապես իրար կողքի է դնում երկու հասկացողություն՝ "պրոլետարիատի փոխարկվելը տիրող դասակարգի" և դեմոկրատիայի նվաճումը": Ամբողջ վերևում շարադրվածի հիման վրա կարելի է ավելի ճշգրիտ որոշել, թե ինչպես է փոխվում դեմոկրատիան՝ կապիտալիզմից դեպի կոմունիզմ անցնելիս:
Կապիտալիստական հասարակության մեջ, նրա զարգացման ամենաբարենպաստ պայմաններում, մենք քիչ թե շատ լիակատար դեմոկրատիզմ տեսնում ենք դմոկրատական հանրապետության մեջ: Բայց այդ դեմոկրատիզմը միշտ շեղված է կապիտալիստական շահագործման նեղ շրջանակների մեջ, և այդ պատճառով էլ, ըստ էության, միշտ մնում է դեմոկրատիզմ փոքրամասնության համար, միմիայն հարուստների համար: Կապիտալիստական հասարակության ազատությունը միշտ մնում է մոտավորապես մի այնպիսիազատություն, ինչպիսին հին հունական հանրապետություններում եղած ազատություններ, այն է՝ ազատություն ստրկատերերի համար: Արդի վարձու ստրուկները, կապիտալիստական շահագործման պայմանների շնորհիվ, այն աստիճան ճզմված են մնում կարիքի ու աղքատության մեջ, որ "գլուխ չունեն դեմոկրատիայի", "քաղաքականության" մասին մտածելու, որ դեպքերի սովորական, խաղաղ ընթացքի ժամանակ բնակչության մեծամասնությունը հեռացված է հասարակական-քաղաքական կյանքի մասնակցությունից:
Այս անգամ ճշտությունը, թերևս, ամենից ավելի ակներև կերպով հաստատում է Գերմանիան հատկապես այն պատճառովմ որ այդ պետության մեջ սահմանադրական լեգալությունը զարմանալիորեն երկար ու կայուն պահպանվեց գրեթե կես դար (1871-1914), իսկ սոցիալ-դեմոկրատիան այդ ժամանակահատվածում շատ ավելի բան կարողացավ անել, քան ուրիշ երկրներում՝ "լեգալությունն օգտագործե;ու" համար, ինչպես և բանվորների մի այնպիսի խոշոր թիվ իբրև քաղաքական կուսակցություն կազմակերպելու համար, ինչպես ոչ մի այլ տեղ աշխարհում:

Իսկ ո՞րքան է կապիտալիստական հասարակության մեջ գիտակից ու գործունյա վարձու ստրուկների երբևից է տեսնված այդ ամենաբարձր բաժինը: Սոցիալ-դեմոկրատների կուսակցության մի միլիոն անդամ 15 միլիո՛ն վարձու բանվորներից: Արհեստականորեն կազմակերպված երեք միլիոն - 15 միլիոնի՛ց:
Դեմոկրատիան չնչին փոքրամասնության համար, դեմոկրատիա հարուրտների համար, ահա թե որն է կապիտալիստական հասարակության դեմոկրատիզմը: Եթե ավելի մոտիկից զննենք կապիտալիստական դեմոկրատիայի մեխանիզմը, ապա ամենուրեք ու ամեն տեղ, - թե ընտրական իրավունքի "մանր", իբր թե մանր, մանրասնությունների մեջ (նստակեցության ցենզ, կանանց զրկումն ընտրական իրավունքից և այլն), թե' ներկայացուցչական հիմնարկների տեխնիկայի մեջ, թե' ժողովների իրավունքի դեմ հարուցված փաստական խոչընդոտների մեջ (հասարակական շենքերն "աղքատների" համար չեն), թե' ամենորյա մամուլի զու կապիտալիստական կազմակերպության մեջ և այլն, և այլն, - մենք կտեսնենք դեմոկրատիզմի մեջ անվերջ ու անվերջ սահմանափակումները: Այդ սահմանափակումները, բացառումներ, բացառումները, խոչընդոտները, որ հարուցվում են աղքատների դեմ, մանր են թվում մանավանդ այն մարդկանց աչքում, որոնք երբեք կարիք չեն տեսել և ճնշված դասակարգերի հետ նրանց մասսայական կյանքում մոտիկ չեն եղել (իսկ այդպիսի մարդիկ են բուրժուական հրապարակախոսների ու քաղաքագետների ինն տասերորդը, եթե ոչ ինսունինները հարյուրերորդը), - բայց այդ սահմանափակումները ամբողջությամբ վերցրած, վտարում, դուրս են մղում չքավորության քաղաքականությունից, դեմոկրատիայի մեջ ակտիվ մասնակցություն ունենալուց:
Մարքսն սքանչելիորեն ըմբռնել էր կապիտալիստական դեմոկրատիայի այս **էությունը**, երբ Կոմունայի փորձը վերլուծելիս ասում էր. ճնշվածներին միքանի տարին մի անգամ թույլ են տալիս որոշելու, թե ճնշող դասակարգի ներկայացուցիչներից որը պետք է պարլամենտում ներայացնի ու ճնշի նրանց:
Բայց այդ կապիտալիստական դեմոկրատիայից, որ անխուսափելիորեն նեղ է, գաղտնաբար հեռու է վանում չքավորությանը, ուստի և ուղն ու ծուծը երեսպաշտ է և կեղծ, այդ կապիտալիստական դեմոկրատիայից առաջընթաց զարգացումը պարզ, ուղիղ ու հարթ չի ընթանում "դեպի մի ավելի ու ավելի լայն դեմոկրատիայա", ինչպես պատկերացնում են ազատամիտ պրոֆեսորներն ու մանր-բուրժուական օպորտունիստները: Ո'չ: Առաջընթաց զարգացումն, այսինքն՝ զարգացումը դեպի կոմունիզմ, կատարվում է պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով, և այլ կերպ ընթանալ չի կարող, որովհետև շահագործող կապիտալիստների **դիմադրությունը խորտակելու** համար էլ ուրիշ ոչ ոք չկա և այն այլ ճանապարհով խորտակել չի կարելի:
Իսկ պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն՝ ճնշվածների տիրող կազմակերպությունը իբրև տիրող դասակարգ, ճնշողներին ճնշելու համար, չի կարող պարզապես միմիայն դեմոկրատիայի ընդարձակում առաջացնել: Դեմոկրատիզմի հսկայական ընդլայնման **հետ միասին**, որն **առաջին անգամ** դեմնոկրատիզմ է դառնում չքավորների համար, դեմոկրատիզմ՝ ժողովրդի համար և ոչ թե դեմոկրատիզմ հարուստների համար, - պրոլետարիատի դիկտատուրան ազատությունից մի շարք բացառումներ է անում ճնշողների, շահագործողների, կապիտալիստների վերաբերյալ: Մենք պետք է նրանց ճնշենք, որպեսզի մարդկությունն ա զատագրենք վարձու ստրկությունից. նրանց դիմադրությունը պետք է ուժով խորտակել, - պարզ է, որ այնտեղ, որտեղ կա ճնշում, որտեղ կա բռնություն, այնտեղ չկա զատություն, չկա դեմոկրատիա:

Էնգելսը գեղեցիկ կերպով արտահայտել է այս բանը Բեբելին ուղղած իր նամակում, ասելով, ինչպես ընթերցողը հիշում է, թե "պրոլետարիատը պետության կարիք ունի ո՛չ թե ազատության համար, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ երբ կարելի կլինի խոսել ազատության մասին, պետությունը չի լինի այլևս":
Դեմոկրատիա ժողովրդի հսկայական մեծամասնության համար և ժաղովրդի շահագործողների, ճնշողների բռնի ճնշում, այսինքն՝ դեմկրատիայից վտարում, - ահա թե ինչպիսի կերպարանափոխություն է կրելու դեմոկրատիան կապիտալիզմիղ դեպի կոմունիզմ **անցնելիս**:
Միմիայն կոմունիստական հասարակության մեջ, երբ արդեն վերջնականապես ջախջախված է կապիտալիստների դիմադրությունը, երբ կապիտալիստներն անհետացել են, երբ չկա դասակարգեր (այսինքն՝ հասարակության անդամների միջև արտադրության հասարակական միջոցների նկատմամբ տարբերություն չկա), այն ժամանակ **միայն** "անհետանում է պետությունը և **կարելի է խոսել ազատության մասին**": Միմիայն այն ժամանակ հնարավոր է և կիրականացվի իսկապես լիակատար, իսկապես առանց որև է բացառման դեմոկրատիան: Եվ միմիայն այն ժամանակ դեմոկրատիան կսկսի **մահանալ** այն հասարակ հանգամանքի շնորհիվ, որ մարդիկ, ազատվելով կապիտալիստական ստրկությունից, վայրագություններից, անհաթեթություններից, գարշելիություններից, աստիճանաբար **կսովորեն** պահպանել համակեցության տարրական, դարերից ի վեր հայտնի, բոլոր այբբենարաններում հազարավոր տարիներ կրկնված կանոնները, կսովորեն այդ կանոնները կատարել առանց բռնության, առանց հպատակման, **առանց** հարկադրանքի **այն հատուկ ապարատի**, որը պետություն է կոչվում:
"Պետությունը մահանում է" արտահայտությունը շատ հաջող է ընտրված, որովհետև այն մատնանշում է պրոցեսի թե՛ աստիճանականությունը, թե՛ տարերայնությունը:Միմիայն սովորությունն է, որ կարող է այդպիսի ազդեցություն գործել և անկասկած կգործի, որորվհետև մենք միլիոնավոր անգամներ տեսնում ենք մեր շուրջը, թե որքան հեշտությամբ են սովորում մարդիկ համակեցության իրենց համար անհրաժեշտ կանոնները պահելուն, եթե չկա շահագործում, եթե չկա ոչ մի այնպիսի բան, որ վրդովում է, բեղոք ու ապստամբություն առաջացնում, **ճնշման** անհրաժեշտություն ստեղծում:
Այդպես ուրեմն՝ կապիտալիստական հասարակության մեջ մենք խուզված, խղճուկ, կեղծ դեմոկրատիաենք տեսնում, դեմոկրատիա միմիայն հարուստների համար, փոքրամասնության համար: Պրոլետարիատի դիկտատուրան, դեպի կոմունիզմ անցնելու շրջանը, առաջին անգամ դեմոկրատիա կտա ժողովրդի համար, մեծամասնության համար, միևնույն ժամանակ անհրաժեշտորեն ճնշելու փոքրամասնությանը, շահագործողներին: Միմիայն կոմունիզմը կարող է իսկապես լիակատար դեմոկրատիա տալ, և որքան ավելի լիակատար լինի այդ դեմոկրատիան, այնքան ավելի շուտով անպետք կդառնա նա, ինքն իրեն կմահանա:
Ուրիշ խոսքով՝ կապիտալիզմի ժամանակ մենք ունենք բառի բուն իմաստով պետութոյուն, մի հատուկ մեքենա, որով մի դասակարգ ճնշում է մյուսին, և այն ել՝ փոքրամասնությունը ճնշում է մեծամասնությանը: Հասկանալի ,, որ մի այդպիսի գործի հաջողության համար, ինչպիսին մեծամասնություն կազմող շահագործվողների պարբերաբար ճնշումն է փոքրամասնություն կազմող շահագործողների կողմից, հարկավոր է ճնշման ծայրահեղ վայրագություն, գազանություն, հարկավոր է արյան ծովեր, որոնց միջով էլ մարդկությունն ընթանում է իր ուղին՝ ստրկության, ճորտության, վարձկանության վիճակում:

Այնուհետև, կապիտալիզմից կոմունիզմին **անցնելիս**՝ ճնշումը **դեռևս** անհրաժեշտ է, բայց արդեն փոքրամասնություն կազմող շահագործողների ճնշումը՝ մեծամասնություն կազմող շահագործվողների կողմից: Ճնշման հատուկ ապարատը, հատուկ մեքենան, "պետությունը" **դեռ** անհրաժեշտ է, բայց այդ արդեն անցման պետություն է, այդ այլևս պետություն չե իսկական իմաստով, որովհետև փոքրամասնություն կազմող շախագործողների ճնշումը՝ մեծամասնություն կազմող **երեկվա** վարձու ստրուկների կողմից՝ համեմատաբար այնքան հեշտ , հասարակ ու բնական գործ է, որ նրա համար շատ ավելի քիչ արյուն կթափվի, քան թե ստրուկների, ճորտերի, վարձու բանվորների ապստամբությունները ճնշելիս, որ այն շատ ավելի էժան կնստի մարդկությանը: Եվ այդ բանը համատեղելի է դեմոկրատիայի տարածման հետ բնակչության այնպիսի վիթխարի մեծամասնության վրա, որ ճնշման **հատուկ մեքենայի** անհրաժեշտությունը սկսում է չքանալ: Բնական բան է, որ շահագործողներն ի վիճակի չեն ժողովրդին ճնշելու առանց ամենաբարդ մեքենայի, որը պետք է այդ խնդիրն իրականացնելու համար, իսկ **ժողովուրդը** կարող է շահագործողներին ճնշել նաև մի շատ պարզ "մեքենայի" միջոցով, գրեթե առանց "մեքենայի", առանց հատուկ ապարատի, **զինված մասսաների** պարզ **կազմակերպությամբ** (ինչպես, առաջ ընկնելով նկատետք, Բանվորնիրի ու զինվորների պատգամավորների խորհուրդներն էին):
Վերջապես, միմիայն կոմունիզմն է, որ ստեղծում է պետության լիակատար ավելորդությունը, որովհետև նրա ժամանակ **ոչ ոք** չկա, որին հարկավոր լինել ճնշել, "ոչ ոք"՝ **դասակարգի** իմաստով,բնակչության մի որոշ հատվածի դեմ պարբերաբար պայքար մղելու իմաստով: Մենք ուտոպիստներ չենք և ամենևին էլ չենք ժխտում էքսցեսսների հնարավորությունն ու անխուսափելիությունն **առանձին անհատների** կողմից, ինչպես նաև **այդպիսի** եքսցեսները ճնշելու անհրաժեշտությունը: Բայց նախ և առաջ, դրա համար պետք չե հատուկ մեքենա, ճնշաման հատուկ ապարատ, այդ բանը կանի հենց ինքը զանիված ժողովուրդմ այնպիսի պարզությամբ ու հեշտությամբ, ինչպես քաղաքակիրթ մարդկության որև է բազմություն նույնիսկ արդի հասարակության մեջ բաժանում է կռվողների կամ թույլչի տալիս բռնություն կանանց վերաբերյալ: Իսկ, երկրորդ, մենք գիտենք, որ համակեցության կանոնները խախտող էքսցեսների արմատական սոցիալական պատճառը մասսաների շահագործումն է, նրանց կարիքն ու աղքատությունը: Այդ գլխավոր պատճառի վերացումով, էքսցեսները անխուսափելիորեն կսկսեն "մահանալ": Մենք չգիտենք, թե որքան արագ և ինչ հաջորդականությամբ, բայց գիտենք, որ նրանք կմահանան: Նրանց մահացման հետ միասին **կմեռնի** նաև պետությունը:
Առանց ուտոպիաների մեջ ընկնելու, Մարքսն ավելի մանրամասն կերպով բնորոշել է այն, ինչ որ **այճմ** կարելի է բնորոշել այդ ապագայի վերաբերյալ, այն է՝ կոմունիստական հասարակության մաենացածր ու ամենաբարձր փուլը (աստիճանի, էտապի) տարբերությունը:

3. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

"Գոթայի ծրագրի քննադատության" մեջ Մարքսը մանրամասնաբար հերքում է լասսալյան այն գաղափարը, թե իբր բանվորը սոցիալիզմի ժամանակ ստանալու է "աշխատանքի անկրճատ" կամ "լրիվ արդյունքը": Մարքսը ցույց է տալիս, որ ամբողջ հասարակության ամբողջ հանրային աշխատանքից անհրաժեշտ է հանել թե' պահեստի ֆոնդը, թե' արտադրության ընդարձակման ֆոնդը, թե' "մաշված"

մեքենաների փոխհատուցումը և այլն, և ապա սպառման առարկաներից՝ վարչության, դպրոցների, հիվանդանոցների, անկելանոցների և այլ ծախսերի ֆոնդը:
Լասսալի մշուշապատ, աղոտ, ընդհանուր ֆրազի փոխարեն ("աշխատանքի լրիվ արդյունքը՝ բանվորին"), Մարքսն զգաստ հաշվառում է կատարում այն բանի, թե ինչպես ստիպված լինի տնտեսավարելու սոցիալիստական հասարակությունը: Մարքսը **կոնկրետ** կերպով վերլուծում է այդպիսի հասարակության կենսապայմանները, որի մեջ կապիտալիզմ չի լինի, և այդ առթիվ է.

*"Մենք այստեղ գործ ունենք" (բանվորական կուսակցության ծրագիրը քննարկելիս) "ո՛չ թե այնպիսի մի կոմունիստական հասարակության հետ, որ **զարգացել է** իր սեփական հիմքի վրա, այլ այնպիսի մի հասարակության հետմ որը նոր-նոր է **ծագում** հենց կապիտալիստական հասարակությունից և որն այդ պատճառով բոլոր տեսակետներից - թե՛ տնտեսական, թե՛ բարոյական, թե՛ մտավոր - դեռ կրում է իր վրա այն հին հասարակության դրոշմը, որի խորքերից նա ելել է":*

Ահա հենց այս կոմունիստակա հասարակությունը, որը, նոր-նոր է լույս աշխարհ եկոլ կապիտալիզմի ընդերքից, որ ամեն տեսակետից հին հասարակության դրոշմն է կրում, Մարքսն անվանում է կոմունիստական հասրակության "առաջին" կամ ամենաստորի փուլ:
Արտադրության միջոցներն արդեն դադարել են առանձին անջերի սեփականություն լինելուց: Արտադրության միջոցներն պատկանում են ամբողջ հասարակությունը: Հասարակության ամեն մի անդամ, կատարելով հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի մի որոշ մասը, հասարակությունից վկայագիր է ստանու այն մասին, թե նա այս-ինչ չափով աշխատանք է կատարել: Այդ վկայագրի հիման վրա նա սպառման առարկաների հասարակական պահեստներից ստանում է համապատասխան քանակության արտադրանքներ: Հանած աշխատանքի այն քանակությունը, որը հասարակական ֆոնդի մեջ է մտնում, յուրաքանչյուր բանվոր, հետևաբար, ստանում է հասարակությունից ճիշտ այնքանմ, որքն ինքն է տվել նրան:
Կարծես թե "հավասարություն է" թագավորում:
Բայց երբ Լասսալն, աչքի առաջ ունենալով այդպիսի հասարակական կարգերը (որոնք սովորաբար սոցիալիզմ են կոչվում, իսկ Մարքսի մոտ կրում են կոմունիզմի առաջին փուլ անունը)՝ ասում է, թե այդ "արդարացի բաշխում է", թե այդ "ամեն մեկի հավասար իրավունք է աշխատանքի հավասար արդյունքի վրա", ապա Լասսալը սխալվում է, և Մարքսը պարզաբանում է նրա սխալը:
""Հավասար իրավունք" - ասում է Մարքսը Ճ այստեղ իրոք կա, բայց այդ **դեռևս** "բուրժուական իրավունք" է, որը, ինչպես և ամեն մի իրավունք, **անհավասարություն է ենթադրում**: Ամեն մի իրավունք - **միանման** մասշտամի գործողություն է **տարբեր** մարդկանց վերաբերյալ, որոնք իսկապեսմիանման չեն, միմյանց համասար չեն, այդ պատճառով էլ "հավասար իրավունքը" հավասարության խախտում և անարդարություն է": Հիրավի, ամեն ոք, մյուսների հետ հասարակական աշխատանքի հավասար բաժին կատարելով, ստանում է հասարակական արտադրության հավասար բաժինը (վերևում նշված հանուրդները կատարելուց հետո):
Միչդեռ առանձին մարդիկ հավասար չեն, մեկն ավելի ուժեղ է, մյուսն՝ ավելի թույլ. մեկն ամուսնացած է, մյուսը՝ ոչ. մեկն ավելի շատ երեխա ունի, մյուսն՝ ավելի քիչ և այլն:

…Հետևաբար, հավասար աշխատանք կատարելիս, - եզրափակում է Մարքսը, - հասարակական սպառման ֆոնդի մեջ հավասար մասնակցություն ունենալիս, մեկն իրոք ավելի շատ կստանա, քան մյուսը, մեկը մյուսից ավելի հարուստ կլինի և այլն: Այդ բոլորից խուսափելու համար իրավունքը հավասար լինելու փոխարեն պետք է անհավասար լիներ"…

Հետևաբար, կոմունիզմի առաջին փուլը դեռ չի կարող արդարություն ու հավասարություն տալ. հարստության վերաբերյալ տարբերություններ կմնան, այն էլ՝ անարդար տարբերություններ, բայց անկարելի կլինի մարդու **շահագործումը** մարդու ձեռքով, որովհետև չի կարելի **արդարության միջոցները՝** գործարանները մեքենաները, հողը և այլն խլել և մասնավոր սեփականություն դարձնել: Ձախջախելով Լասսալի մանր-բուրժուականորեբ մութ ֆրազը "հավասարության" ու "արդարացիության" մասին **ընդհանրապես**, Մարքսը ցույց է տալիս կոմունիստակաբ հասարայության **զարգացման ընթացքը**, հասարակություն, որն **ստիպված է** նախ ոչնչացնել **միմիայն** այն "անարդարությունը", որ արտադրության միջոցները առանձին մարդիկ, և որն **անկարող** `միանգամից ոչնչացնել նաև հետագա անարդարությունը, ըստ որի սպառման առարկաները բաշխվում են "ըստ աշխատանքի" (և ոչ թե ըստ պահանջարքի):
Վուլգար տնտեսագետները, դրանց թվում նաև բուրժուական պրոֆեսորները, նրանց թվում "մեր" Տուգանը, շարունակ կշտամբում են սոցիալիստներին, թե իբր սրանք մոռանում են մարդկանց անհավասարության մասին և "երազում են" ոչնչացնել այդ անհավասարությունը: Ինչպես տեսնում ենք, այդպիսի կշտամբանքն ապացուցում է միմիայն պ.պ. բուրժուական իդեոլոգների ծայրահեղ տգիտությունը:
Մարքսը ոչ միայն ճշգրիտ կերպով հաշվի է առնում մարդկանց անխուսափելի անհավասարույունը, այլ նա հաշվի է առնում նաև այն, որ միմիայն արտադրությանմիջոցների ամբողջ հասարակության անդհանուր սեփականություն դառնալը ("սոցիալիզմն" այդ բառի սովորական գործածությամբ) դեռ **չի վերացնում** բաշխման թերություններն ու "բուրժուական իրավունքի" անհավասարությունը, իրավունքի, որ **շարունակում է իշխել**, քանի դեռ արտադրանքներն "ըստ աշխատանքի" են բաժանվում:

... "Բայց այդ թերությունները, - շարունակում է Մարքսը, - անխուսափելի են կոմունիստական հասարակության առաջին փուլում, նրա յան տեսքով, երբ նա երկարատև երկունքից հետո ծնվում է կապիտալիստական հասարակությունից: Իրավունքը երբեք չի կարող ավելի բարձր լինել, քան տնտեսական կարգն ու հասարակության նրանով պայմանավորված կուլտուրական զարգացումը"...

Այսպիսով, կոմունիստական հասարակության առաջին փուլում, (որը սովորաբար սոցիալիզմ են անվանում) "բուրժուական իրավունքը" լիովին **չի** վերացվում, այլ միմիայն մասամբ, միմիայն արդեն ձեռք բերված տնտեսական հեղաշրջման չափով, այսինքն՝ միմիայլ առրադրության միջոցների վերաբերյալ: "Բուրժուական իրավունքը" դրանք առանձինմարդկանց մասնավոր սեփականություն է ճանաչում: Սոցիալիզմը դրանք **ընդհանուր** սեփականություն է դարձնում: **Այդ չափով** - և միմիայն այդ չափով - "բուրժուական իրավունքը" վերանում է:
Բայց այնուամենայնիվ նա մնում է իր մյուս մասով, մնում է իբրև արտադրանքների բաշխման կարգավորիչ, (որոշող): "Ով չի աշխատում, նա չպետք է ուտի". Այս սոցիալիստական սկզբունքն **արդեն** իրականացված է. "աշխատանքի հավասար քանակության համար՝ արտադրանքի հավասար քանակություն" - սոցիալիստական այս սկզբունքն էլ իրականացված է **արդեն**:Սակայն, այս կոմունիզմ չե, և այս դեռ չի վերացնում "բուրժուական իրավունքը", որն անհավասար մարդկանց աշխատանքի անհավասար (փաստորեն անհավասար) քանակության համար հավասար քանակությամբ պրոդուկտ է տալիս:
Այդ - "թերություն է", ասում է Մարքսը, բայց անխուսափելի է կոմունիզմի առաջին փուլում, որովհետև առանց ուտոպիզմի մեջ ընկնելու չի կարելի կարծել, թե

տապալելով կապիտալիզմը, մարդիկ միանգամից կսովորեն աշխատել հասարակության համար **առանց իրավունքի որև է նորմայի**. բացի դրանից՝ կապիտալիզմի վերացումը **միանգամից** տնտեսական նախադրյալներ **չի տալիս այդպիսի** փոփոխման համար:
Իսկ այլ նորմաներ, բացի "բուրժուական իրավունքից", չկան: Եվ այդ չափով դեռ անհրաժեշտ է մնում պետությունը, որը, պաշտպանելով արտադրության միջոցների հանրային սեփականությունը, կպաշտպաներ աշխատանքի անհավասարությունն ու արտադրանքի բաշխման հավասարությունը:
Պետությունը մահանում է, որոշչափով այլևս կապիտալիստներ չկան, այլևս դասակարգեր չկան, այդ պատճառով ել որև է **դասակարգի ճնշել** չի կարելի:
Բայց պետությունը դեռևս բոլորովին չի մահացել, որովհետև դեռ մնում է "բուրժուական իրավունքի" պաշտպանությունը, որը սրբագործում է իրական անհավասարությունը: Պետության լիակատար մահացման համար հարկավոր է լիակատար կոմունիզմ:

4. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՓՈՒԼԸ

Մարքսը շարունակում է.

... "Կոմունիստական հասարակության բարձրագույն փուլի ժամանակ, երբ կխքանա մարդուն ստրկացնող նրա հպատակումն աշխատանքի բաժանման, երբ դրա հետ միասին կանհետանա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, երբ աշխատանքը կդադարի լոկ ապրուստի միջոց լինելուց, այլ ինքը կդառնա կյանքի առաջին պահանջը, երբ անհատների համակողմանի զարգացման հետ միասին կաճեն նաև արտադրողական ուժերը և լիառատ հեղեղի նման կհոսեն հասարակական հարստության բոլոր աղբյուրները, - այն ժամանակ միայն կարելի կլինի բոլորվին հաղթահարել բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը, և հասարակությունը կկարողանա իր դրաշակի վրա գրել՝ "Ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկն ըստ իր պահանջարկությունների"":

Միմիայն այժմ մենք կարող ենք գնահատել նգելսի դիտողությունների ամբողջ ճշտությունը, երբ նա անխնա կերպով ծաղրուծանակի էր ենթարկում "ազատություն" ու "պետություն" բառերի միացման անհեթեթությունը: Քանի կա պետություն, չկա ազատություն: Երբ ազատություն լինի պետություն չի լինի:
Պետության լիակատար մահացման տնտեսական հիմքը կոմունիզմի այնպիսի բարձր զարգացումն է, որի ժամանակ անհետանում է մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, հետևապես՝ անհետանում է արդի **հասարակական** անհավասարության կարևորագույն աղբյուրներից մեկը, այն էլ՝ այնպիսի աղբյուր, որը միանգամից ոչ մի կերպ չի կարելի վերացնել լոկ արտադրությանմիջոցները հասարակական սեփականություն դարձնելով, միմիայն կապիտալիստներին սեականազրկելով:
Այս սեփականազրկումը արտադրողական ուժերի հսկայական զարգացման **հնարավորություն** կընձեռի: Եվ, տեսնելով, թե ինչպես այժմ արդեն կապիտալիզմն անհավատալի չափով **կասեցնում է** այդ զարգացումը, թե ինչքան շատ բան կարելի կլինի առաջ շարժել արդեն ձեռք բերված արդի տեխնիկայի հիման վրա, մենք իրավունք ունենք ամենալիակատար վստահությամբ ասելու, որ կապիտալիստների սեփականազրկումն անխուսափելիորեն մարդկային հասարակության արտադրողական ուժերի հսկայական զարգացում կընձեռի: Բայց թե որքան առագ է առաջ ընթանալու այդ զարգացումը, թե որքան շուտ է հասնելուիր կապերն աշխատանքի բաժանման հետ կտրելուն, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի

միջև եղած հակադրությունը ոչնչացնելուն, այդ մենք չգիտենք և **չենք կարող** գիտենալ:
Այդ պատճառով ել մենք իրավունք ունենք խոսելու միմիայն պետության անխուսափելիորեն մահացման մասին, ընդգծելով այդ պրոցեսի երկարատևությունը, նրա կախումը կոմունիզմի **ամենաբարձր փուլի** զարգացման արագությունից, և թողնելով բոլորովին բաց՝ մահացման ժամկետների ու կոնկրետ ձևերի հարցը, որովհետև այդպիսի հարցեր լուծելու համար նյութ **չկա**:
Պետությունը լիովին մահանալ կկարողանա այն ժամանակ, երբ հասարակությունը կիրականացնի՝ "ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկն ըստ իր պահանջմունքների" կանոնը, այսինքն՝ երբ մարդիկ այն աստիճան կսովորեն համակեցության հիմնական կանոնները պահպանել և երբ նրանց աշխատանքն այնքան արտադրողական կլինի, որ նրանք հոժարական կսկսեն աշխատել **ըստ ընդունակությունների**: "Բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը" , որ հարկադրում է Շեյլոկի[1] խստասրտությամբ հաշիվ անել, թե չլինի ուրիշից մի կես ժամ ավելի աշխատես, չլինի ուրիշից մի քիչ ավելի պակաս վճար ստանաս, այդ նեղ հորիզոնն այն ժամանակ մարդիկ անցած կլինեն: Այն ժամանակ արտադրանքների բաշխումը հասարակության կողմից նորմավորում չի պահանջի, թե յուրաքանչյուրն ինչ քանակության արտադրանք պետք է ստանա. ամեն մեկն ազատորեն կվերցնի "ըստ իր պահանջմունքի":
1 Շեյլոկ - վաճառողի մի տի Շեքսպիրի "Վենետիկի վաճառականը" դրամայում, որը, ի հատուցումն պարտքի, պահանջում է մի ֆունտ միս՝ պարտապանի մարմնից:
Բուրժուական տեսակետից հեշտ է այդպիսի հասարակական կառուցվածքը "զուտ ուտոպիա" հայտարարել ու հռհռալ այն բանի վրա, թե սոցիալիստները խոստանում են ամեն մեկին հասարակությունից ուզած քանակությամբ տրյուֆել, ավտոմոբիլ, դաշնամուր և այլն ատանալու իրավունք, առանց որև է վերահսկողության՝ առանձին քաղաքացու աշխատանքի վրա: Մինչև այժմ էլ այդպիսի հռհռոցով են գլուխն ազատում բուրժուական "գիտնականների" մեծամասնությունը, որոնք դրանով ցույց են տալիս թե' տգիտությունը և թե' կապիտալիզմի շահադիդական պաշտպանությունն իրենց կողմից:

Տգիտություն է, որովհետև ոչ մի սոցիալիստի մտքով էլ չի անցել "խոստանալ", որ կոմունիզմի զարգացման բարձրագույն փուլը վրա է հասնելու, իսկ մեծ սոցիալիստների **կանխատեսությունը**, թե այն գալու է, ենթադրում է ոչ աշխատանքի այժմյան արտադրողականությունը, ո'չ էլ **այժմյան** քաղքենուն, որը Պոմյալովսկու մոնթերի նման ընդունակ է "զուր տեղը" փչացնելու հասարակական հարստության պահեստները և անկարելի բաներ պահանջելու:
Մինչև այն ժամանակ, երբ կգա կոմունիզմի "բարձրաբույն" փուլը, սոցիալիստներն **ամենախիստ** վերասկողություն են պահանջում հասարակության **ուպետության կողմից** աշխատանքի չափի ու սպառման չափի վրա, միայն թե՝ այդ վերահսկողությունը պետք է սկսվի կապիտալսիտների սեփականազրկումից, բանվորնիրի վերահսկողությունից կապիտալիստների վրա և այն պետք է իրականացնի ո'չ թե չինովնիկների պետությունը, այլ **զինված բանվորների** պետությունը:
Բուրժուական իդեոլոգների (ու նրանց՝ պ.պ. Ծերեթելիների, Չերնովների ու Ընկ., նման պոչերի) կողմից կապիտալիզմի շահագիտական պաշտպանության էությունը հենց այն է, որ նրանք հեռավոր ապագայի մասին կատարվող վեճերով ու զրույցներով **նենգափոխում են այսորվա** քաղաքականության կենսական ու հրատապ հարցը, այն է՝ կապիտալիստների սեփականազրկումը, **բոլոր** քաղաքացիներին **մեկ**

խոշոր "սինդիկատի", այսինքն՝ ամբողջ պետության աշխատողներ ու ծառայողներ դարձնելը, և այդ ամբողջ սինդիկատի ամբողջ աշխատանքն իսկապես դեմոկրատական պետության, **բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդների պետությանը** լիովին հպատակեցնելը:
Ըստ էության՝ երբ գիտնական պրոֆեսորը, իսկ նրա հետևից քաղքենին, իսկ սրա հետևից պարոնայք Ծերեթելիներն ու Չերնովները խոսում են բոլշևիկների անխոհեմ ուտոպիաների, դեմագոգիական խոստումների մասին, սոցիալիզմ "մտցնելու" անկարելիության մասին, նրանք նկատի ունեն կոմունիզմի հենց բարձրագույն ստադիան կամ փուլը, որը "մտցնել" ո'չ միայն ոչ ոք րի խոստացել, այլ մտքովնել չի անցկացրել, որովհետև "մտցնել" այն առհասարակ չի կարելի:
Եվ այստեղ մենք հասել ենք սոցիալիզմի և կոմունիզմի միջև եղած գիտական տարբերության այն հարցին, որ շոշափել է Էնգելսն իր վերը բերված դատողության մեջ "սոցիալ-դեմոկրատներ" անվան անճիշտ լինելու մասին: Տարբերությունը կոմունիզմի առաջին կամ ստորին և բարձրագույն փուլերի միջև ապագայում քաղաքականորեն, հավանաբար, վիթխարի կլինի, բայց հիմա, կապիտալիզմի ժամանակ, ծիծաղելի կլիներ ընդունել այն, և այդ տարբերությունն առաջին պլանը մղել կարող էին գուցե միմիայն առանձին անարխիստներ (եթե անարխիստների ծարքերում դեռ մնացել են այնպիսի մարդիկ, որոնք ոչինչ չեն սովորել Կրոպոտկինների, Գրավի, Կորնելիսսենի ու անարխիզմի մյուս "աստղերի" "պլեխանովյան" փոխակերպությունից հետո, երբ նրանք սոցիալ-շովինիստներ դարձան կամ անարխո-խրամատականներ, ինչպես ասել է պատիվն ու խիղճև պահպանած սակավաթիվ անարխիստներից մեկը՝ Գեն):
Բայց սոցիալիզմի և կոմունիզմի միջև եզած գիտական տարբերությունը պարզ է: Այն, ինչ որ սովորաբար սոցիալիզմ են անվանում, Մարքսն անվանել է կոմունիստական հասարակության "առաջին" կամ ստորին փուլը: Որչափով **ընդհանուր** սեփականություն են դառնում արտադրության միջոցները, այդ չափով այստեղ էլ կարելի է կկոմունիզմ" բառը գործածել, եթե չմոռանանք, որ այդ լիակատար կոմունիզմ **չե**: Մարքսի պարզաբանումների խոշոր նշանակությունն այն է, որ նա այստեղ էլ հետևողականորեն կիրառում է մատերիալիստական դիալեկտիկան, զարգացման ուսմունքը, կոմունիզմը դիտելով իբրև կապիտալիզմ**ից** զարգացող մի բան: Փոխանակ սղոլաստիկ-մտածածին, "հնարովի" բնորոշումների և բառերի շուրջը (ի՞նչ է սոցիալիզմը, ի՞նչ է կոմունիզմը) անպտուղ վիճաբանություններ անելու՝ Մարքսը տալիս է այն բանի վերլուծությունը, թե ինչ կարելի է կոմունիզմի տնտեսական հասունության աստիճաններ անվանել:
Իր առաջին փուլում, իր առաջին աստիճանի ժամանակ, կոմունիզմը դեռ **չի** կարող տնտեսապե լիովին հասուն լինել, լիովին ազատ լիել կապիտալիզմի ավանդություններից կամ հետքերից: Այստեղից է բղխում այն հետաքրքրական երևույթը, ինչպիսին է "**բուրժուական** իրավունքի նեղ հորիզոնը" պահպանումը կոմունիզմի ժամանակ, նրա առաջին փուլում: Բուրժուական իրավունքը **սպառման** առտադրանքների բաշխման վերաբերյալ, իհարկե, անխուսափելիորեն նաև **բուրժուական պետություն է** ենթադրում, որովհետև իրավունքը ոչինչ է առանց այն ապարատի, որը կարող է հարկադրել այդ իրավունքի նորմաները կատարելու:
Դուրս է գալիս, որ կոմունիզմի ժրջանում որոշ ժամանակի ընթացքում ո'չ միայն բուրժուական իրավունքն է մնում, այլ մինչև իսկ նաև բուրժուական պետությունը առա՛նց բուրժուազիայի:

Այդ կարող է պարադոքս կամ մտքի դիալեկտիկական խաղ թվալ, որի մեջ հաճախ մեղադրում են մարքսիզմն այն մարդիկ, ովքեր ամենաչնչին ջանք անգամ չեն թափել ուսումնասիրելու նրա չափազանց խոր բովանդակությունը:
Իսկ իրոք, հնի մնացորդները նորի մեջ՝ կյանքը ցույց է տալիս մեզ ամեն քայլափոխում, թե' բնության և թե' հասարակության մեջ: Եվ Մարքսը ո'չ թե քմահաճորեն մի կտոր "բուրժուական" իրավունքն է մտցրել կոմունիզմի մեջ, այլ վերցրել է այն, ինչ որ տնտեսապես ու քաղաքականապես անխուսափելի է կապիտալիզմի **ընդերքից** ելած հասարակության մեջ:Դեմոկրատիան ահագին նշանակություն ունի այն պայքարում, որը մղում է բանվոր դասակարգը հանուն իր ազատագրության կապիտալիզմի դեմ: Բայց դեմոկրատիան ամենևին այնպիսի մի սահման չե, որը չի կարելի անցնել, այլ միմիայն ֆեդալիզմից դեպի կապիտալիզմ և կապիտալիզմից դեպի կոմունիզմ տանող ճանապարհի ետապներից մեկն է:
Դեմակրատիան նշանակում է հավասարություն: Հասկանալի է, թե որքան մեծ նշանակություն ունի պրոլետարիատի պայքարը հավասարությանհամար և հավասարության լոզունգը , եթե ճիշտ հասկանանք այն՝ **դասակարգերի** ոչնչացման իմաստով: Բայց դեմոկրատիա նշանակում է միմիայն **ֆորմալ** հավասարություն: Եվ հենց որ իրականանա հասարակության բոլոր անդամների հավասարությունն արտադրության միջոցների տիրելու **վերաբերյալ**, այսինքն՝ իրականանա աշխատանքի հավասարությունը, աշխատավարձի հավասարությունը, մարդկության առաջ անխուսափելիորեն կանգնելու է ավելի առաջ գնալու հարցը, ձևական հավասարությունից իրական հավասարություն անցնելու, այսինքն՝ իրականացնելու"ամեն մեկն ըստ իր ընդունակությունների, ամեն մեկն ըստ իր պահանջմունքների" կանոնը: Թե մարդկությունն ինչպիսի էտապներով, ինչպիսի գործնական միջոցառումներով կընթանա դեպի այդ բարձրագույն նպատակը, մենք չգիտենք և չենք կարող գիտենալ: Բայց կարևոր է պարզել մեզ համար, թե որքան անսահման կեղծ է այն սովորական բուրժուական պատկերացումը, իբր թե սոցիալիզմն ինչ-որ մի մեռած, քարացած, միանգամ ընդմիշտ տրված բան է, այնինչ իսկապես **միմիայն** սոցիալիզմից է սկսվելու արագ իրական, իսկապես մասսայական, բնակչության մասնակցության մեծամասնությամբ տեղի ունեցող առաջընթաց շարժումը հասարակական ու անձնական կյանքի բոլոր ասպարեզներում:
Դեմոկրատիան պետության ձև է, նրա այլատեսակություններից մեկը: Եվ, հետևաբար, նա հանդիսանում է, ինչպես և ամեն մի պետություն, բռնության ամեն մի կազմակերպված, սիստեմատիկ կիրառումը մարդկանց վերաբերմամբ: Այս մի կողմից: Բայց, մյուս կողմից, այն նշանակում է քաղաքացիների հավասարության ֆորմալ ճանաճումը, ճանաչում այն բանի, որ բոլորը հավասար իրավունք ունեն պետության կառուցվածքը որոշելու և այն կառավարելու: Իսկ դա, իր զարգացման որոշ աստիճանի ժամանակ, նախ, համախմբում է կապիտալիզմի դեմ հեղափոխական դասակարգին՝ պրոլետարիատին, և նրան հնարավորություն է տալիս՝ կոտրել, ջարդուփշուր անել, երկրի երեսից ջնջել բուրժուական, թեկուզ և հանրապետական-բուրժուական, պետական մեքենան, մշտական բանակը, ոստիկանությունը, չինովնիկությունը, փոխարինել նրանց **ավելի** դեմոկրատական, բայց այնուամենայնիվ դեռ պետական մեքենայով՝ զինված բանվորական մասսաների ձևով, որոնք հանգում են ժողովրդի միահամուռ մասնակցությանը միլիցիային:
Այստեղ "քանակը որակի է փոխվում". դեմկրատիզմի **այդպիսի** աստիճանը կապված է բուրժուական հասարակության շրջանակներից դուրս գալու, նրա սոցիալիստականվերակառուցումն սկսելու հետ: Եթե իսկապես **բոլորը** մասնակցում

են պետության կառավարմանը, այդտեղ կապիտալիզմը արդեն չի կարող դիմանալ: Եվ կապիտալիզմի զարգացումն, իր հերթին, **նախադրյալներ** է ստեղծում այն բանի համար, որպեսզի իսկապես "բոլորը" **կարողանան** մասնակցել պետության կառավարմանը: Այդպիսի նախադրյալներից է ընդհանուր գրագիտությունը, որն արդեն իրականացված է մի շարք ամենից ավելի առաջավոր կապիտալիստական երկրներում, ապա՝ միլիոնավոր բանվորների "վարժեցումն ու կարգապահ դարձնելը" փոստի, երկաթուղիների, խոշոր գործարանների և այլն և այլն խոշոր, բարդ, հանրայնացված ապարատի միջոցով:

Այդպիսի **տնտեսական** նախադրյալներ ունենալով՝ միանգամայն հնարավոր է անմիջապես, այսչրբանից մինչև վաղը, անցնելն այն գործին, որ տապալելով կապիտալիստներին ու չինովնիկներին՝ արտադրության ու բաշխման **վերահսկողության** գործում, աշխատանքի ու արդյունքների **հաշվառման** գործում նրանց փոխարինենք զինված բանվորներովմ ամբողջովին զինված ժողովրդով: (Վերահսկողության ու հաշվառման հարցը չպետք է շփոթել ինժեներների, գյուղատնտեսների և այլ գիտականորեն պատրաստված անձնակազմի հետ. այդ պարոններն այսոր աշխատում են՝ հպատակվելով կապիտալիստներին, վաղն է'լ ավելի լավ կաշխատեն՝հպատակվելով զինված բանվորներին):

Հաշվառում ու վերահսկողություն - ահա այն **գլխավոր բանը**, որը պահանջվում է կոմունիստական հասարակության **առաջին փուլը** "կարգի գցելու համար, նրա կանոնավոր գործունեության համար: Այստեղ **բոլոր** քաղաքացիները դառնում են պետության վարձու ծառայողները, պետություն, որպիսին հանդիսանում են զինված բանվորները: **Բոլոր** քաղաքացիները դառնում են **մեկ** համաժողովրդական, պետական, "սինդիկատի" ծառայողներ ու բանվորներ: Ամբողջ խնդիրն այն է, որ նրանք հավասարապես աշխատեն, ճիշտ պահպանելով աշխատանքի չափը, և հավասար վարձատրություն ստանան: Այս բանի հածվառումը, սրա վերահսկողությունը կապիտալիզմը ծայրահեղ չափով **պարզեցրել** և դարձրել է հսկողության ու գրանցման թվաբանական ձորս գործողությունները գիտենալու և համապատասխան անդորրագրեր տալու արտասովոր պարզ, ամեն մի գրագետ մարդու համար մատչելի գործադրություններ[1]:

1 Երբ պետությունն իր ֆունկցիաների ամենագլխավոր մասով վեր է ածվաում այսպիսի հաշվառման ու վերահսկողության հենց բանվորների կողմից, այն ժամանակ նա դադարում է "քաղաքական պետություն" լինելուց, այն ժամանակ "հասարակական ֆունկցիաները քաղաքական ֆունկցիաներից հասարակ վարչական ֆունկցիաների են փոխարկվում"(հմմտ. Վերը, Ivգլ.¢2, էնգելսի բանավեճն անարխիստների հետ): **Ծանոթագրություն Լենինի:**

Երբ ժողովրդի **մեծամասնությունը** կսկսի ինքնուրույնաբար և ամենուրեէ այդպիսի հաշվառում, այդպիսի վերահսկողություն անել կապիտալիստների (որոնք հիմա ծառայողներ են դարձել) ու պարոն ինտելիգենտիկների վերաբերյմամբ, որոնք դեռ կապիտալիստական հակումներ են պահպանում, այն ժամանակ այդ վերահսկողությունն իսկապես ունիվերսալ, ընդհանրական, համաժողովրդական կդառնա, այն ժամանակ ոչմի կերպ հնարավոր չի լինի նրանից խուսափել, "թագնվելու տեղ չի լինի":

Ամբողջ հասարակությունը մի գրասենյակ ու մի գործարան կլինի, աշխատանքի հավասարությամբ ու վարձի հավասարությամբ:

Բայց այդ "գործարանային" կարգապահությունը, որ կապիտալիստներին հաղթահարած, շահագործողներին տապալած պրոլետարիատը կտարածի ամբողջ հասարակության վրա, ո'չ մի կերպ չի հանդիսանում, ո'չ մեր իդեալը, ո'չ մեր վեջնական նպատակը, այլ միմիայն մի **աստիճան** է, որն անհրաժեշտ է հասարակությունը կապիտալիստական շախագործման գարշություններից ու նողկալիություններից արմատապես մաքրելու **և հետագա** առաջխաղացման **համար**:

Այս պահից սկսած, երբ հասարակության բոլոր անդամները կամ գոնե նրանց ահագին մեծամասնությունն **ինքը** կսովորի կառավարել պետությունը, այդ գործն իր ձեռքը կառնի, "կարգի կգցի" վերահսկողությունը չնչին փոքրամասնություն կազմող կապիտալիստների վերաբերմամբ, այն պարոնիկների վերաբերմամբ, որոնք ուզում են կապիտալիստական հակումներ պահպանել, այն բանվորների վերաբերմամբ, որոնց խորապես այլասերել և կապիտալիզմը, - այդ պահից սկսում է անհետանալ առհասարակ ամեն մի կառավարչության կարիքը: Որքան ավելի լիակատար է դեմոկրատիան, այնքան ավելի մոտ է այն պահը, երբ նա ավելորդ է դառնում: Որքան ավելի դեմոկրատական է այն "պետությունը", որը բաղկացած է զինված բանվորմերից և "բառի բուն իմաստով այլևս պետություն չի" հանդիսանում, այնքան ավելի արագ է սկսում մահանալ **ամեն մի** պետություն:

Որովհետև, երբ **բոլորը** կսովորեն կառավարել և իսկապես կսկսեն ինքնուրույնաբար կառավարել հասարակական արտադրությունը, ինքնուրյունաբար կենսագործել ձրիակակերների, աղաների, սրիկաների ու "կապիտալիզմի տրադիցաիները պահպանող" ուրիշ ուրիշ նմանների հաշվառումն ու վերահսկողությունը, այն ժամանակ այդ համաժաղովրդական հաշվառումից ու վերահսկողությունից դուրս մնալն անխուսափելիորեն այնքան անասելի դժվար կլինի, այնպիսի ամենահազվագյուտ բացառություն կդառնա, հավանորեն այնքան արագ ու լուրջ պատժի կենթարկվի (որովհետև զինված բանվորները գործնական կյանքի մարդիք են այ ոչ էե սենտիմենտալ ինտելիգենտիկներ, և հազիվ թե թույլ տան կատակ անել իրենց հետ), որ ամեն մի մարդկային համակեցության ոչ-բարդ, հիմնական կանոնները կատարելու **անհրաժեշտությունը** շատ շուտով **սովորույթ** կդառնա:

Եվ այն ժամանակ լայնորեն կբացվի դուռը կոմունիստական հասարակության առաջին փուլից նրա բարձրագույն փուլին անցնելու համար, իսկ դրա հետ միասին նաև պետության լիակատար մահացման համար:

VI. ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԳՈԵՀԿԱՑՈՒՄՆ ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Պետության հարաբերության հարցը դեպի սոցիալկան հեղափոխությունը և սոցիալական հեղաթոխության հարաբերության հարցը դեպի պետությունը, ինչպես նաև ընդհանրապես հեղափոխության հարցը շատ քիչ է զբաղեցրել II Ինտերնացիանալի (1889-1914) ամենաականավոր տեսարաններին ու հրապարակախոսներոին: Բայց օպորտունիզմի աստիճանական աճման այն պրոցեսի մեջ, որն 1914թ. հասցրեց II Ինտերնացիանալի կործանմանաը, ամենից ավելի բնորոշն այն է, որ նույնիսկ այն ժամանակ, երբ շատ մոտեցել էին այդ հարցին, **աշխատում էին շրջանցել այն**, ակմ չեին նկատում յան:
Ընդհանուր առմամբ կարել է ասել, որ պրոլետարակ հեղափոխության դեպի պետությունն ունենալիք հարաբերության հարցից **խուսափեուց**, - մի խուսափում, որը ձեռնտու էր օպորտունիզմի համար ու սնում էր նրան, - բղխես մարքսիզմի **աղավաղումն** ու նրա կատարյալ գռեհկացումը:
Այդ տխուր պրոցեսը գոնե համառոտ բնորոշելու համար, վերցնենք մարքսիզմի ամենաականավոր տեսաբաններին,, Պլեխանեվին ու Կաուցկուն:

1. ՊԼԵԽԱՆՈՎԻ ԲԱՆԱԿՌԻՎՆ ԱՆԱՐԽԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ

Պլեխանովն անարխիզմի ու սոցիալիզմի հարաբերության հարցին մի հատուկ բնորոշում է տվել՝ "Անարխիզմն ու սոցիալիզմը" վերնագրով, որը լույս թ տեսել գերմաներեն 1894թ.:
Պլեխանովնը ճարպկությամբ կարողացել է այդ հարցն այնպես քննել, որ անարխիզմի դեմ մղվող պայքարի մեջ բոլորովին շրջանցել է ամենաակտուալ, հրատապն ու քաղաքականորեն ամենից ավելի էականը, այն է՝ հեղափոխության հարաբերությունը դեպի պետությունը և պետության հարցն ընդհանրապես: Նրա բրոշյուրը երկու մասի է բաժանվում. մեկը - պատմական-գրական մասն է, որտեղ արժեքավոր նյութ կան Շտիրների, Պրուդոնի և ուրիշների իդեաների պատմության մասին: Մյուս մասը ֆիլիստերական է՝ գռեհիկ դատողություններով այն թեմայի մասին, թե անարխիստին բանդիտից տարբերելն անկարելի է:
Թեմաների այս զուգադրումը չափազանց զվարճալի ու չափազանց բնորոշ է Պլեխանովի ամբողջ գործունեության համար Ռուսաստանի հեղափոխության նախորյակին ու հեղափոխության շրջանի ընթացքում: 1905-1917թ.թ. Պլեխանովը հենց այդպես էլ ցույց տվեց իրեն՝ կիսադոկտրինյոր, կիսաֆիլիստեր, որը քաղաքականության մեջ թուրժուազիայի պոչիցեր ընթանում:
Մենք տեսանք, թե ինչպես Մարքսն ու Էնգելսը, բանակռիվ մղելով անարխիստների հետ ամենից ավելի խնամքով պարզեցին իրենց հայացքները հեղափոխության

հարապերության մասին դեպի պետութոյունը: Էնգելսը, 1891թ. հրապարակելով Մարքսի "Գոթայի ծրագրի քննադատությունը", գրում է, թե "մենք (այսինքն՝ Էնգելսն ու Մարքսը) այն ժամանակ ամենաեռուն պայքարի մեջ էին գտնվում Բակունինի ու անարխիստների դեմ. - (Առաջին) Ինտերնացիոնալի Հաագի կոնգրեսից հետո հազիվ երկու տարի էր անցել":
Անարխիստները փորձում էին հենց Պարիզի Կոմունայի այսպես ասած՝ "իրենց" հայտարարել, որն իբր թե հաստատում է իրենց ուսմունքը, բայց նրանք ամենևին չեին հասկացել Կոմունայի դասերն ու այդ դասերի վերլուծությունը Մարքսի կողմից: Այն կոնկրետ -քաղաքական հարցերի նկատմամբ, թե հարկավո՞ր է, արդյոք, **ջարդուփշուր անել** հին պետական մեքենան և **ինչո՞վ** պետք է փոխարինել այն - անարխիզմը ոչինչ չտվեց, որ գոնե մոտավորապես համապատասխաներ ճշմարտությանը:
Բայց խոսել "անարխիսզմի ու սոցիալիզմի" մասին՝ աչքաթող անելով պետության ամբողջ հարցը, **չնկատելով** մարքսիզմի ամբողջ զարգացումը Կոմունայից առաջ և հետո, այդ նշանակում էր անխուսափելիորեն դեպի օպորտունիզմ գլորվել: Որովհետև օպորտունիզմի համար հենց ամենից ավելի լայն է հարկավոր, որ ամենևին չդրվեն հենց այժմ մեր մատնանշած երկու հարցերը: Այդ **արդեն** օպորտունիզմի հաղթանակն է"

2. ԿԱՈՒՑԿՈՒ ԲՆԱԿՈՒՎՆ ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ

Ռուսաց քրականության մեջ, անկասկած, անխափ ավելի մեծ քանակությամբ են թարգմանվել Կաուցկու երկերը, քան որև է այլ գրամության մեջ: Զուր է, որ գերմանական սոցիալ-դեմոկրատներից ոմանք կատակաբանում են, թե Կաուցկու գրվածներն ավելի շատ Ռուսաստանում են կարդում, քան թե Գերմանիայում (փակագծերի մեջ ասենք՝ այդ կատակի մեջ շատ ավելի խոր պատմական բովանդակություն կա, քան կարծում են նրանք, ովքեր հրապարակ են նետել այդ կատակը. Այդ այն է, որ ռուս բանվորները 1905թ. անօրինակ ուժեղ, չտեսնված պահանջ առաջադրելով աշխարհում եղած սոցիալ-դեմոկրատական լավագույն գրականության լավագույն երկերի նկատմամբ և ստանալով այդ երկերի՝ ուրիշ երկրներում չտեսնված քանակությամբ թարգմանություններ ու հրատարակություններ, հենց դրանով, այսպես ասած, արագացրած եղանակով փոխադրեցին մեր պրոլետարական շարժման երիտասարդ հողի վրա հարևան, ավելի առաջավոր երկրի հսկայական փորձը):
Մեզ մոտ Կաուցկին առանձնապես հայտնի է, բացի մարքսիզմի իր հանրամատչելի շարադրանքից, իր բանակռվով օպորտունիստների ու նրանց պարագլուխ Բերնշտայնի դեմ: Բայց համարյա անհայտ է այն փաստը, որը չի կարելի զանց առնել, եթե առաջ խնդիր ենք դնում հետամտել, թե Կաուցկին գլորվելով հասելէ անհավատալիորեն-անարգ գլխակորույս վիճակի և սոցիալ-շովինիզմի պաշտպանության 1914-1915թ.թ. ամենամեծ ճգնաժամի ժամանակ: Այդ հենց այն փաստն է, որ Կաուցկին, օպորտունիզմի ամենաականավոր ներկայացուցիչների դեմ (ՖՐանսիայում՝ Միլերան ու Ժորես, Գերմանիայում՝ Բերնշտայն) ունեցած իր ելույթից առաջ, շատ խոշոր տատանումներ ցուցաբերեց: Մարքսիստական "**Заря**"-ն, որը լույս էր տեսնում 1901-1902թ.թ. Շտուտգարտում և հեղափոխական-պրոլետարական հայացքներ էր պաշտպանում, ստիպված եղավ **բանակռիվ մղել** Կաուցկու դեմ, "կաուչուկային" անվանել այն կիսակատար, խուսափողական, օպորտունիստների

նկատմամբ հաշտեցուցիչ բանաձևը, որն առաջարկել թր նա 1900թ. Փարիզում միջազգային սոցիալիստական կոնգրեսում[1]: Գերմանական գրականության մեջ տպվեցին Կաուցկու նամակները, որոնք երևան հանեցին նրա ունեցած ոչնվազ տատանումները Բերնշտայնի դեմ արշավանքի ելնելուց առաջ:
Սակայն, անհամեմատ ավելի մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ հենց օպորտունիստների դեմ վարած իր բանակռվում, որ հենց նրա հարցադրման ու հարցը քննարկելու մեջ, մենք այժմ, երբ ուսումնասիրում ենք մարքսիզմի դեմ Կաուցկու կատարած նորագույն դավաճանության **պատմությունը**, պարբերաբար թեքում ենք նկատում դեպի օպորտունիզմը՝ հատկապես պետության հարցի ցերաբերյալ:

1 Կաուցկին կոնգրեսում մի բանաձև անցկացրեց, որը թույլատրում եր, թեև վերապահություններով, սոցիալիստների միտքը բուրժուական կառավարության մեջ:
"**Заря**"- ռուսական հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի թեորիական օրգանը, լույս էր տեսնում Լենինի, Պլեխանովի, Ակսելրոդի, Մարտովի, Զասուլիչի և Պոտրեսովի խմբագրությամբ:

Վերցնենք Կաուցկլ առաջին խոշոր երկն օպորտունիզմի դեմ, նրա "Բերնշտայնն ու սոցիալ-դեմոկրատական ծրագիրը" գիրքը: Կաուցկին մանրամսնորեն հերքում է Բերնշտայնին: Բայց ահա ինչ է բնորոշ:
Բերնշտայնը, իր հերոստրատորեն-հռչակավոր "Սոցիալիզմի նախադրյալներում" մարքսիզմը մեղադրում է "**բլանկիզմի**" մեջ (մի մեղադրանք, որն այն օրվանից հազարավոր անգամ կրկնել են օպորտունիստներն ու բուրժուաները Ռուսաստանում հեղափոխական մարքսիզմի ներկայացուցիչների՝ բոլշևիկների դեմ): Այդ առթիվ Բերնշտայն հատկապես կանգ է առնում Մարքսի "Քաղաքացիական պատերզմը Ֆրանսիայում" աշխատության վրա փորձում է - ինչպես տեսանք՝ շատ անհաջող կերպո - Մարքսի հաեցակետև Կոմունայի դասերի նկատմամբ նույնացել Պրուդոնի տեսակետի հետ: Բերնշտայնի հատուկ ուշադրությունը, որն ընդգծել է Մարքսի այն եզրակացությունը, որն ընդգծել է Մարքսը "Կոմունիստական մանիֆեստի" 1872թ. առաջաբանում և որն ասում է. "բանվոր դասակարգը րի կարող պարզապես իր ձեռքն առնել պատրաստի պետական մեքենան և գործի դնել այն՝ իր սեփական նպատակների համար:
Այս ասույթն այնքան է"դուր եկել" Բերնշտայնին, որ նա ոչ պակաս քան երեք անգամ կրկնում է իր գրքում, այն մակնաբանելով ամենաղավաղված, օպորտունիստական իմաստով:
Ինչպես տեսանք, Մարքսն ուզում է ասել, թե բանվոր դասակարգը պետք է **ջարդի, փշրի, պայթեցնի** (**Spregung -** պայթեցում, - էնգելսի գործածած արտահայտությունը) ամբողջ պետական մեքենան: Իսկ Բերնշտայնի մոտ այնպես է դուրս գալիս, որ իբր թե Մարքսն այդ խոսքերով նախազգուշացրել է բանվոր դասակարգին ծայրահեղ **հեղափոխականությունից**՝ իշխանությունը գրավելուժամանակ:
Մարքսի մտքի ավելի կոպիտ ու այլանդակ աղավաղում պատկերացնել անգամ չի կարելի:
Իսկ ի՞նչպես վարվեց կաուցկին բերնշտայնիադայի իր մանրամասն հերքման մեջ:
Նա խուսափեց մարքսիզմի այդ կոտում օպորտունիզմի կատարած աղավաղման ամբողջ խորությունը քննարկելուց: Նա մեջ է բերել Մարքսի "Քաղաքական պատերազմի" առթիվ էնգելի գրած առաջաբանից վերևում հիշված հատվածը, ասելով թե ըստ մարքսի, բանվոր դասակարգը չի կարող **պարզապես** տիրանալ **պատրաստի** պետական մեքենային, բայց առհասարակ **կարող է** նրան տիրանալ, և ուրիշ ոչինչ: Այն մասին, թե Բերնշտայնը Մարքսին այնպիսի մի միտք է վերագրել, որ **ուղղակի հակառակ է** իսկական, թե Մարքսը 1852թ, սկսած առաջ էր մղում

պրոլետարական հեղափոխության կողմից պետական մեքենան "ջարդուփշուր" անելու խնդիրը, այդ մասին Կաուցկոին ոչ մի խոսքով չի ասում:
Հետևանքն այն եղավ, որ մարքսիզմի և օպորտունիզմի միջև եղած ամենաեական տարբերությունը՝ պրոլետարական հեղափոխության խնդիրների վերաբերյալ՝ Կաուցկու մոտ սվաղված դուր եկավ"

"Պրոլետարական դիկտատուրայի պրոբլեմի հարցի լուծումը, - գրում էր Կաուցկին Բերնշտայնի "դեմ", - մենք միանգամայն հանգիստ կերպով կերպով կարող ենք ապագային թողնել" (գերմ. հրատարակություն, էջ 172):

Սա ոչ թե բանակռիվ է Բեռնշտայնի **դեմ**, այլ, ըստ էության, **զիջումն է**, նրա դիրքերի հանձնումն ոպորտունիզմին, որովհետև օպորտունիստներին առայժմ ավելի ոչ մի բան էլ պետք չե, քան "միանգամայն հանգիստ կորպով ապագային թողնել" պրոլետարական հեղափոխության խնդիրների բոլոր արմատական հարցերը:
Մարքսն ու Էնգելսը 1852 թ. մինչև 1891թ., քառասուն տարի շարունակ, պչոլետարիատին ուսուցանում էին, թե նա պետք է պետական մեքենան ջարդուփշուր անի: Իսկ Կաուցկին 1899թ., այն ժամանակ, երբ օպորտունիստներն այդ կետում բոլորովին դավաճանել էին մարքսիզմին, **նենգափոխում է** այն հարցը, թե անհրաժե՞շտ է արդյոք այդ մեքենան ջարդուփշուր անել, ջարդուփշուր անելու կոմրետ ձևերի հարցով և փլութրկություն է որոնում այն "անվիճելի" (և անպտուղ) ֆիլիստերական ճշմարտության հովանու ներքո, թե կոնկրետ ձևե՛րը մենք (առաջուց) սկզբնականորեն իմանալ չենք կարող:
Մարքսի և Կաուցկու միջև անդունդ է ընկած՝ նրանց վերաբերմունքի տեսակետից դեպի այն խնդիրը, թե պրոլետարական կուսակցությունը բանվոր դասակարգին ինչպես պետք է պատրաստի հեղափոխության համար:
Վերցնենք Կաուցկու հետևյալ, ավելի հասուն երկը, որը նույնպես խոշոր չափով օպոտունիզմի սխալների հերքման է նվիրված: Այդ - նրա "Սոցիալական հողափոխություն" բրոշյուրն է: Հեղինակն այստեղ իբրև հատուկ թեմա վերցրել է "պրոլետարական հեղափոխության" ու "պրոլետարական ռեժիմի" հարցը: Հեղինակը չափազանց շատ արժեքավոր բան է տվել, բայց հատկապես հենց պետության հարցը **զանց է առել**: Բրոշյուրում ամենուրեք խոսվում է պետական իշխանությունը նվաճելու մասին, և ուրիշ ոչինչ, այսինքն՝ այնպիսի մի ձևակերպում է ընդունված, որն օպորտունիստներին զիջում է անում, որչափով **ընդունում է** իշխանության նվաճումն **առանց** պետական մեքենան խորտակելու: Հենց այն, ինչ որ Մարքսը 1872թ. "Կոմունիստական մանիֆեստի" ծրագրում "հնացած" է հայտարարել, Կաուցկին 1902թ. **վերակենդանացնում է**:
Բրոշյուրում հատուկ պարագրաֆ է նվիրված "սոցիալական հեղափոխության ձևերին ու զենքին": Այստեղ խոսվում է թե' մասսայական քաղաքական գործադուլի, թե' քաղաքացիական պատերազմի, թե' "արդի խոշոր պետության ուժի" այնպիսի "գորիքների մասին, ինչպիսին են բյուրոկրատիան ու զորաբանակը", բայց այն բանի մասին, ինչոր արդեն սովորեցրել է Կոմունան բանվորներին, - և ոչ մի խոսք: Ակներև է, որ Էնգելսը զուր չեն նախազգուշացնում, առանձնապես գերմանական սոցիալիստներին, "սնահավատ հարգանքից" դեպի պետությունը:
Կաուցկին այդ խնդիրն այնպես է շարադրում. հաղթող պրոլետարիատը "կկենսագործի դեմոկրատական ծրագիրը" , և շարադրում է այդ ծրագրի պարագրաֆները: Այն մասին, թե ինչ նոր բան է տվել 1871թ. բուրժուական դեմոկրատիան պրոլետարական դեմոկրատիայով փոխարինելու հարցի

վերաբերմամբ, և ոչ մի խոսք: Կաուցկին իր գլուխն ազատում է "սոլիդ" հնչող տափակաբանություններով:

"Ինքնըստինքյան ակներև է, որ մենք այժմյան կարգերի ժամանակ տիրապետության չենք հասնի: Հեղափոխությունն ինքը ենթադրում է երկարատև ու խորապես հափշտակող մի պայքար, որը կկարողանա արդեն փոխել մեր այժմյան քաղաքական ու սոցիալական կառուցվածքը":

Անկասկած է, որ այդ "ինքնըստինքյան ակներև է", ինչպես և այն ճշմարըությունը, որ Վոլգան Կասպից ծովն է թափվում: Ափսոս միայն, որ "խորապես հափշտակող" պայքարի վերաբերյալ սնամեջ ու փքուն ֆրազի միջոցով **զանց է առվում** հեղափոխական պրոլետարիատի համար կեմսական նշանակութոյն ունեցող այն հարցը, թե ապա **ինչով է** արտահայտվում **նրա** հեղափոխության "խորությունը" պետության վերաբերյալ, դեմոկրատիայի վերաբերյալ, ի տարբերություն նախկին, ոչ-պրոլետարական հեղափոխություններից:
Զանց առնելով այս հարցը, Կաուցկին **իրապես** այդ ամենաէական կետում զիջում է անում օպորտունիզմին, հայտարարելով նրան **խոսքով** ահեղ պատերազմ, ընդգծելով "հեղափոխության իդեայի" նշանակությունը (շա՞տ բան արժե արդյոք այդ "իդեան", եթե վախենում ես բանվորներին քարոզել խեղափոխության կոնկրետ դասերը), կամ ասելով՝ "ամենից-առաջ - հեղափոխական իդեալիզմ", կամ հայտարարելով, թե անգլիական բանվորներն այժմ "հազիվ թե ավելի շատ բան են, քան մանր բուրժուաները":

"Սոցիալիստական հասարակության մեջ, - գրում է Կաուցկին, - կարող են կողք-կողքի գոյություն ունենալ… ամենատարբեր ձևի ձեռնարկություններ. Բյուրոկրատական (??), տրեդ-յունիոնիստական, կոոպերատիվ, անհատական"… "Գոյություն ունեն, օրինակ, այնպիսի ձեռնարկություններ, որոնք խեն կարող կառավարվել առանց բյուրոկրատական (??) կազմակերպության, - այդպես են երկաթուղիները: Այստեղ դեմոկրատական կազմակերպությունը կարող է այս կերպարանքն ընդունել. բանվորներն ընտրում են պատվիրակներ, որոնք պարլամենտի նման մի բան են կազմում, և այդ պարլամենտը սահմանում է աշխատանքի կանոններն ու հսկում է բյուրոկրատական ապարատի կառավարման վրա: Մյուս ձեռնարկությունները կարելի է հանձնել բանվորական միությունների իրավասությանը, այլ այլ ձեռնարկություններ կարելի է կազմակերպել կոոպերատիվ սկզբունքով" (ռուսերեն թարգմանություն, 1903թ. ժնևի հրատարակություն, էջ 148 ու 155):

Այս դատողությունը սխալ է և մի քայլ է դեպի հետ՝ համեմատած այն պարզաբանումների հետ, որոնք տվել են 70-ական թվականներին Մարքսն ու Էնգելսը՝ Կոմունայի դասերի օրինակով:

Իբր թե անհրաժեշտ "բյուրոկրատական" կազմակերպության տեսակետից, երկաթուղիները վճռականարեն ոչնչով չեն տարբերվում խոշոր մեքենական արդյունաբերության ընդհանարապես բոլոր ձեռնարկություններից, որև է գործարանից, մեծ խանութից, խոշոր կապիտալիստական գյուղատնտեսական ձեռնարկությունից: Բոլոր այդպիսի ձեռնարկություններում տեխնիկան անպայման թելադրում է ամենախիստ կարգապահություն, ամենամեծ ճշտապահություն՝ յուրաքանչյուրի կողմից աշխատանքի իրեն հանձնված բաժինը կատարելիս, նկատի առնելով ամբողջ գործը կանգնեցնելու կամ մեխանիզմը փչացնելու, արդյունքը փչացնելու սպառնալիքը: Այդպիսի բոլոր ձեռնարկություններում բանվորներն, իհարկե, "պատվիրակներ կընտրեն" որոնք **պարլամենտի նման մի բան** կկազմեն:
Բայց հարցի ամբողջ էությունն հենց այն է, որ այդ " պարլամենտի նման բանը" պարլամենտ **չի** լինի բուրժուական-պարլամենտական հիմնարկերի իմաստով:

Խնդրի ամբողջ էությունն էլ հենց այն է, որ այդ "պարլամենտի նման բանը" միմիայն "կանոններ սահմանելով և բյուրոկրատական ապարատի կառավարման վրա հսկելով" **չի** զբաղվելու, ինչպես երևակայում է Կաուցկին, որի միտքը բուրժուական պարլամենտարիզմի շրջանակներից դուրս չի գամլիս: Սոցիալիստական հասարակության մեջ բանվորական պատգամավորներից կազմված "պարլամենտի նման բանը", իհարկե, "կանոններ կսահմանի և կհսկի "ապարատի" կառավարման վրա", **բայց** այդ ապարատն ինքը "բյուրոկրատական" **չի** լինի: Քաղաքական իշխանությունը նվաճելով, բանվորները ջարդուփշուր կանեն հին բյուրոկրատական ապարատը, կխորտակեն այն հիմնովին,, քարը քարի վրա չեն թողնի, կփոխարին են այն նորով՝ կազմված նույն այդ բանվորներից ու ծառայողներից, որոնց բյուրոկրատ դառնալու **դեմ** անմիջապես ձեռք կառնվեն Մարքսի և Էնգելսի կողմից մանրամասնորեն մշակված միջոցները՝ 1) ո'չ միայն ընտրովիությունը, այլև միշտ ու ամեն ժամանակ փոփոխելիությունը. 2) աշխատավարձը ոչ ավելի բանվորի աշխատավարձից. 3) անհապաղ անցումն այն բանին, որ **բոլորը** վերահսկողության ու վերաստուգման ֆունկցիաներ կատարեն, որ **բոլորն** առժամանակ "բյուրոկրատ" դառնան, որպեսզի հենց այդ պատճառով **ոչ ոք** չկարողանա "բյուրոկրատ" դառնալ:
Կաուցկին ամենևին չի մարսել Մարքսի հետևյալ խոսքերը. "Կոմունան ոո'չ թե պարլամենտական, այլ աշխատող կորպորացիա էր, որ միևնույն ժամանակ օրենքներ էր հրատարակում և գործադրում այն":
Կաուցկին ամենևին չի հասկացել այն տարբերությունը, որը կա դեմոկրատիան (ոչ ժողովրդի համար) բյուրոկրատիզմի (ժողովրդի դեմ) հետ միացնող բուրժուական պարլամենտարիզմի և պրոլետարական դեմոկրատիզմի դեմ, որը միանգամից միջոցներ ձեռք կառնի՝ բյուրոկրատիզմն արմատախիլ անելու համար և որն ի վիճակի կլինի այդ միջոցները մինչև վերջը հասցնելու, մինչև բյուրոկրատիզմի լիակատար ոչնչացումը, մինչև ժողովրդի համար լիակատար դեմոկրատիա մտցվելը:
Կաուցկին այստեղ ցուցաբերել է դարձյալ նույն "սնահավատ հարգանքը" դեպի պետությունը, "սնապաշտ հավատը" դեպի բյուրոկրատիզմը:
Անցնենք Կաուցկու՝ օպորտունիստների դեմ գրած վերջին ու լավագույն երկին, նրա "Իշխանության ուղին" բրոշյուրին (կարծեմ՝ ռուսերեն հրատարակված չե, որովհետև նա լույս է տեսել 1909թ., երբ մեզ մոտ բուռն ռեակցիաներ իշխում): Այդ բրոշյուրը մեծ առաջադիմություն է, որչափով նրա մեջ խոսվում էո'չ թե ընդհանրապես հեղափոխական ծրագրի մասին, ինչպես 1899թ. Բերնշտայնի դեմ ուղղված բրոշյուրում, ո'չ թե սոցիալական հեղափոխության խնդիրների մասին՝ անկախ նրա հանդես գալու ժամանակից, ինչպես 1902թ. "Սոցիալական հեղափոխությունը" բրոշյուրում, այլ այն կոնկրետ պայմանների մասին, որոնք ստիպում են մեջ ընդունելու, թե "հեղափոխությունների դարաշրջանը" **վրա է հասնում**:
Հեղինակը պարզորոշ կերպով մատնանշում է դասակարգային հակասությունների սրումն ընդհանրապես ու իմպերիալիզմը, որն այս տեսակետից առանջնապես մեծ նշանակություն ունի: Արևմտյան Եվրոպաի "1789-1871թ.թ. հեղափոխական շրջանից" հետո, 1905թ. համանման մի շրջան է սկվում Արևելքի համար: Համաշխարհային պատերազմը վրա է հասնում սպառնալից արագությամբ: "Պրոլետարիատն այլևս չի կարող արդեն խոսել վաղաժամ հեղափոխության մասին": Հեղափոխական դարաշրջանն սկսվում է":
Այս հայտարարությունները միանգամայն պարզ են: Կաուցկու այս բրոշյուրը պետք է չափանիշ ծառայի՝ համեմատելու համար այն, թե ինչ է **խոստանում լինել** գերմանական սոցիալ-դեմոկրատին իմպերիալիստական պարտերազմից առաջ և

որքան մեծ էր նրա անկումը (Կաուցկունն էլ այդ թվում) պատերազմի բռնկման ժամանակ: "Այժմյան սիտուացիան, - գրում է Կաուցկին քննարկվող բրոշյուրում, - իր հետ այն վտանգն է բերում, որ մեզ (այսինքն՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիային) հեշտ է ավելի չափավոր համարել, քան թե մենք իսկապես ենք": Բանից դուրս եկավ, որ իսկապես գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն անհամեմատ ավելի չափավոր ու օպորտունիստական է, քան թվում էր:
Առավել ևս բնորոշ է, որ Կաուցկին, հեղափոխությունների արդեն սկսված դարաշրջանի մասին այդիսի որոշակի հայտարարություններ անելուց հետո՝ այն գրքույկի մեջ էլ, որը նրա սեփական խոսքերով՝ նվիրված է հատկապես "**քաղաքական** հեղափոխության" հարցի քննարկմանը, դարձյալ բոլորովին զանց է առնում պետության հարցը:
Հարցի այս տնտեսումների, լռության մատնելու, խուսափելու գումարից էլ անխուսափելիորեն ստացվեց այն լիակատար անցումը դեպի օպորտունիզմը, որի մասին մեք այժմ հարկադրված ենք խոսելու:
Գերմանական սոցիալ-դեմոկրատիան, հանձին Կաուցկու, կարծես հայտարարում էր. ես մնում եմ հեղափախական հաեցակետմերի վրա, (1899թ.): Առանձնապես ես ընդունում եմ պրոլետարիատի սոցիալական հեղափոխության անխուսափելիությունը, (1902թ.): Ես թնդունում եմ հեղափոխությունների նոր դարաշրջանի գալուստը (1909թ.): Բայց ես, այնուամենայնիվ, հետ եմ գնում այն ամենի համեմատությամբ, ինչ որ ասել է Մարքսը դեռ 1852թ., քանի որ պատության վերաբերյալ պրոլետարական հեղափոխության ունեցած խմդիրների մասին(1912թ.):
Հենց այսպես շեշտակի էր դրված հարցն այն բանաձևի մեջ, որ մղում էր Կաուցկին Պաննեկուկի դեմ:

3. ԿԱՈՒՑԿՈՒ ԲԱՆԱԿՈՒՎԸ ՊԱՆՆԵԿՈՒԿԻ ԴԵՄ

Պաննեկուկը հանդս եկավ Կաուցկու դեմ, իբրև մեկն այն "ձախ-արմատական" հոսանքի ներկայացուցիչներից, որի շարքերում էին գտնվում Ռոզա Լյուքսեմբուրգը, Կարլ Ռադեկը և ուրիշները և որը, հեղափոխական տակտիկան պաշտպանելով, մի միություն էր կազմում այն համոզմունքով, թե Կաուցկին անցնում է "կենտրոնի" դիրքին, որն անսկզբունք կերպով տատանվում էր մարքսիզմի և օպորտունիզմի միջև: Այս հայացքի ճշտությունը լիովին ապացուցեց պատերազմը, երբ "կենտրոնի" (որը սխալ կերպով մարքսիստական է կոչվում) կամ "կաուցկիականության" հոսանքը լիակատար կերպով իրեն ցույց տվեց իր ամբողջ գարշելի խեղճությամբ:
Պետության հարցը շոշափող իր "Մասսայական գործողություններն ու հեղափոխությունը" ("Neue Zeit" 1912, XXX, 2) հոդվածում Պաննեկուկը Կաուցկու դիրքը բնորոշեց իբրև "պասսիվ ռադիկալիզմի" դիրք, իբրև "անգործունյա կերպով սպասելու թեորիա": "Կաուցկին չի ուզում տեսնելիհեղափոխության պրոցեսը" (էջ 616): Հարցն այդ ձևով դնելով, Պաննեկուկը մոտեցավ մեզ հետաքրքրող թեմային, այն է՝ թե ինչ խնդիրներ ունի պրոլետարական հեղափոխությունը պետության վերաբերյալ:

*"Պրոլետարիատի պայքարը, - գրում է նա, սոսկ մի պայքար չե բուրժուազիայի դեմ պետական իշխանության **համար**, այլ մի պայքար է պետության **դեմ** ... Պրոլետարական հեղափոխության բովանդակությունը պետության ուժը նարկայացնող գործիքների ոչնչացումն ու դուրսմղումն է (բառացի՝ արձակումը - Auslosung) պրոլետարիատի ուժը ներկայացնող գործիքների միջոցով... Պայքարը դատարում է այն ժամանակ միայն, երբ, իբրև նա վերջնական հետևանքը, տեղի է ունենում պետական կազմակերպության լիակատար կործանումը: Մեծամասնության կազմակերպությունն իր*

առավելությունը նրանով է ապացուցում, որ ոչնչացնում է տիրապետող փոքրամասնության կազմակերպությունը" (էջ 548):

Այն ձևակերպումը, որ տվել է իր մտքերին Պաննեկուկը, շատ խոշոր թերություններ ունի: Բայց, այնուամենայնիվ, միտքը պարզ է, և հետաքրքրականն այն է, թե Կաուցկին ինչպես է հերքում այն:

"Մինչև այժմ, - գրում է նա, - սոցիալ-դեմոկրատների ու անարխիստների միջև եղած հակադրությունն այն էր, որ առաջիններն ուզում էին նվաճել պետական իշխանությունը, իսկ վերջինները - խորտակել էին այն: Պաննեկուկը թե' մեկն է ուզում և թե' մյուսը" (էջ 724):

Եթե Պաննեկուկը շարադրանքի թերությունընրա անորոշությունն ու կոնկրետության պակասությունն է (չխոսելով այստեղ նրա հոդվածի մյուս թերությունների մասին, որոնք քննարկվող թեմային չեն վերաբերվում), ապա Կաուցկին վերցրեց հենց Պաննեկուկի նշած գործի **սկզբունքային** էությունը և **արմատական սկզբունքային** հարցում ամբողջովին լքեց մարքսիզմի դիրքը, ամբողջապես անցավ օպորտունիզմի կողմը: Սոցիալ-դեմոկրատների և անարխիստների տարբերությունը նրա մոտ միանգամայն սխալ է բնորոշված, մարքսիզմն աղավաղված ու գռեհկացված է վերջնականապես:
Մարքսիստների և անարխիստների տարբերությունն այն է, որ 1) առաջիններն, իրենց առաջ նպատակ դնելով պետության լիակատար ոչնչացումը, այդ նպատակն իրագործելի են համարում միմիայն դասակարգերի ոչնչացումից հետո սոցիալիստական հողափոխության կողմից, իբրև սոցիալիզմի հաստատման հետևանք, որ դեպի պետության մահացումն է տանում:Երկրորդներն ուզում են պետության լիակատար ոչնչացումն այսորվանից մինչև վաղը, առանց ըմբռնելու այդպիսի ոչնչացման իրագործելիության պայմանները: 2) Մարքսիստներն անհրաժեշտ են համարում, որպեսզի պրոլետարիատը, նվաճելով քաղաքական իշխանությունը, ամբողջովին խորտակի հին պետական մեքենան, փոխարինելով այն զինված բանվորների կազմակերոպությունից բաղկացած նոր մեքենայով, ըստ Կոմունայի տիպի. անարխիստները՝ պաշտպանելով պետական մեքենայի խորտակումը, բոլորովին պարզ կերպով չեն պատկերացնում, թե **ինչպես** է փոխարինելու պրոլետարիատն այն և **ինչպես** պետք է օգտվի նա հեղափոխական իշխանությունից, անարխիստները մինչև անգամ ժխտում են նրա հեղափոխական դիկտատուրան: 3) Մարքսիստները պահանջում են, որ պրոլետարիատը հեղափոխության համար նախապատրաստվի արդի պետությունն օգտագործելու միջոցով. անարխիստներն այդ ժխտում են:
Տվյալ վեճի մեջ հենց Պաննեկուկն է, որ ներկայացնում է մարքսիզմը Կաուցկու դեմ, որովհետև հատկապես Մարքսն էր, որ ուսուցանում էր, թե պրոլետարիատը չի կարող պարզապես նվաճել պետական իշխանությունը՝ հին պետական ապարատը նոր մարդկանց ձեռք անցնելու իմաստով, այլ պետք է խորտակի, ջարդուփշուր անի այդ ապարատը, փոխարինի այն նորով:
Կաուցկին մարքսիզմից հեռանում է դեպի օպորտունիստները, որովհետև նրա մոտ բոլորովին անհետանում է պետական մեքենայի հենց այդ խորտակումը, որ միանգամայն անընդունելի է օպորտունիստներին, և նրանց համար մի սողանցք է մնում՝ "նվաճումն" իբրև պարզապես մեծամասնության ձեռքբերում մեկնաբանելու իմաստով:
Մարքսիզմի վերաբերյալ իր կատարած աղավաղումը քողարկելու համար Կաուցկին վարվում է որպես մի դպիր. նա "ցիտատ " է առաջ մղում հենց Մարքսից իրենից:

1850թ. Մարքսը գրել է "ուժը վճռականորեն պետական իշխանության ձեռքում կենտրոնացնելու" անհրաժեշտության մասին: Եվ Կաուցկին հաղթականորեն հարց է տալիս. չի՞ կամենում արդյոք Պաննեկուկը խորտակել "ցենտրալիզմը":
Այս արդեն պարզապես ֆոկուս է, որ նման է Բերնշտայնի կողմից մարքսիզմի ու պրուդոնիզմի հայեցակետները նույնացնելուն ֆեդերացիայի վերաբերյալ, փոխանակ ցենտրալիզմի:
Կաուցկու բերած "ցիտատը" ոչ մի առնչություն չունի հարցի հետ: Ցենտրալիզմը հնարավոր է թե' հին և թե' նոր պետական մեքեանյի նկատմամբ: Եթե բանվորները հոժարակամ միավորեն իրենց զինված ուժերը, այդ կլինի ցենտրալիզմ, բայց այդ հիմնված կլինի պետական ցենտրալիստական ապարատի՝ մշտական բանակի, ոստիկանության, բյուրոկրատիայի "լիակատար խորտակման" վրա: Կաուցկիմ միանգամայն սրիկայաբար է վարվում, շրջանցելով Մարքսի ու Էնգելսի շատ լավ հայտնի դատողությունները Կոմունայի մասին և դուրս քաշելով այնպիսի մի ցիտատ, որ հարցին չի վերաբերում:

*..."Գուցե Պաննեկուկն ուզում է ոչնչացնել չինովնիկների պետական ֆունկցիաները, - շարունակում է Կաուցկին: - Բայց մենք առանց չինովնիկների չենք կառավարվում թե' կուսակցական և թե' արհեստակցական կազմակերպության մեջ, էլ չխոսելով պետական վարչության մասին: Մեր ծրագիրը պահանջում է ո'չ պետական չինովնիկների ոչնչացումը, այլ նրանց ընտրությունը ժողովրդի կողմից"... "Մեզ մոտ այժմ խոսքն այն մասին չե, թե ինչ կերպարանք կընդունի վարչության ապարատն "ապագա պետության" մեջ, այլ այն մասին է, թե մեր քաղաքական պայքարն արդյոք ոչնչացնու՞մ է (բառացի՝ արձակում է, auflost) պետական իշխանությունը, **նախքան մենք նվաճած կլինենք այն** (ընգծումը Կաուցկունն է): Ո՞ր նախարարությունն է, որ կարելի կլինի իր չինովնիկների հետ միասին ոչնչացնել": Թվարկվում են լուսավորության, արդարադատության, ֆինանսների, ռազմական նախարարությունները: "Ո՛չ, այժմյան նախարարություններից ոչ մեկնել չի վերացվի կառավարության դեմ մղած մեր քաղաքական պայքարով ... Թյուրիմաժություններից խուսափելու համար ես կրկնում եմ. խոսքն այն մասին չե, թե հաղթական սոցիլ-դեմոկրատիան ինչ ձև կտա "ապագայի պետությանը", այլ այն մասին է, թե մեր օպոզիցիան ինչպես է փոփոխում այժմյան պետությունը" (էջ 725):*

Այս մի բացահայտ քաշքշոց է: Պաննեկուկը հատկապես **հեղափոխության** հարց է դրել: Այդ բանն էլ պարզ կերպով ասված է թե' նրա հոդվածի վերնագրում, թե' մեջ բերված հոտվածներում: Ցատկելով դեպի "օպոզիցիայի" հարցը, Կուցկին հենց հեղափոխական տեսակետը նենգափոխում է օպորտունիստական տեսակետի հետ: Նրա մոտ այսպես է դուրս գալիս. հիմա օպոզիցիա, իսկ իշխանությունը նվաճելուց **հետո**՝ առանձին կխոսենք: **Հեղափոխությունը չքանու՛մ է**: Այս հենց այն է, ինչ որ ուզում էին օպորտունիստները:
Խոսքը ո'չ թե օպոզիցիայի և քաղաքական պայքարի մասին է ւնդհանրապես, այլ հատկապես **հեղափոխության** մասին: Հեղափոխության թությունն այն է, որ պրոլետարիատը **խորտակում է** "վարչության ապարատն" ու **ամբողջ** պետակ ապարատը, փոխարինելով այն զինված բանվորներից բաղկացած նոր ապարատով: Կաուցկին "սնահավատ հարգանք ե" ցուցաբերում "նախարարությունների" նկատմամբ, բայց ինչու՞ նրանք չեն կարող փոխարինվել, ասենք, մասնագետների հանձնաժողովներով՝ լիակատար ու ամենազոր իշխանություն ունեցող Բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներին կից:
Գործի էությունն ամենևին այն չե, թե կմնա՞ն արդյոք "նախարարությունները", կլինե՞ն արդյոք "մասնագետների հանձնաժողովներ", թե որև է այլ հիմնարկներ. այդ ամենևին կարևոր չե: Գործի էությունն այն է, թե պահպանվու՞մ է արդյոք հին պետական մեքենան (որ հազարավոր թելորով կապված է հնամոլությամբ ու անշարժությամբ), թե՞ այդ մեքենան **խորտակվում է** ու **նորով** փոխարինվում:

Հեղափոխությունն ա'յն չպետք է լինի, որ նոր դասակարգը հրամայի, կառավարի **հին** պետական մեքենայի օգնությամբ, այլ այն, որ նա **ջարդուփշուր անի** այդ մեքենան և հրամայի, կառավարի **նոր** մեքենայի օգնությամբ, - մարքսիզմի այս **հիմնական** միտքը Կաուցկին սվաղում է, ակմ բոլորովին չի հասկացել այն:
Նրա հարցը չինովնիկների մասին ակնբախ կերպով ցույց է տալիս, որ նա չի հասկացել Կոմունայի դասերն ու Մարքսի ուսմունքը: "Մենք առանց չինովնիկների չենք կառավարվում թե' կուսակցական և թե' արհեստակցական կազմակերպության մեջ"…
Մենք առանց չինովնիկերի չենք կառավարվում **կապիտալիզմի ժամանակ, բուրժուազիայի տիրապետության** շրջանում: Պրոլետարիատը ճնշված է, աշխատավոր մասսաները ստրկացված են կապիտալիզմի կողմից: Կապիտալիզմի ժամանակ դեմոկրատիզմը սեղմված է, ճնշված, խուզված, այլանդակված՝ մասսաների վարձու ստրկության, կարիքի ու աղքատության ամբողջ իրադրությամբ: Այդ պատճառով, և միմիայն այդ պատճառով ել, մեր քաղաքական ու արհեստակցական կազմակերպություններում պաշտոնատար անձերն այլասերվում են (կամ ավելի ճիշտ ասված՝ այլասերվելու տենդենց ունեն) կապիտալիզմի իրադրության շնորհիվ և հսկում են ցուցաբերում բյուրոկրատ, այսինքն՝ մասսաներից կտրված, մասսաներից **վեր** կանգնած, արտոնյալ անձեր դառնալու:
Սրա մեջ է բյուրոկրատիզմի **էությունը**, և քանի դեռ սեփականազրկված չեն կապիտալիստները, քանի դեռ չի տապալված բուրժուազիան, անխուսափելի է **մինչև անգամ** պրոլետարական պաշտոնատար անձերի որոշ "բյուրոկրատացումը":
Կաուցկու մոտ այսպես է դուրս գալիս. քանի որ մնում են ընտրովի պաշտոնատար անձերը, նշանակում է՝ սոցիալիզմի ժամանակ կմնա ն նաև չինովնիկները, կմնա բյուրոկրատիան: Հատկապես հենց այս է, որ սխալ է: Հենց Կոմունայի օրինակով Մարքսը ցույց է տվել, որ սոցիալիզմի ժամանակ պաշտոնատար անձերը դադարում են "բյուրոկրատներ", "չինովնիկներ" լինելուց, դադարում են, **որչափով**, բացի բացի ընտրականությունից, մտցվում է **նաև** նրանց փոփոխելիությունը ուզած ժամանակ, **այլև** աշխատավարձը հավասարեցվում է միջին բանվորական մակարդակին, **ապա նաև** պարլամենտական հիմնարկները "աշխատող, այսինքն՝ օրենքներ հրատարակող և այդ օրենքներն իրականացնող" հիմնարկներով են փոխարինվում:
Ըստ էության, Կաուցկին ամբողջ փաստարկումըՊաննեկուկի դեմ, և առանձնապես Կաուցկու այն հոյակապ ապացույցը, թե մենք առանց չինովնիկների չենք կառավարվում թե' արհեստակցական, թե' կուսակցական կազմակերպություններում, ցույց է տալիս, որ Կաուցկին կրկնում է ընդհանրապես Բերնշտայնի հին "պատչառաբանությունները" մարքսիզմի դեմ: Բերնշտայնն իր "Սոցիալիզմի նախադրյալները" ռենեգատական գրքում մարտնչում է "պրիմիտիվ" դեմակրատիայի գաղափարների դեմ, այն բանի դեմ, ինչ որ նա "դոկտրինյորական դեմոկրատիզմ" է անվանում, այն է՝ իմպերատիվ մանդատները, վարձատրություն չստացող պաշտոնատար անձերը, անզոր կենտրանական ներկայացուցչությունը և այլն: Իբրև այս "պրիմիտիվ" դեմոկրատիզմի սնանկության ապացույց, Բերնշտայնը մատնանշում է անգլիակական տրեդ-յունիոնների փորձը, ըստ Վերբ ամուսինների մեկնաբանության: Իբր թե իրենց յոթանասնամյա զարգացման ընթացքում տրեդ-յունիոնները, որոնք զարգանում էին իբր թե "լիակատար ազատության մեջ" (գերմ. հրատ. էջ 137), այն այն համոզմունքին եկան, որ հենց հենց պրիմիտիվ դեմոկրատիզմն անպետք է, և այն փոխարինեցին բյուրոկրատիզմի հետ միացած սովորական պարլամենտարիզմով:

Իրոք, տրեդ-յունիոնները զարգացել են ո'չ թե "լիակատար ազատության", **այլ լիակատար կապիտալիստական ստրկության մեջ**, որի ժամանակ, հասկանալի է, "չեր կարելի գլուխ պրծացնել" առանց մի շարք զիջումներ անելու տիրող չարիքին, բռնությանը, անարդարությանը, չքավորներին, "բարձրագույն" վարչության գործերից հերացնելուն: Սոցիալիզմի ժամանակ "պրիմիտիվ" դեմոկրատիայից շատ բան անխուսափելիորեն կվերակենդանանա, որովհետև քաղաքակրդված հասարակությունների պատմության մեջ առաջին անգամ բնակչության **մասսան** կբարձրանա այն աստիճանին, որ նա կկարողանա **ինքնուրույնորեն** մասնակցել ո'չ քվեարկություններին ու ընտրություններին, **այլ ամենորյա կառավարմանը**: Սոցիալիզմի ժամանակ **բոլորը** կկառավարեն հերթով և արագորեն կընտելանան այն բանին, որ ոչ ոք չկառավարի:

Մարքսն իր հանչարեղ քննադատական-անալիտիկ մտքով Կոմունայի գործնական միջոցառումների մեջ տեսավ այն **բեկումը**, որից վախենում են և որը չեն ուզում ընդունել օպորտուիստները երկչոտությունից, չկարողանալով անդարձ կերպով կապերը խզել բուրժուքզիայից, և վորը չեն ուզում տեսնել անարխիստները կա'մ իրենց հապճեպության, կա'մ առհասարակ մասսայական սոցիալական փոխարկումների պայմանները չընմբռնելու պատճառով: "Մինչև իսկ մտածել էլ հարկավոր չե հին պետական մեքենան խորտակելու մասին. ի՞նպես կարող ենք մենք առանց նախարարությունների և առանց չինովնիկների կառավարվել" - դատում է մինչ ուղնուծուծը ֆիլիստերությամբ տոգորված օպորտունիստը, որն, ըստ էության, ո'չ միայն հավատ չունի հեղափոխության վրա, հեղափոխության ստեղծագործության վրա, այլ մահացու կերպով վախենում է նրանից (ինչպես մեր մենշևիկներն ու էսերներն են վախենում նրանից):

"Պետք է մտածել **միմիայն** հին պետական մեքենան խորտակելու մասին, կարիք չկա թափանցելու նախկին պրոլետարական հեղափոխությունների **կոնկրետ** դասերի խորքը և վերլուծելու, թե **ինչով** և **ինչպես** պետք է փոխարինել խորտակելին" - դատում է անարխիստը (իհարկե, անարխիստներից լավագույնը, և որը պ .պ.. Կրոպոտկինների ու Ընկ. հետ քարշ է գալիս բուրժուազիայի հետևից). այդ պատճառով էլ՝ անարխիսի մոտ ևս ստացվում է **հուսահատության** տակտիկա, և ոչ թե անխնա-համարձակ և միևնույն ժամանակ մասսաների շարժման գործնական պայմանները հաշվի առնող և կոնկրետ խնդիրների վրա հեղափոխական աշխատանք թափող տակտիկա:

Մարքսը մեզ ուսուցանում է խուսափել այդ երկու սխալներից էլ, ուսուցանում է անձնվեր համարձակություն ամբողջ հին պետական մեքենան խորտակելու գործում և միևնույն ժամանակ սովորեցնում է հարցը կոնկրետ կերպով դնել. Կոմունան մի քանի շաբաթվա ընթացքում կարողացավ **նոր** պրոլետարական, պետական մեքենայի կառուցում **սկսել**, ահա այս կերպով կիրառելով մատնանշված միջոցներն՝ ավելի լայն դեմոկրատիզմ ձեռք բերելու և բյուրոկրատիզմն արմատախիլ անելու համար: Հեղափոխական համարձակություն սովորենք կոմունարներից, նրանց գործնական միջոցառումների մեջ տեսնենք գործնականորեն կենսական ու անմիջապես հնարավոր միջոցների **մատնանշումը** և այն ժամանակ, **այն ուղիով ընթանալով**, մենք կհասնենք մյուրոկրատիզմի կատարյալ որտակմանը:

Այդպիդի խորտակման հնարավորությունն ապահովված է նրանով, որը, **մասսաներին** վեր կբարձրացնի նոր կյանքի համար, բնակչության **մեծամասնությանն այնպիսի** պայմանների մեջ կդնի, որ **բոլորն** անխտիր հնարավորություն կունենան "պետական ֆունկցիաներ" կատարելու, իսկ այդ կտանի դեպի առհասարակ ամեն մի պետության **լիակատար մասնակցումը**:

*… "Մասսայական գործադուլի խնդիրը, - շարունակում է Կաուցկին, - երբեք չի կարող այն լինել, որ **խորտակի** պետական իշխանությունը, այլ միմիայն այն, որ կառավարությանը հարկադրի զիջում անել որևե որոշ հարցում, ակմ պրոլետարիատին թշնամի կառավարությունը փոխարինվի նրան ընդառաջող (entgegenkommende) կառավարությամբ … Բայց երբեք ու ոչ մի պայմանով այդ" (այսինքն՝ պրոլետարիատի հաղթանակը թշնամի կառավարության դեմ) "չի կարող դեպի պետական իշխանության **խորտակում** տանել, այլ կտանի միմիայն դեպի ուժերի հարաբերության որոշ տողաշարժում (Verschiebung) **պետական իշխանության ներսում** …Եվ այդ դեպքում՝ մեր քաղաքական պայքարի նպատակը մնում է, ինչպես մինչև այժմ էր, պետական իշխանության նվաճումը՝ պարլամենտում մեծամասնություն ձեռք բերելու միջոցով և պարլամենտը կառավարության գլխին տեր դարձնելով" (էջ 726, 727, 732):*

Այս արդեն ամենազուտ և ամենագռեհիկ օպորտունիզմ է - գործով՝ հրաժարումն հեղափոխությունից, խոսքով՝ նրա ճանաչում: Կաուցկու միտքը "պրոլետարիատին ընդառաջող կառավորությունից" հեռու չի գնում, որը մի քայլ է դեպի հետ, դեպի ֆիլիստերություն, 1847թ. համեմատությամբ, երբ "Կոմունիստական մանիֆեստը" հռչակեց "պրոլետարիատի կազմակերպությունն իբրև տիրող դասակարգ":
Կաուցկին ստիպված կլինի իր սրտի ուզած "միությունն" իրականացնել Շայդեմանների, Պլեխանովների, Վանդերվելդների հետ, որոնք բոլորն էլ համաձայն պայքար մղելու այնպիսի մի կառավաչության համար, "ընդառաջում է պրոլետարիատին":
Իսկ մենք, պառակտվելով, կանջատվենք սոցիալիզմի այդ դավաճաններից և պայքար կմղենք ամբողջ հին պետական մեքենայի խորտակման համար, այնպես, որ զինված պրոլետարիատն ինքը **կառավարություն լինի**: Սրանք "երկու խոշոր տարբերություններն են":
Կաուցկին ստիպված կլիներ Լեգիններին ու Դավիդների, Պլեխանովների, Պոտրեսովների, Ծերեթելիների, Չերնովների հաճելի ընկերության մեջ լինել, որոնք միանգամայն համաձայն են պայքար մղելու հանուն "ուժի հարաբերությունների տեղաշարժման՝ պետական իշխանության ներսում", հանուն "պարլամենտում մեծամասնություն ձեռք բերելու և պարլամենտը կառավարության գլխին ամենազոր դարձնելու", - ազնվագույն մի նպատակ, որի մեջ ամեն ինչ ընդունելի է օպորտունիստների համար, ամեն ինչ մնում է բուրժուական պարլամենտական հանրապետության շրջանակներում:
Իսկ մենք, պառակտվելով կանջատվենք օպորտունիստներից և ամբողջ գիտակից պրոլետարիատը մեզ հատ կլինի ո՛չ թե "ուժի հարաբերությունների տեղաշարժման" համար մղվող, այլ **բուրժուազիային տապալելու** համար, բուրժուական պարլամենտարիզմը **խորտակելու** համար մղվող պայքարում, Կոմունայի տիպի դեմոկրատական հանրապետություն կամ Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդների հանրապետություն հաստատելու համար, պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի համար մղվող պայքարում:

* * *

Միջազգային սոցիալիզմի մեջ Կաուցկուց ավելի աջ են կանգնած այնպիսի հոսանքներ, ինչպիսին "Սոցիալիստական Ամսագիրն" է Գերմանիայում (Լեգին, Դավիդ, Կոլբ և շատ ուրիշներ, սկանդինավցի Ստաունինգն ու Բրանտինգն էլ ներառյալ), ժորեսիստներն ու Վանդերվելդեն՝ Ֆրանսիայում ու Բելգիայում, Տուրատին, Տրեվեսը և իտալական կուսակցության աջ թևի այլ ներկայացուցիչները, ֆաբիականներն ու "անկախականները" ("անկախ բանվորական կուսակցությունը",

որն իրականության մեջ միշտ կախման մեջ է եղել լիբերալներից)՝ Անգլիայում և այլն: Այս բոլոր պարոնները, վիթխարի, շատ հաճախ գերիշխող դեր կատարելով պարլամենտական աշխատանքի և կուսակցական հրապարակախոսության մեջ, ուղղակի ժխտում են պրոլետարիատի դիկտատուրան, անսքող օպորտունիզմ են առաջ մղում: Այդ պարոնների համար՝պրոլետարիատի "դիկտատուրան" "հակասու՛մ է" դեմոկրատիային: Նրանք, ըստ էության, մանր-բուրժուական դեմոկրատներից լրջորեն ոչնչով չեն տարբերվում:
Նկատի առնելով այս հանգամանքը, մենք իրավունք ունենք եզրակացնելու, որ Երկրոդ Իրնեռնացիոնալն՝ ի դեմս իր պաշտանական ներկայացուցիչների ճնշող մեծամասնության՝ լիովին գլորվել է դեպի օպորտունիզմը: Կոմունայի փորձը ո'չ միայն մոռացված է, այլը աղավաղված: Բանվորական մասսաներին բավական չե, որ չեր ներշնչում, թե մոտենում է այն ժամանակը, երբ նրանք պետք է հանդես գան ու խորտակեն հին պետական մեքենան, թոխարինելով այն նորով, և այդպիսով իրենց քաղաքական տիրապետությունը փոխարկեն հասարակության սոցիալիստական վերակառուցման բազիսի, մասսաներին հակառակն էր ներշնչվում, և "իշխանության նվաճումն" այնպես էր պատկերացվում, որ օպորտունիզմի համար հազարավոր սողանքներ էին մնում:
Պրոլետարական հեղափոխության դեպի պետությունն ունեցած հարաբերության հարցն աղավաղելն ու լռության տալը չեր կարող վիթխարի դեր խկատարել այն ժամանակ, երբ պետությունները, իմպերիալիստական մրցման հետևանքով ուժեղացած ռազմական ապարատի շնորհիվ, ռազմական հրեշներ են դարձել, որոնք միլիոնավոր մարդիկ են բնաջնջում նրա համար, որպեսզի լուծեն այն վեճը, թե ով պիտի տիրի աշխարին - Անգլիա՞ն, թե Գերմանիան, ա՞յս, թե այն ֆինանսական կապիտալը"

VII. ԳԼՈՒԽ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1905 ԵՎ 1907Թ.Թ. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ

Այս գլխի վերնագրում մատնանշված թեման այնքան անընդգրկելիորեն մեծ է, որ նրա մասին կարելի է և պետք է հատորներ գրել: Ներկա բրոշյուրում ստիպված ենք սահմանափակվել, հասկանալի է, փորձին այն ամենագլխավոր դասերով միայն, որոնք անմիջականորեն վերաբերվում են հեղափոխության մեջ պետական իշխանության նկատմամբ պրոլետարիատի ունեցած խնդիրներին: (Այստեղ ծեռագիրն ընդհատվում է):

ԱՌԱԳԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐՁԱԲԱՆԸ

Այս բրոշյուրը գրված է 1917թ. օգոստոսին ու սեպտեմբերին: Ես արդեն կազմել էի հետևյալ, յոթերորդ, գլխի պլանը - "1905 ու 1917թ.թ. ռուսական հեղափոխությունների փորձը": Բայց, բացի վերնագրից, ես չկարողացա այդ գլխից ոչ մի տող գրել "խանգարեց" քաղաքական ճգնաժամը, 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության նախորյակը: Այդպիսի "խանգարման" համար կարելի է միմիայն ուրախանալ: Բայց բրոշյուր երկրոդ թողարկումը ("1905 ու 1917թ.թ. ռուսական հեղափոխությունների փորձին" նվիրված), թերևս, հարկ լինի երկար հետաձգելու. ավելի հաճելի ու օգտակար է "հեղափոխության փորձը" կատարել, քան թե նրա մասին գրել:

Պետրոգրադ
30 նոյեմբեր 1917թ.